

#4316

Uptunde gustetip
19/2p.

891.99-192

U-91

0 9p

14316

ԿԿՆ.
7. ԱՄ. Տ. Բ.

Am. 1361

ՀՐԵՏԱՐԵՎՈՒԹԻՒՆ Ս. ՄԵԼԻՔ-ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ


ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ

Տպագրում ենք յայտնի հեղինակների
թողյալությունները

ՀԻՆԳԵՐՈՐԳ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ձեզ կատեմ մանկաիր սիրուն, նազիկիք,
Որոնց է բնական հայոց աշխարհիկ.
Մի ուրանայր զերկիրդ և ազգդ սիրուն,
Ծառն արժատով է ծառ, տունն հիմամբ է տուն.
Հ. Ղեկունց Այլիան

ԳԻՆՆ Է 50 ԿՈՂԵԿ



Թ Ի Յ Լ Ի Ս

Երևանայարժ տպարան «ԷՊՕԽԱ» Մուգեյսկի պրեկտուրակ № 8
1912

Արմ.

3-4772a

3-4772a 2011-05

ՀՐԱՏԵՐԱՌՈՒԹԻՒՆ Ս. ՄԵԼԻՔ-ՍՈՂՈՄՈՆՆԵՆԻ

891.99-192

Ա-91

ԱՐԵԱՆ ԶԱՅՆԵՐ

Տպագրում ենք յայտնի հեղինակների
թոյլտուլթեամբ

ՀԻՆԳԵՐՈՐԳ ՏՊԵՐՈՒԹԻՒՆ

Ձեզ կասեմ մանկտիք սիրուն, նազելիք,
Որոնց է բնական հայոց աշխարհիկ.
Մի ուրանայր զերկիրդ և ազգդ սիրուն,
Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն:
Հ. Ահսնդ Ալիջան



Պատ. № 21192

Թ Ի Յ Լ Ի Ս

Էլեքտրաչարժ տպարան «ԷՊՕԽԱ» Մուգեյսկի պերեվուրուկ № 8
1912

13/6

26.02.2013 3

72.785

ԵՐԿՈՒ ԽՕՍԳ

Իզուր չէ աւուում, թէ իւրաքանչիւր երկրի ժողովրդական երգը ընթացիկ կեանքի հայելին է:

Այդ երգի ելեէջների մէջ անդրադառնում են ժողովրդի վիշտըն ու թախիծը, դառնութիւնն ու երջանկութիւնը:


Ինչպիսի պատկեր ներկայացնում է ընթացիկ կեանքը, նոյնպիսի շեշտեր էլ հնչեցնում է ժողովրդական երգը:

Այդպէս է ամեն տեղ, այդպէս էլ մեզ մեզանում--հայերիս մէջ: Վերջին տարիներում հայկական կեանքը՝ թէ թիւրքիայում և թէ Պարսկաստանում անվերջ արիւնհեղութեան ու աւերածութեան առարկայ է դարձել, ուստի և հայի ժողովրդական վերջին երգերն էլ շարունակ «արիւնոտ» ձայներ» են հնչեցնում:

Ահա այդ երգերն է, որ հաւաքագրելով «Արեան Ձայներ» խորագրի տակ, առաջարկում ենք ընթերցողներին:

Առաջարկելով «Արեան Ձայների» հինգերորդ տպագրութիւնը, փոփոխւած և ընդարձակւած, աւելացնելով հայ հեղինակների ընտիր բանաստեղծութիւնները, իրենց թուլաութեամբ, վերջում կցելով մի շարք ժողովրդական երգեր ու խաղեր, յոյսով ենք, որ այս անգամին բաւարարութիւն տւած կլինենք հայ հասարակութեան պահանջներին:

Ս. Մելիք-Սողոմոնեան



(1498-63) 1429-2003



ՋԻՆԻՈՐԻ ՎԵՐՋԻՆ ՈՒԽՏԸ

Թող չար օրհասը թափէ իմ գլխին,
Ապագութ մահւան բոլոր սև չարիք
Բայց քո սուրբ անուն մինչև վերջին շունչ,
Ես չեմ մոռանայ սիրուն հայրենիք:

Թող օրհասական բոլոր պատուհաս,
Թափէ խղճիս վրայ իմ անգութ օրհաս,
Բայց մինչև ես կեանքիս մաշած հետին կծիկ
Քեզ չեմ մոռանայ անգին հայրենիք:

Թող գոմորական արիւնոտ մոխիր
Թափէ իմ գլխիս միշտ ճակատագիր,
Բայց մինչև չը մտնեմ մահու դամբարան,
Քեզ չեմ մոռանայ անգին հայրենիք:

Թող թշնամութեան դժնեայ ծառի ճիւղ,
Տայ ինձ իւր փշոտ թունալից պտուղ,
Բայց մինչև կեանքիս վերջնական վայրկեան,
Պիտի բեզ յիշեմ, սիրուն հայրենիք:

Թող կոյր ամբոխը անձրևէ գլխիս,
Քար, հուր, երկաթ և շատ չարիքներ,
Բայց մինչև իմ բերնից չելանէ հոգիս,
Քեզ չեմ մոռանալ անտէր հայրենիք:

Թող ինձ հալածեն Վասակի թոռն եր,
Ասելով՝ ազէտ, յիմար և անբան,
Այդ ես կը տանեմ մինչ կեանքիս վախճան,
Բայց քեզ չեմ մոռանայ, երբէք հայրենիք:

Թող իմ դիակս, մանրած մաս առ մաս.
Տանեն սզալով դէպ մահու դարպաս,
Յայնժամ կաշկանդւած քնով մշտական,
Գուցէ քէզ մոռանամ, ո՛վ իմ հայրենիք:

Բայց ո՛չ երկնքում լուսոյ որդոց հետ,
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ,
Պիտի միշտ գոչեմ, կրկնեմ յաւիտեան,
«Սիրուն հայրենիք, սիրուն հայրենիք»:



Խ Ա Ճ Ի Կ—Մ Ա Ճ Ի Կ Ա Չ Ե Ր.

Քու սիրովդ միշտ վառվում եմ անուշիկ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիւր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիւր,
Դէմքդ սիրուն և խօսքերդ քնքուշիկ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիւր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիւր:

Պատկեր ունիս, սիրուն, իսկ գեղածիծաղ.
Աչքերդ ու ունքերդ՝ է անշամանդաղ:
Սիրականս, ես քեզի եմ միշտ մատաղ,
Խաժիկ— մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիւր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիւր:

Սիրոյդ համար ես մի բողբոջ կանանչ եմ,
Սոխակի պէս, վարդ նագելի կը կանչեմ,
Դէմքդ տեսած ժամանակին կամաչեմ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանք կէս արիւր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիւր:

Մի կորցնիր այդ քու թանգ ժամանակդ.
Քանի որ փոքր է, սիրուն հասակդ:
Մի թօթափիր աչքերիցդ վտակդ,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիւր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիւր:

Ոսկէթել մագերուդ, սանտր է հարկաւոր:
Ականջիդ գնդերը, մանր է հարկաւոր,
Ֆիզանն-եմ, սիրունիս ծանր է հարկաւոր,
Խաժիկ—մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիւր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիւր:



ՎԱԹԱՆԻ ԵՐԳԸ

Ա՛խ, վաթան վաթան, քո հողին մատաղ
Քո ծխին մատաղ քո շրին մատաղ
Է՛ս փառքն ունէիր, էս պատին առաջ,
Որ հիմիկ աւերուել, մնացել ես անջան:

Ե՛րբ միտք կանէի՝ թէ էս հողերը՝
էս դաշտն ու սարերն, էս սուրբ ձորերը,

էնպէս մեծութիւնս, էնպէս լաւ օրեր
Քաշել են, մնացել, ա՛խ հիմիկ անտէր:

Ո՞ւր ձեր տէրերը, թագաւորները,
Ձեր պահողները, ձեր իշխանները,
Ինչի՞ մեզ թողին իրանց որբերը
Ու ձեռ վերցրին, թողին էս քարերը:

Հող ունենք՝ խլած, կեանք ունենք՝ մեռած,
Ա՛խ, ջրի, կրակի մենք գերի դառած,
Ոչ երկինք տեսնի մեր սուգն ու լաց՝
Ոչ երկիր պատուի, մեզ տանի ցած:

Ա՛խ, ես էն ձեռին կեանքս մատաղ կանեմ.
էն կոխած հողին երեսս կը քրսեմ.
Ապրեմ՝ իմ արիւնս նրան մատաղ կանեմ.
Մեռնեմ՝ հողիցն էլ միշտ նրան կօրհնեմ:



ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ՈՂԲԸ

Վայ էն ազգին, որ աշխարհումս անտէր է,
Վայ էն երկրին, որ թշնամու գերի է,
Վայ էն խալխին, որ իր կեանքն ու աշխարհը
Չի պահպանիլ ու թշնամու ձեռ կը տայ:

Հաւատ, օրէնք, տուն, ընտանիք, սրբութիւն,
Հողի ու քարի կրքսուեն, կըփչանան,

Թէ մէկ ազգ իրա սանձը թշնամուն
Իրա կամքով կտայ, նա կմնայ անվաթան:

Դատած արջը փնչացնելով դուրս պրծաւ,
Սարեր, ձորեր սասանում են ձէնիցը,
Անմեղ գառը, ուր ես կանգնել դու անցաւ,
Քեզ կըբըբըրի, փախիլը նրա ձեռիցը:

Ա՛խ արեգակ, բարի հրեշտակ, մէր մտի,
Ի՞նչ ես կանգնել, սիրուն աչքերդ բաց արել.
Հայի համար որ դուրս չըգաս դու խկի,
Դարդ չի անիլ, վաղ է նրա ասաղը թեքուել:

Գահ, ապարանք, գէնք, զարգարանք փչացան.
Թագաւորներ, իշխան, քաղաք հող մտան,
էլ ո՞վ նրանց որբուկներին խեղճ կըգայ,
Մեր թշնամու սրտում միթէ Աստուած կայ:



ՀՊԱՐՏ ՏԻԿԻՆԸ

Աչքերդ խփեցիր, բերանդ բացիր,
Կոյրի պէս գնացիր անգունտը ընկար.
Սխալմունքիդ վերայ ողբալով լացիր,
Թուխ շորեր հագնելով սե ու սուգ մտար:

Ուզեցիր որ դառնաս սիգածեմ կագաւ,
Դուրս եկար այլակերպ գորշ տգեղ ազուաւ.

Ցաւիդ վերայ աւելացաւ մի նոր ցաւ,
Կոյր ու խուլ, խեղանդամ մի աղջիկ ծնար:

Անգուժ Մորփէսը վրադ քուն թափեց,
Ննջած ժամանակդ հասակդ չափեց.
Գաճաճ կիներ մրցութեան մէջ էեզ չափեց,
Բոլոր աշխարհի մէջ խայտառակ եղար:

Արամազդը պատժեց քեզ, անգուժ տիկին:
Օգային ամբողջ տապալեց գետին.
Ագահութեան լիճը մտար պլխովին.
Փոխան մաքրուելու կեղտոտ զուրս եկար:



ԵՐԿՈՒՍԸ ՄԷԿԻՆ

Երբ որ լեզուն լուռ է, ոտք ու ձեռք կապած.
Հա բանդ, հա գերեզման—երկուսը մէկ են.
Այն որ մարդուն վերջը մահ կայ անկասկած,
Հա բարձ, հա կախաղան՝ երկուսը մէկ են:

Անվախներուն բիւր ու հազար երանի
Մարդ նրանք են, մարդկութեան մէջ պիտանի.
Կենդանին էլ անշուշտ պիտի մեռանի
Հա մեռած, հա կենդան—երկուսը մէկ են:

Խելացի էակ է, մարդը բնական,
Ասուած պարգևել է լեզու և բերան.

Բայց երբ ազատ, խօսքի չըկայ հրաման,
Բանաւոր թէ անբան—երկուսը մէկ են:

Եթէ բնենք, մէկ է կեանք, իրանի,
Ամբար է հոգսերու և բուն է ցաւի.
Որովհետև Զիւանն էլ կըպառաւի,
Հա պառաւ, հա Զիւան—երկուսը մէկ են:



ԲԱՐՈՎ ԵԿԱՐ ՍԻՐՈՒՆ ԿՌՈՒՆԿ

Բարով եկար սիրուն կռունկ,
Ինչ լուր բերիք հայրենիքէս.
Սօսիք ինձ հետ ազատօրէն,
Կեանքս կնւիրեմ ես քես:

Տեսար իմ հայրենեաց տունը.
Գեղեցիկ, զարգարւած գոյնը.
Նորա սիրուն տանջում եմ,
Աչքերիցս կտրաւ քունը:

Ազատ տեսար մեր լեռները,
Հաղորդեցի՞ր գու իմ սէրը.
Այն լեռներու պաշտպանողը,
Արծւի կորիւն նետերը:

Տեսար մեր փոքրիկ բուրաստան
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան.
Եղեմական դրախտաւայր,
Նա կոչուում է մայր Հայաստան:

—Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միջազ ի՛նչ կսպասես ի զուր,
Արի առնեմ իմ թիերուն.
Գնանք այնտեղ ուրախացուր.



ՁԻՆԻՈՐԻ ԵՐԳԸ

Երբ ես մեծացայ տղամարդ դարձայ,
Ու սիրաս զնգաց սիրոյ վառվառմամբ.
Ուղեցայ սիրել աղջիկ սեւաչեայ,
Բայց դ՛ու գիրկս ընկար, անգին հրացան:

Ու բոց-կարօտով գրկեցի ես քեզ,
Սխմեցի կծքիս, անգին հրացան:
Իմ սրտիս տէրը հարսնացուս դարձար,
Աննենց ընկերս, իմ սէր հրացան:

Երբ թշնամու դէմ կուլի եմ վազում,
Դու կրծքիս սեղմած, անբաժան հետս ես,
Դու ես միշտ սրտիս մըրրիկը յայտնում,
Քեզնով եմ փնջում, որոտում վրէժ:

Եւ երբ գազազած գլուխս զնեմ
Գուլի դաշտումը, կուզեմ, որ փորեն
Քեզնով ինձ մի փոս, կուլի ընկերներ.
Քեզ հետս թաղեն, իմ հարս, իմ ընկեր:

Ղ Օ Շ Մ Ա Յ.

Ձուր անցուցի իմ երջանիկ օրերս,
Այսօր, այսօր,—վաղը ասելով,
Դատարկ մնաց իմ զեռնափոր հորերս,
Երկարածամ կնոջ խաղը լսելով:

Մարդս պէտք չէ իրա անձից զանգատէ,
Երեսը առ Ասուած պէտք է հաստատէ,
Առանց ձանձրանալու պէտք է աշխատէ,
Երեսը չոր քարին, հողին քսելով:

Ո՛վ եկաւ աշխարհը, վերջը դո՛հ գնաց:
Դառնաշխատ Փիզանն եմ փորս միշտ քաղցած,
Երգիչներն էլ ինձի նման առանց հաց,
Մեռան,—«Ասուած որորմած է» ասելով:



ՀԻՃՐԱՆ ՔԵԱՐԱՄԻ

Բացելու ես իբրև ծաղիկ սիրունի,
Տոյց տուր ինձի անշամանդաղ պատկերդ,
Ամենայն շնորհքով լի ես տիրունի,
Տոյց տուր ինձի գեղածիժաղ պատկերս:

Կատարեալ վարմունքով, սէր ու յոյս ունիս,
Անուշահոտ, գեղեցկադէմ բոյս ունիս,
Ամեն կողմից քաղցը խրախոյս ունիս,
Բաց մէկ տեսնեմ լուսաշաղախ պատկերդ:

Ֆիզանի երգիչս այսքանը կասէ,
 Խնամք արա ինձի, խօսքերս լսէ.
 Խորհրդիս հեռեիր, եկ, ինձ հետ խօսէ,
 Որ չը լինի շատերին խաղ պատկերդ:



ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵՐԳ

Պատրաստէք ձեր շրթ-շրթս, կարկաչաները.
 Տղայք պատրաստ կեցիք Ծաղկազարդ եկաւ,
 Ուսերուդ գցեցէք ձեր կապարճները,
 Չեղի ձրի հատիկ տուց մարդն եկաւ:

Եկէք շնորհաւորենք Փրկչի ամիսը.
 Խնդրենք, որ շուտով գայ առատ յունիսը,
 Արթնացիր խեղճ սոխակ մերձ է մայիսը,
 Քո սիրահար—կարմրակոկոն վարդն եկաւ:

Այս եկողն է մեզի բազում լոյս տուող,
 Սուրբ Հոգի պարգևիչ, աչքի լոյս տուող,
 Մեզի է Աբարիչ, խրախոյս տուող,
 Ֆիզանու ջանքերի միակ զարդն եկաւ:



**

Ունիմ Ասուած, բայց չունիմ Տէր,
 Տարածներդ քեզ չի մնայ,
 Կստանաս փոխարէնը անխախտ՝
 Տարածներդ քեզ չի մնայ:

Շուտ կստանաս դու փոխարէն.
 Բռնած գործդ է անօրէն.
 Տուրը կտաս վարէն վերէն
 Գողացածներդ քեզ չի մնայ:

Մէկ տուն ունէի քանդեցիր,
 Խեղճ գաւաղներուս զրկեցիր,
 Դուս ու պատուհան ջարդեցիր՝
 Տարածներդ քեզ չի մնայ:

Շատ չըտեսց գործդ երկար,
 Տանջեցիր ինձ դու էլ տանջւար,
 Շուտով փոխարէն ստացար,
 Դուփածներդ քեզ չի մնայ:

Ձի կշտանայ դողացողը,
 Պատիժ կստանայ տանողը,
 Մեծի անէժը առնողը,
 Թալանածներդ քեզ չի մնայ:

Չըկարողացար շուտով մարսել,
 Տարածդ քեզ է վնասել,

Սկսեցիր շուտով փոխել,
Տարածներդ քեզ չի մնայ:

Մարեցիր իմ վառ աշտանակը,
Սրտիս զարկիր սուր նիզակը,
Մէջս գցեցիր վառ կրակը,
Տարածներդ քեզ չի մնայ:

Մինչև անգամ հին հագուստներս,
Գտար, տարար պահուստներս,
Մարեցիր իմ վառ յոյսերս՝
Տարածներդ քեզ չի մնայ:



ՔԱՋԻ ԵՐԳԵՐԻՅ

Ես գնում եմ հեռու երկիր
Իմ սիրելի թանկագին
Բաժանում եմ ես քեզ
Գուցէ կրկին չը դարձնի:

Կանչում է բախում
Ոստոքներս անտառ
Ցանկանում եմ քեզ տայտ
Սիրոյ հանդիպում վերջինս:

Վեր կաց սիրուն քո հետքով
Մէջքիս կապի սուր, նիզակ

Պատերազմի փող հնչեցին
Պիտի մտնեմ զէնքի տակ:

Մնաս բարով իմ սիրելի
Իմ թանկագին բարեկամ
Միշտ աղաչէ Աստուծանից
Որ կենդանի յետ դառնամ:

Հայրենիքի սիրոյ համար
Աշուղ երգիչ եմ դառել
Գերեզմանս մէկ բարի տակ
Դուք պիտ ծածկէք սև հողով:



**

Կենաց փշոտ ասպարէզը,
Աւաղ, աւաղ ինձ դիպաւ.
Ջուրս լեղի, կերած հացս—
Ո՛հ, կերած հացս թոյն դարձաւ:

Հեռու երկինք, արև լուսին,
Աւաղ, աւաղ, տխրամած,
Ես կը հեծիմ բանտիս խորը
Ո՛հ, բանտիս խորէն շղթայած:

Ձը կայ հայր իմ, չը կայ մայր իմ,
Աւաղ, աւաղ, քոյր, եղբայր.
Եւ ոչ միայն մխիթարիչ,
Ո՛հ, մխիթարիչ բարեկամ:

1429-2002



Անմեղական լուր զրկելով
 Աւաղ, աւաղ, Սուլթանին
 Մոլեկրօն ու զայրաշէղ
 Ո՛հ, վայրաշէղ իսլամին:

Վերաքննեց, չար նկատեց
 Աւաղ, աւաղ իմ մասին,
 Վնասակար զիս նկատեց
 Ոհ, զիս նկատեց իւր ազգին:

Ահա կիջնեմ սև գերեզման,
 Աւաղ, աւաղ գրկեմ հող,
 Իմ անունս, յիշատակս
 Ոհ, յիշատակս մնայ թող:



ԶԻՆԻԱԾ, ՊԱՏԻՍՏԻԱԾ...

Զինւած, պատրաստւած, Զէյթունի քաջեր,
 Սուրբ ազատութեան վկայք անվեհեր.
 Վրէժով լցւած առիւծի նման
 Քաջ-քաջ կուռում են թուրքի դէմ դաժան:

Կեցցէք, դուք միշտ Զէյթունցիք,
 Որ պիտ փրկէք հայրենիք,
 Գուր հայաստանի պարծանք,
 Մեր կեանքիցն էլ ձեզ կը տանք:

Մանուկն օրօրոցում, հանդիստ չէր պառկած,
 Խնդրում էր մօրից՝ «բազուկներս բաց»...

«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,
 Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք
 Որ պիտ փրկէք... և այլն (կրկնել):

Ի՞նչ ես կաշկանդել, քանդիր ինձ, մայրիկ,
 Ես կուզեմ կուել թուրքի դէմ ճարպիկ,
 Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն.
 Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն:

Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք և այլն:



Ե Ր Գ Ս Ո Խ Ա Կ Ի

Սիրուն սոխակս զիտեմ արթուն ես,
 Կարօտ եմ ձայնիդ, որտեղ երգում ես,
 Աւաղ որտեղ երգում ես (կրկն.)

Մշտապէս կասեմ, սիրունիկ վարդ ես,
 Էլ չեմ սպասիր ուր է իմ զարգս.
 Աւաղ, ուր է իմ զարգը (կրկն.):

Ինձ մոռացար, ինձ ուրացար
 Ո՞րտեղ սլացար.
 Թողիր ինձի անտէր, անճար,
 Ո՞րտեղ հեռացար:

Վարդի թուփերին ազուան է կանգնել,
 Որ նրա տեղը ապառաժ քարն է, (կրկն.):
 Ինքը ծերացած, ձագերը փոքրիկ,
 Յետոյ կը մեծանան մայրերին կօգնեն, (կրկն.):

Աւանդ ձրտեղ ես, արի, աւանդ քո սիրտն է բարի.
 Աւանդ ընկերներ ճարի:
 Ինձ մոռացար, ինձ ուրացար (կրկն.):

Սոխակ խօսքերս սրտումդ գրէ,
 Քո հայրենիքիդ կեանքդ նւիրէ,
 Աւանդ կեանքդ նւիրէ, (կրկն.):

Այն պարտէզը, որ քեզ կը պատկանի
 Թողեր ես անտէր, քանի մէկ տարի,
 Աւանդ, մի սգար պարտէզ, աւանդ քեզ կուգայ հանդէս
 Աւանդ չես մնար այդպէս,
 Ինձ մոռացար և այլն

Սոխակը դարձաւ դէպի հայրենիք,
 Տեսաւ իւր տեղ նստած վայրենիք,
 Աւանդ նստած վայրենիք,
 Ջարդեց, փշրեց ազուաւի բոյնը
 Վերանորոգեց հայրենի բոյնը (կրկն.):

Վարդը հասաւ նպատակին.
 Իւր կարօտն առաւ.
 Ազուան ընկաւ նախանձը սրտին.
 Շուտափոյթ մեռաւ:



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Իմ պաշտելի քաղցր հայրենիք.
 Հողիդ, ջրիդ ես մատաղ,
 Քանի տարի քեզնից հեռի.
 Կարօտակէզ քաշեմ ախ...

Հալով աչքերս կուրացաւ,
 Զրկեցայ քո քաղցր տեսքից.
 Հեզուս բերնուժս չորացաւ.
 Քո սուրբ անունն երգելիս:

Ա՛խ, տօնելի սուրբ հայրենիք.
 Երկիր բարի պողաբեր.
 Անուն քաղցրիկ և սիրելի.
 Դրախտ, եղեմ ցանկալի:

Քեզնից հեռի չունիմ հանգիստ,
 Սուգ է ինձի ամեն ժամ.
 Քունը աչքիցս հեռացել է.
 Ինձ չարչարում յարաժամ:

Ինչ կարող է ինձ ուրախացնել,
 Երբ քեզանից կամ հեռի.
 Թէև փառքեր հարստութիւն.
 Բայց ինձ համար ատելի:

Ա՛խ, լինելու է ով իմ Աստուած
 Բարի, քաղցրիկ և զթած.
 Յուսով եմ որ կը հասցնես,
 Ինձ տեսութեան հայրենեաց:

Կեանքիս թելը կտրելու մօտ
Համուսմ է իմ վերջին ժամ,
Հայրենեացս մեռնել կարօտ,
Կաղաչեմ մի տար Աստուած:

Երբ լցւի իմ բաղձանաց վերջ,
Տեսնեմ իմ սէր հայրենեաց,
Տեսնեմ ծնողք ու սիրելիք,
Ապա հոգիս հանգիստ տամ:



* *

Սաւար եմ ես ինչպէս զիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Չեմ սիրի բեզ, չեմ սիրի քեզ,
Ես սիրում եմ իմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անբախտ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ.
Եղբայրագուրկ անթիւ քոյրեր,
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրէք ինձ մի սիրէք.
Ես շատ ու շատ փոխւել եմ.
Առ թաշկինակդ աչերդ սրբէ,
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մնաս բարե իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախօյս,
Այդ արտասուները ես պիտ թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ:



* *

Արթուն մտքիս հանդարտ քայլեր,
Չէ պէտք կապանք ձեռքերիս,
Կուզեմ ման գալ Հայոց լեռներ.
Այնտեղ գտնել իմ պապիս:

Բազուկներիս կապ ու կապանք
Չէ պէտք սրտիս դեռահաս,
Կուզեմ դրկել մի արձագանք.
Հայ զաւակաց մանկահաս:

Իմ մարմնիս բանտ ու շղթայ,
Այլ է քաղցր Հայրենիք
Մակայն Մասիս թող պարծենայ
Մէկ օր կանէ հարսանիք:

Հայ քաջերին թող չը մոռանայ
Այդ օրն ուրախութեան տօն
Չմոռանայ Սէգն Սիփանայ
Երբ ես հասնիմ ի Տարսոն:



* *

Գարահիսար լերան կրճքին՝ նա էլ ընկաւ վիրաւոր,
Կուրճքը պատուած, սիրտը խոցուած՝ չար թշնամու գնդակովէ

Ժայռոտ լերան լերկ կատարից վար սլացիր, սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արա...

Խոցուած սրտից մուգ արիւնը կաթիլ-կաթիլ կը ծորայ,
Ա՛խ, ջիւանի կեանքն է հոսում ցաւոտ կրճքի լայն վէրքից...

Ժայռոտ լերան լերկ կատարից վար սլացիր, սև արծիւ,
Թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արա...



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵԿԱԾ ՂԻՆԼՈՐ

Հայաստանից եկած զինուոր,
Սիրական, կեանքիս հատոր,
Քեզ կսպասէի օրէց օր՝
Շողշողուն զէնքերիդ մատաղ:

Արկածալից կեանք խորհրդով,
Լեռներ ես անցել ըշտապով,
Արեգակն է այրել տապով,
Սևորակ պատկերիդ մատաղ,

Կըզաս գոհերի երկրէն,
Պատմէ Մոկացի նախերէն,
Խօսիր Գիսակի խօսքերէն,
Սրտաշարժ խօսքերիդ մատաղ:

Զով Սասունի հովէն կուզաս,
Վանայ ծփան ծովէն կուզաս,
Անդրանիկի քովէն կուզաս
Սար-ձոր ընկած գլխիդ մատաղ...

Սերոբ փաշի գերեզման,
Տեսել ես, իմ սիրական,
Տեսել ես ողջ Հայաստան,
Էգուցայ ճամբիդ մատաղ:

Հայաստանից եկած զինուոր,
Սիրական կեանքիս հատոր
Քեզ կսպասէի օրէց օր,
Ապագայ յոյսերուդ մատաղ:



* *

Դեռ ես չեմ տեսած քեզի պէս աննման,
Լոյս շքեղ պատկեր, ով սիրուն սիրուն,
Գովեստդ կարգամ աշխարհ իմանայ,
Կոյս սիրոյ ընկեր, ով սիրուն սիրուն:

Քաջ համբաւովդ շատ մարդ զարմանան,
Միշտ զօր ու գիշեր, ով սիրուն, սիրուն,
Անձիդ կտակը շատերն ընթեռնուն,
Թշնամեաց սուսեր, ով սիրուն սիրուն:

Վատ թշնամիքդ դռնիցդ հեռանան,
Ով անձնուէր, ով սիրուն սիրուն,

Քեզ Աստուած չտայ յանկարծ պատուհաս.
Փորձանաց նուէր, ով սիրուն սիրուն:

Քնքոյշ վարմունքդ լուսեղէն հանդերձ,
Տերև վարդիթեր ով սիրուն սիրուն,
Ասպարէզ ճակտիդ յօնքերիդ համեմատ,
Աչքերդ լապտեր, ով սիրուն սիրուն:

Մանր ականջներիդ գինտեր թանգագին,
Ակտունանք սրբեր, ով սիրուն սիրուն,
Պատկերդ տեսնողը եղաւ խելազար.
Պատանի կամ ծեր, ով սիրուն սիրուն:

Խղճուկ Ֆիզահուն քեզ հետ ընդունէ,
Աստիճանաւեր, ով սիրուն սիրուն:




* *

էն արծիւ էր. թռնւ, գնաց,
Մեր վրայով, մեր միջով,
Ա՛խ, էն մեր սիրտ, մեր ազիզն էր,
Գնաց սարով, սար դարդով,

Ինոր դարդը, ա՛խ, մեր դարդն էր.
Ու մեր սրտիցն էն գնաց,
Ինոր դարդը խեղճի դարդն էր,
Խեղճի սրտիցն էն գնաց,
Ո՞ւր գնացիր. ո՞ւր գնացիր.
Մենակ-մենակ գնացիր:

Հեռու տեղեր, արնոտ տեղեր,
Ոխը սրտիդ, հոգի ջան,
Ընկար մենակ ու անընկեր՝
Դուման դաշտեր, Աւօ ջան:

Ընկերներդ, ա՛խ, քեզ մոռցան,
Կեանքի ճամբով գնացին,
Քո սուրբ սրտի սէրը մոռցան
Գերեզմանդ կորուցին:



ԹՈՂ ՓՅԷ ԲԱՄԻՆ

Թող փչէ քամին պաղ-պաղ երեսիս
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Որքան որ կուզէ թող փչէ Հիւսիս՝
Յուսով եմ վաղ-ուշ գարունը պիտ գայ:

Թուխալը թող պատէ երկինքը պայծառ
Թանձր մառախուղ երկիր թող փակէ
Տարերք աշխարհիս խառնւին իրար,
Յուսով եմ վաղ-ուշ արև պիտ ծագէ:

Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն հային տառապանք.
Միայն չը հատնէ խղճուկի յոյսը...



*
* *

Ահա, մայրիկ, ես գնում եմ
Ազգիս համար զոհեցելու,
Քաջ ընկերներով միասին՝
Անգուլթ քրդին ջարդելու,

Երբ որ մայր իմ, Սասուն եկար,
Ինձի սրտեղ փնտռեցիր.
Գերեզմանիս վերայ գալով
Ի՛նչ ասեցիր ու լացիր:

Գերեզմանիս հողի վերայ
Ի՛նչ անուշիկ հոտ կուգայ,
Այսուհետև անուշ մայրիկ,
Ինձմեն քեզ օգուտ չկայ:

Գերեզմանիս հողի վերայ,
Ցանկ ծաղիկ, իմ մայրիկ:
Ցանկ ծաղիկ, թափէ արցունք,
Երիտասարդ եմ մայրիկ:

Գերեզմանիս քարի վերայ
Խոշոր տառով գրեցէք—
Այսուհետև մանուկներ,
Ազատութեան զոհեցէք»:



Վ Ա Ր Դ Կ Օ Շ Ի Կ. (Թարգ. տաճկերէնից)

(Տղայի եւ աղջկայ ընթանից)

Աղջիկ—Մեր տան մէջ քնող տղայ,
Կարմիր խնձոր ծախող տղայ,
Վարդ կօշիկս գտնող տղայ,
Տղայ, դրկէ վարդ կօշիկս,
Վարդ կօշիկս, վարդ կօշիկս, 1.
Վարդից գեղեցիկ մաշիկս: 2.

Տղայ—Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կօշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ...

Աղջիկ—Լաւ օրս եղաւ ար ու վախ,
Կորցուցի կօշիկս, աւանդ,
Հայի տղայ հոգուդ մատաղ,
Տղայ, դրկէ վարդ կօշիկս...

Տղայ—Որ մօտս չէ, ուրտեղից ճարեմ,
Ըլլի, խօսքդ կը կատարեմ,
Ազնիւ աղջիկ, հօգիդ սիրեմ,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ...

Աղջիկ—Ես մի անթառամ ծաղիկ եմ,
Անուշ երգող աղունիկ եմ,

1—2 Ամենայն տանց վերջում կրկնել յիշեալ տողերը:

Պատկերովս գեղեցիկ եմ,
Տղայ, զրկէ վարդ կօշիկս...

Տղայ—Ես գիտեմ դու անդրանիկ ես,
Սիրովդ ինձի մօտիկ ես,
Հասակովդ էլ փոքրիկ ես.
Իմ մօտս չէ, վարդ կօշիկդ...

Աղջիկ—Մի մնար ինձի պարտական,
Աղջիկ եմ տաս չորս տարեկան,
Ես կը լինեմ, քեզի սիրական,
Տղայ, զրկէ վարդ կօշիկս...

Տղայ—Ինչո՞ւ մնամ քեզ պարտական,
Կամիս տամ հազար դահեկան,
Եթէ կլինես ինձ սիրական,
Ճարելու եմ վարդ կօշիկդ...

Աղջիկ—Մնացել եմ սուգ-սեւաւոր,
Գործքովս չեղայ փառաւոր,
Խեղճ Ֆիզանն է մեզի քաւոր.
Տղայ, զրկէ վարդ կօշիկս...

Տղայ—Ինչի՞ կը մնաս սգաւոր,
Գործքովդ եղիր թագաւոր,
Եթէ Ֆիզանն է մեզ քաւոր,
Իմ մօտս է վարդ կօշիկդ...



ՎԵՐՋԻՆ ԲԱՐԵՒ

Մնաս բարե, իմ հայրենիք,
Իմ մանկութեան օրօրան:
Քեզ պաշտել եմ իմ վառ սրտով,
Եւ կպաշտեմ յաւիտեան:

Թէպէտ բախտը, խլու՞մ է ինձ,
Նւիրական քո գրկից,
Բայց երբէք նա չի շնջիլ,
Սուրբ անուշըդ իմ սրտից:

Ուր էլ լինիմ, ուր էլ ապրիմ,
Թէկուզ օտար երկրի մէջ,
Սիրել եմ քեզ և այդ սէրն,
Կմնայ անխախտ և անշէջ:

Մնաս բարեւ իմ հայրենիք,
Ինձ կեանք արե պարգևող,
Մնաս բարե... վերջին անգամ,
Բաժանու՞մ եմ վերջնական:



ԱՆԽՂՃՕՐԷՆ

Անխղճօրէն մեզ դատու՞մ են,
Խօսիք Հայաստանի լեռներ.
Եղբայրս ինձնից դատու՞մ են,
Խօսիք Հայաստանի լեռներ:

Իմ խնդրիս չեն դնում ականջ,
 Ասում են սուտ է քո պահանջ,
 Այս հողերը սևն էր առաջ,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

Գուցէ յիշէք դուք այն օրը,
 Որ պապըս լծած արօրը,
 Ցանում էր ձեր դաշտ ու ձորը,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

Գիտեն իմ պապիս անունը,
 Բայց ստում են ուղղութիւնը,
 Գոնէ նրանց պատմութիւնը,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

Հիմա ձեզ մնաց ամեն բան,
 Պէտք է դուք գայք վկայութեան,
 Ո՛ւմնով էք կոչում Հայաստան,
 Խօսիք Հայաստանի լեռներ:

Պայծառիս վիրաւորել են
 Հողերուն հաւասարեր են,
 Մեր կայք օտարք տիրեր են,
 Խօսիք Հայաստանի լեռներ:



ՍԻՐՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿ

Բարով ես եկել ծիծեռնակ սիրուն,
 Ինչ լուր ես բերել պանդուխտ հայերուն,
 Գիտես որ մենք միշտ աչքներին յառած.
 Քեզ ենք սպասում ամեն մի գարուն:

Գլուխս ծռած խեղճ ու հեզ,
 Աղաչում եմ անա քեզ,
 Եկել ես հայրենիքից,
 Ինչ աւետիս բերիր մեզ,
 Եկել ես հիւր ասա մէկ լուր,
 Մի սպասէ գուր,
 Լեզուդդ սուր աւետիս տուր,
 Մեզ ուրախացուր:

Ինչ լուր ես բերել սիրուն ծիծեռնակ,
 Գու հայրենիքից աստ եկած թռչնակ,
 Ասա ինչպէս է իմ հայրենի տունը,
 Խօսիր ինձ հետ սզատ համարձակ,

Ասա մի բան իմանամ,
 Որ քեզանից գոհանամ,
 Ուրախացուր սիրտըս իմ,
 Տարակուսած չմնամ,
 Դու սլացար սարէ ի սար,
 Մինչ այստեղ հասար
 Դու ինձ համար բարով եկար,
 Ասա մի խապար:



Ք Ա Ջ Ի Ե Ր Գ Ը

Ա՛խ, իմ հայրենիք անուշ հայրենիք,
 Կարօտ եմ քեզի անթառամ ծաղիկ.
 Կարօտդ կը քաշեմ ամեն ժամանակ,
 Քո անուշ հոտին կարօտ եմ փափազ,
 Կարօտդ կը քաշեմ ամեն ժամանակ,
 Չեմ մոռանայ քեզ, մի ժամ մի բոլիչ:

Պիտի աշխատենք, որ քեզ նորոգենք.
 Քո մէջն եզած թուրքերին վանենք,
 Պէտք է չունենայ տաճիկն իրաւունք,
 Թափել աչքերիցդ արիւն-արտասունք.
 Այլ մեր վրէժ նրանցից առնենք,
 Մեզ տւած տանջանքն կրկին յետ դարձնենք:

Ունենք մեզի զէնք, ունենք հրացան.
 Կազմենք մեր խորհուրդ, առնենք մենք սահման:
 Քանի մենք մնանք այլոց լծի տակ.
 Քանի մենք ման գանք առանցի գտակ
 Պէտք է սովորենք քանգել Տաճկաստան՝
 Որ լսողն աօէ, «կեցցէ Հայաստան»...



* * *

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
 Թնդացնում ես երկինք-գետինք տենչավառ.
 Սուրբ անունդ պիտի յիշւի դարէդար,
 Հսկայ լեռինք քեզ ապաստան Անդրանիկ:

Քիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,
 Օձերի պէս պիտ սողան իրենց բունը.
 Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
 Չը ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն,
 Քնքոյճ ձեռամբ քո ճակատը պսակեն.
 Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն.
 Կեցցես յաւէտ դու անաստան Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար,
 Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդատար,
 Անյաղթ մնաս դու քաջ կուր սիրահար,
 Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ:



Ծ Ե Ր Ո Ւ Կ Ս Ի Ի Ն Ե Ց Ի

Դաժան ցաւերի լեռը շալակած՝
 Հնա քարը եմ գալիս այս ձիւն-ձմեռը.
 Ո՞րտեղ է վերջ աման ջան Աստուած.
 Ո՞րտեղ ցած դնեմ տանջանքիս բեռը...

Հնա քաջ եմ գալիս... բայց ո՞ւր եմ գնում.
 Ո՞ւր է սահման ծով չարչարանքի.
 Բէմուրւակ շալաւորն օրտեղ է բացւում
 Կապն ու կրշկուռը մըճըճուած կեանքի...

Կին ու զաւակներ՝ ահլոր անօթի՝
 Ընկած են հիւանդ մի գեանափորում.

Սոփն էլ չի տեսնում ցաւը անբախտի.
Սրտիս բար կապած իր հունձն է անում...

Հնա բարը եմ գալիս ընկած սար ու ձոր,
Ինչպէս մի խարխուլ նաւ հողմահալած.
Արիւն է կաթում սըրտիցս ծոր ծոր,
Ո՞ւր գնամ կորչեմ, հէյ զուլում Աստուած...



Ո Ր Ս Կ Ա Ն Ա Խ Պ Է Ր

— Որսկան ախպէր, սարէն կուգաս. սարի մարալ կը փնտուես
Ասա եարաբ, դու չը տեսնիր, իմ մարալիս, իմ բալիս:


Դարդի ձեռքից սարերն ընկաւ, իմ մարալս իմ բալէս,
Գլուխն առաւ քարերն ընկաւ, իմ մարալս, իմ բալէս:

— Տեսայ քոյրիկ, նախշուն բալիդ, կարմիր պսակ էր կապել
Սիրած եարի համբոյրի տեղ, սրտին վարդեր են բուսել:

— Որսկան ախպէր, ասա եարաբ, ո՞վ է հարսը իմ բալիս
Ո՞վ է գրկում չոր գլուխը, իմ մարալիս, իմ բալիս:

— Տեսայ քոյրիկ, սիրուն բալիդ, քարն է դրել բարձի տեղ
Անուշ քնով տաք գնդակն էր՝ կրծքին սեղմել եարի տեղ:

Սարի մարմանդ հոփն էր շփում, վառ ձակատին մարալիդ,
Ծաղիկներն են վրան սգում, քո մարալիդ, քո բալիդ...



* *

Հայաստանի անկախ Սասուն
Քո ժայռերում կան շատ քաջեր,
Հռչակած է նրանց անուն,
Հաւատարիմ քո պաշտպաններ:

Անգրանիկը կուում է (կրկնել)
Թշնամուն կոտորում է,
Չէ ուզում ըստրկութիւն.
Մինչ գոնի ազատութիւն:

Հայդուկները դէնք վեր առած
Հայրենիքի սիրով վառւած,
Աչքերում կրակ ցւած,
Հոգով, սրտով են միշտ կանգնած:

Քո անառիկ դիրքերը
Պաշտպանում են հայդուկները.
Նոցա հերոս Անգրանիկը
Պաշտպանում է քո դիրքերը:

Հայրենիքի տէր ու պաշտպան,
Ունիս փամփուշտ ու հրացան,
Մօտ է հայի ազատութիւն,
Հայաստանի անկախ Սասուն:



ՁԷՅԹՈՒՆԻ ԵՐԳԸ

Խնդացէք վեհ բնութեան զարդեր,
Նախշուն քնքուշ ծաղիկներ,
Ուրախացէք, սիրուն վարդեր,
Պայծառ երկնից աստղիկներ:

Անառիկ Ձէյթուն
Իւր անյաղթ քաջերով,
Վրէժ է գոչում
Անվախ առիւծներով:

Երկինքը մեր գլխին պարզւեց
Լացը փոխւեց հրճուանքի
Ստրուկ հայը արդէն ցնցուեց,
Չեռքը մեկնեց նա զէնքի,
Անառիկ և այլն:

Խորհրդաւոր քնից զարթնեց,
Հայ պատանին քրտնաթոր,
Աչքը բացեց և ինչ տեսաւ
Նա՛ քաջերին զինաւոր:
Անառիկ և այլ:

Ամեն մի հայ պարտք համարեց,
Իւր սուրբ դատը պաշտպանել,
Ազատ, անկախ, ու անվեհեր,
Թշնամեաց դէմ մարտնչել:
Անառիկ և այլ:



ՍՍՍՈՒՆԱՅ ՍՍՐ

Առանց վախի առանց անի,
Քաջերի բուն Սասնայ սար,
Քեզնից հրդեհ կը պատահի,
Կրակի բուն Սասնայ սար:

Եկաւ ողջ Արաբըստանը,
Որ նւաճէ Հայաստանը,
Քեզ չըյաղթեց Չինգիզ խանը,
Կեցար կանգուն Սասնայ սար:

Հայաստանը երբ կանաչեց,
Թշնամին տեսաւ ամաչեց,
Եւրոպան քեզ լաւ ճանաչեց,
Առար անուն Սասնայ սար:

Քիւրդի, թուրքի զահիճները,
Թունաւորող կտրիճները,
Սարի միջի կտրիճները
Դու և Ձէյթուն, Սասնայ սար:

Վերցաւ խաւար գիշերը,
Փայլեց երկնային լապտերը:
Կապասեն Տաճկա-հայերը,
Քեզնից գարուն, Սասնայ սար:



ՁԻՆԻՈՐԻ ԵՐԳԸ

Թռիր իմ նժոյգ, սլացիր շուտով,
 Տար ինձ ցանկալի կուրի փոթորիկ,
 Կուր մէջ միայն ես արեան գնով,
 Կը փրկեմ իմ խեղճ ստրուկ հայրենիք:

Տար ինձ այն աշխարհ — անցեալում հզօր,
 Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
 Ուր աւանդ դժբաղդ եղբայրս այսօր,
 Իւր կեանքն է ողբում՝ օտարին գերի...

Անցան շատ դարեր, անցան շատ տարիք,
 Ազգս շատ ապրեց քաղցրիկ յոյսերով.
 Բայց նորան երբէք չժպտաց երկինք,
 Չըտեսաւ նա կեանք խաղաղ, անվրդով:

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բաղբին,
 Երկնք սպասեց նա կեանքի գարնան,
 Բայց նորա առջև ոտիս թշնամին,
 Իւր սրով փորեց կեանքի գերեզման:

Դէհ, թռիր, նժոյգ, սլացիր շուտով,
 Տար ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
 Մարտումն է զինուոր իւր արեան գնով,
 Ազգին պարգևում յաղթութեան դափնիք:



* * *


Դանակը սակորին հասաւ
 էլի ասում են համբերէ,
 Ցաւիս վերայ նոր ցաւ դրաւ՝
 էլի ասում են համբերէ:

Թշնամին կանգնած է իմ մօտին,
 Ձեռքը դրած է սրին,
 Կուզէ հանել իմ հոգին՝
 էլի ասում են համբերէ:

Ընձի ասում են համբերէ,
 Տանտէրը բան կը բերէ.
 Նայում եմ կայքս կաւերէ,
 էլի ասում են համբերէ:

Կանգնած է թշնամին դաժան.
 Կատաղել է ինչպէս դազան,
 էլ ինչ մնաց համբերութեան,
 էլի ասում են համբերէ:

Սիրաթուս ասում են թէ կաց,
 Կասեն մի անէ լաց ու թաց,
 Կաշեմ ետըր բան չը մնաց
 էլի ասում են համբերէ:



* * *

Աւազակները օրը ցերեկով,
 Տուն ու տեղս թալանեցին,
 Լօմերով քլունկներով.
 Դուռ պատուհանս կոտրատեցին:

Աւարառութեան շարան
 Ցոյց տուցին սրի բերան.
 Հազար ու վեց հարիւր տարան.
 Սրբութիւնս աւերեցին:

Գանձատունս լի էր, առատ,
 Անթիւ փողեր, ոսկի արծաթ,
 Առևանգեր մուրհակներ հաստատ,
 Առան տարան թալանեցին:

Ունէի բազում կալածներ,
 Գիւղեր, հողեր, ճոխ անտառներ.
 Հագարաւոր տարւան կայքեր,
 Զօռով ձեռքիս խլեցին:

Այս ինչ դարի հասանք Աստուած,
 Հին ցաւերից դեռ հագատւած.
 Տանս տխուր, տրտում նստած,
 Յանկարծ եկան մերկացուցին:

Մեր նախնիքը դարեր առաջ,
 Ունեցել են ողբ ու հառաչ,
 Բայց այսպիսի անեղ հարւած,
 Ամեննին չէինք տեսած:

Ահա քեզ դար նոր, լուսաւոր,
 Որ ընկածին կանեն տկրոր,
 Զարգեն, կսպանեն ամեն օր,
 Զեն թողնում, որ ազատ ապրենք:

Ես Հայրիկն եմ անմխիթար,
 Զունիմ հանգիստ, չունիմ դադար,
 Զաւակներս անմեղ արդար,
 Ա՛խ, չը գիտեմ ուր մնացին:



ՄՇԵՑՈՒ ԵՐԳԸ

Զուր էրբ մնանք զէլու դոներ,
 Երթամ գանիմ զիմ խեղճ գառներ,
 Սուքեմ զիմ պախչայիս ծառեր,
 Զարթիր, լաօ, մոնիմ քզի:

Խեղճ Մշեցին մեռաւ լալով
 Օտար երկիրներ ման գալով,
 Մեռաւ թուրքի պարտքը տալով,
 Զարթիր լաօ, մոնիմ քզի:

Գրող տանի քուրդ Հասօյին.
 Որ հապանէր ջօջ Ափօյին.
 Ի լաճ մացեր Արաբօյին.
 Զարթիր, լաօ մոնիմ քզի:

Դէն իրիշկէ, գալողն սրն ա,
 Քաջ Արաբօ բաղդաւորն ա,
 Կարմիր երիցանց զինուոր նա,
 Զարթիր, լաօ, մոնիմ քզի,



ՀԱՅՐԵՆԻՔԷՍ ՀԵՌՏԵՐ ԵՄ

Հայրենիքէս հեռացեր եմ,
 Խեղճ պանդուխտ եմ—տուն չունիմ.
 Ազիզ մօրէս բաժանւեր եմ,
 Տխուր տրտում քուն չունիմ:

Սարէն կուգաք, նախշուն հաւքեր,
Ա՛խ, իմ մօրս տեսեր չէք.
Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
Ախրը, բարև բերեր չէք:

Հաւք ու հովեր եկան կշտիս,
Անձէն դիպան ու անցան.
Պապակ—սրտիս փափակ—սրտիս,
Անխօս դիպան ու անցան:

Ա՛խ, քու տեսքին անուշ լեզւին
Կարօտցեր եմ, մայրիկ ջան
երնէկ, երնէկ, երազ լինեմ,
Թոնեմ մօտդ, մայրիկ ջան:

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
Սրտիդ կրպնիմ վառ կարօտով:
Լամ ու խնդամ, մայրիկ ջան...



Հ Ս Յ Ր Ե Ն Ի Ք

(ՊԱՏԻԻ)

Քաղցած հայրենիք, սրտիս դուրեկան,
Դու իմ ծննդեան տեղ նուիրական,
Արդեօք մինչև երբ հողիցդ զրկուած
Պէտք է թափառեմ երկիրներ կորած:

Ա՛խ, երբ յիշում եմ քո հողդ ու ջուրըդ:
Սիրտս այրում է քո սիրոյ հուրդ,
Ու միշտ ուզում եմ քեզի տեսնելու,
Սրտիս սրբազան կարօտս առնելու,

Ճիշտ է, շատ մարդիկ քեզ չեն ճանաչում:
Հարստացողն էլ վրադ չի նայում.
Բայց ես սիրում եմ ոչ թէ անյարմար,
Կարող եմ ասել, ինչպէս սիրահար:

Ոսկին ամենքի խելքն է գրաւել,
Մարդոց սրտերը բարեխօս դարձել,
Սուրբ են համարում և նուիրական
Թէ ինչպէս պահեն ոսկի պատուական,

Նայեցէք երգողիս, դուք հայ եղբայրներ,
Կարգալով յիշեցէք ձեր սար ու ձորեր
Գոնէ դուք երիտասարդներ անվերջ սէր տուէք,
Դէպի հայրենիք, ուր դուք ծնուել էք:



ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿԻՆՔ

Գեղեցիկ Կովկասի երկինք, շուտով պարգելու չես դու,
Խաղաղ, դադար դրութեան մէջ մի կերպով լինելու չես դու,
Առաջ սև էին ամպերդ, հիմա կարմրել են սաստիկ,
Անիրաւ երկրի նման, նոր-նոր արիւն փօթելու չես դու:

Չէ որ դու Աստուծոյ գահն ես, կապուտակ պարզ սիրուն
երկինք.

Ունիս համբաւ, ունիս հռչակ, ունիս բարձր անուն, երկինք
Ողորմած և գորովագութ, բարեսէր զգայուն երկինք,
Մի հաս մեծ հաշտարար որդի մեզ համար ծնիլու չէս դու:

Ձիւանուս պարզ հայելին դու, խաւար ամապմած ես դարձել,
Գեղազէմ լուսաւոր երկինք, սև հագել, մթնած ես դարձել,
Հոգեհան անուելի ես ձեռքիդ, կանաչ արա հնձելու չէս դու:
Գերանդին բունել ես ձեռքիդ, կանաչ արա հնձել չէս դու:



ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ 1896 Թ. ԿՈՏՈՐԱԾԻՆ

Ծուխը ամպի պէս կելէր դէպի վեր,
Տնդլի նման բոցը կը քայլէր,
Տուն, եկեղեցի, պարտէզ ու այգի,
Անսիրտ անհոգի մատնւած են կրակի

Հայերն հօտի պէս սարսած կը վազեն,
Անցնող դարձողէն օգնութիւն կուզեն.
Օգնութիւն, խեղճեր: Կատաղած օսմանլիք,
Չար մահը կըսպաննայ դարհուրած հային:

Մայրը կականով կը փնտրէ աղջիկ,
Աղջկան գերի առաւ չար տաճիկ.
Իր որդուն կուզէ հայրը շուարած,
Որդուն կը տեսնէ զազուխի ծերին:

Հայի հաւաքած մալը աղբատին,
Հալալ փայ եղաւ անկըշտում քիւրդին.
Խեղճը յուսահատ կաշէ երկնքին,
Կըսպասէ նպաստ հրեշտակաց զօրքին:

Խաբուսիկ յոյսեր... դեռ շատ ու շատ դար
Պիտի խաբուիս, հայ, ինչպէս խաբուեցար,
Թէ ինքդ չանես բո գլխիդ ճարը,—
Ե՞րբ պիտի օգնէ քեզի օտարը:

Խեղճ մարդ, մի անգամ մեռնելէն
Մինչ մահուան օրըդ հողար մահ տեսար.
Հազար մեռնելդ հազար ցաւերով,
Չաւակիդ փոսը ձեռքովդ փորելով:

Դու միշտ եղբօրդ անտերունջ թողիր.
Մատիդ ծայրովը նրան չօգնեցիր
Գլուխն առաւ խեղճը, գնաց հեռացաւ...
Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ:

Դուն կարծեցիր թէ, ոսկին մեծ բան է,
Ամեն մի, ցաւի. դարդի դարման է.
Ապա հէր «ոսկիդ քեզի չը օգնեց,
Կնկանդ, գաւակիդ մահէն չը փրկեց:

Ա՛խ, հայեր-հայեր, թէ որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհուէր օգուտ հայ ազգին
Առ միշտ կը դադարեն ձեր լացն ու կական
Ու դրախտ երկնաւոր կըլլար Հայաստան:



ԳՈՂ ԿԱՏՈՒ

Այս գող կատու ըս երեսդ լինի սև,
Քանի մէկ վնաս տաս իմ խեղճ ձագերուս,
Հիմա եկել դէմս ես կանգնել դու կաղ դև,
Մոմուլով ման ես գալիս իբրև կոյս:

Չուեր դրի ձագ հանեցի խեղդեցիր,
Խղճուկ փիւնիկ հաւիս ձագից զրկեցիր,
Որտեղ մի բան տեսար յափշտակեցիր,
Լացւեցար յետ քաշեցար սուս ու փուս:

Քո աչքերըդ ըսու են չես ճանաչեր տէրըդ,
Ձրգուելի գարշելի ըս պիղծ պատկերդ,
Գող ու աւագակ էր անառակ մէրըդ,
Նա էլ քեզ պէս հարւած տուեց ձագերուս:

Վերեն ասի գող ես դու չար ու դաժան,
Աղ ու հացը չը ճանաչող կեղտոտ անպիտան,
Վաստ հօրըդ ես քաշել գարշելի գազան,
Յուսահատուած թողիր երգիչ Սիրաթուս:




ՀԱՅԻ ՍՐՏԻՆ ՍՈՒՐ ԵՆ ՉԱՐԿԵՐ

Հայի սրտին սուր են զարկեր
Արեան դետեր են դարձուցեր.
Չկայ բժիշկ, որ բժշկէ,
Ինձ մահ տանող խոր խոցերէն:

Մինչ երբ լսենք, հայ տէրտէրին
«Խոնարհեց՛, ապրեցո՛ւներ»
Մինչ երբ փակեն մեր ականջներ.
Չեր անկատար ողորմեա ներ:

Հայի սուրը ահա վեց դար.
Փոխւել, դառել խաչ ու խաչվառ
Այդ խաչերով պիտի փրկենք,
Գերի ընկած եղբայր ու մայր:

Ո՛վ դու թշւառ շահամու Արմէն.
Դու չես լինի քաջ ազգասէր.
Մինչ երբ արբես պարբեցուցես
Գինիներով լի բաժակներ:



ՇԱՏ ԾԱՂԻԿ ՅԱՆԵՑԻ

Շատ ծաղիկ ցանեցի
Բայց ոչինչ չը գտայ,
Սիրուն ջան էտ քո ծամերդ
Ով է հիւսէ, կարօտ եմ
Վախ կարօտ եմ ես քեզ,
Կարօտ եմ սիրուն ջան:
Մեռնեմ էտ քո շինար բօյին:

Երկուսս էլ մի աղբիւրի
Ջրից էինք, ինչիցն է,
Որ դուք պարզ էք,
Ես հում պղտոր...
Կարօտ եմ վախ, կարօտ եմ (կրկնել):

Երկուսս էլ մի ծառի
Պառուղից էինք, ի՞նչչիցն է,
Որ դուք կարմիր էք,
Ես դեղին, կարօտ եմ... (կրկնել):

Երկուսս մի ծառի
Ծիրանից էինք ի՞նչչիցն է,
Որ դուք քաղցր էք,
Ես դառն, կարօտ եմ (կրկնել):

Ինչ վատ է սովոր է,
Քու այդ բլբուլիդ,
Որ ամեն առաւօտ,
Իմ սիրած վարդի
Թերթ է պօկում, կարօտ եմ... (կրկնել):



ՂԱԶԱԽԵՑԻ ՀԱՅ ԱՂԶԻԿԸ

Փրփրադէզ գետի յուզւող ալիքներ
Դեռ նոր են ներկւել հայի արիւնով
Զայրոյթով լցւած թունոտ բողոքներ
Գրկած գնում են դառն աղբիւրով:

Ահարկու ժայռեր գետի եզերքին
Սուզի պար բռնած խոժոռած դէմքով.
Դիտում են անվերջ մռայլ երկնքին
Զուլում են կանչում խոր հառաչելով:

Այնտեղ մօտակայ փոքրիկ պուրակում
Բնութեան երգիչ սոխակը սիրուն

Ողբակէզ ձայնով իր դայլայլիւմ
Գուժում է տխուր արիւնոտ գարուն:

Եւ մի հայ աղջիկ, չընաղ հերարձակ,
Վառ ծաղիկներից փունջեր գեղեցիկ
Քաղում է դաշտում ազատ, համարձակ
Հայդուկի երգ է երգում անուշիկ:

Նորա շրթունքից ցայտող երգերը
Կոիւ են մղում հայդուկի սիրտը
Շանթող սրտավառ նրա երգերը
Յուզեցին իմ մէջ էլ թախծալի վիշտը:

Եւ զիլ, զիլ ձայնը ինչպէս մի դաշնակ
Դիւթեց իմ սիրտը անբաժան կերպով
Իսկ սուր հայեացքը, այրող մի նիզակ
Խրւեց իմ կրծքում սիրային կապով:

Դիմեցի նրան զգայուն սրտով
Մի փունջ խնդրեցի իմ ետրի համար
Եւ ուրախ դէմքով ուրախ ժպտով
Բաց արի սրախ դարդերն անհամար:

— Ի՛նչ ես դու խօսում այդպէս անյարմար,
Տւեց պատասխան նա ձայնով մեղմիկ
Ծաղկեփունջ ես խնդրում դու ետրիդ համար,
Այդ չի կատարիլ ո՛չ մի հայ աղջիկ:

Զես լսում արդեօք, որ հայրենիքում
Քանի հայ քոյրեր, քանի հայ մայրեր

Գերել է թուրքը, իր պիղծ հարեմում
Վրէժ են կանչում նորա անվեհեր:

Երբ կը լուծես վրէժը նրանց
Անարգ դուշմանից սրով մահաբեր.
Ահա այն ատեն սիրով և սրտանց
Ծաղկեփունջի տեղ կը տամ քեզ համբոյր:
ԽՄՕ



*
* *

Դարդող եմ, դարդաքաշ եմ
Սարի չափ դարդ կը քաշեմ,
Դարդըդ դիր դարտիս վրայ
էն էլ ես կը քաշեմ:

Մօրից տնից ձեռ քաշի
Սիրու խաթեր ձեռ քաշի
Ազիզ եարիս որ տարան
Չոր գլխուցս էլ ձեռ քաշի:

Դօխիկ ջան, ես ինչ անեմ
Կարօտդ եմ ես ինչ անեմ.
Ես կերթամ, սիրտս չի երթա
Դուն կերթաս ես ինչ անեմ,

Գեանքս գնաց յետ չի գայ
Հաւք էր թռաւ յետ չի գայ,
Մարդուս սիրտը որ կտորաւ
Գեանքն էլ գնաց յետ չի գայ:

*
* *

Ընկերներս վաղ են մեռել
Ազիզ սրտերն հող են դառել.
Չոր ծառի պէս ես եմ կեցել
Ընկերներս հող են դառել:

Անգին մէքս ան մէջքը կոր
Անկուշտ հողին աչքն է քցեր.
Ազիզ մօրս կեանքն է հատեր
Չոր ծառի պէս ինչ եմ կեցեր:

Ծառս ծաղկած անբեր ֆնաց
Ծիլ ու ճուղկս գարնան չորցան.
Դարդի որդն էլ սիրտս է մաշեր
Չոր ծառի պէս ինչ եմ կեցեր:

Մի վռազի էյ մաշած սիրտ,
Աշնան քամին հիմա կուգայ,
Ծառդ արմատով կաննի կերթայ
Աշնան քամին հիմա կուգայ:



ՎԵՐՉԱԼՈՒՄԻՆ

Եւ հեռո՛ւ, այնտեղ, արիւնոտ կեանքի
Խաւար դաշտերում թաղած են յաւեո.
Ըմբոստ մարտիկներն, որ հառաչանքի
Ողբերն երգելով չքացան անհետ:

Եւ խոր սուզեցին դաժան, բռնաւոր
ժայռերին զարկած փշուր ու ջախջախ
Յորձանքների մէջ: Եւ լնւռ, մեր բուր
Ու անհուն ցաւի երազներն անվախ:

Թող հանգչեն նրանց նիրհած գանգերին,
Եւ սուրբ բարկութեան կարմիր հնոցում
Թող միշտ շիկանան, որ այն օրերին
Երբ կուի պապակն իր խորունկ ծոցում:

Մեր սերունդների մրրկած հոգին
Նորից գալարէ, առկայծեն յանկարծ,
Եւ լուսաւորեն ժայռերը մթին
Չորերը խաւար, ճամբէքը անդարձ:

Հ. Անուշեան



ՉԻՆՈՐԻ ԵՐԴՈՒՄԸ

Երգւում եմ ահա այս սուրբ հրացանով
Որ ծուխ է տալիս ու հանում բոմբւն
Նրա մահառիթ հրաշէջ գնդակով
Որ մահացնում է մեր պիղծ թշնամուն:

Երգւում եմ սրտիս փայլուն պողպատ
Մխած երկնքի հրով, կայծակով,
Որին ուխտել եմ չը բերել արատ
Յագուրդ տալ նրան դուշմնի արիւնով:

Երգւում եմ ահա (Սուրբ դրօշակով)
Որ փողփողում է մեր գնդի առաջ,
Որի վեհաշուք ծալքերի միջով
Ժպտում է մեզի, արէք, բաշք առաջ:

Երդման վկայ թող լինի հայրենիք,
Որին զինւորն կեանք է պարգևում,
Որին ազատութեան անձնւէր հէրոսք
Իրենց արիւնովն են ոռոգել:

Երգւում եմ կուել անվէհեր,
Յաղթել կամ ընկնել փառաւոր մահով
Երգւում եմ մեռնել, չըլինել պարսաւիք
Չապրել վատութեամբ, չապրել ամօթով:



ՀՊԿԻՍ ԿՈՒՏԵՄ

Էլի նոր ձմեռ, էլի նոր ցաւեր:
Դարդը վաղ չեկաւ մեր խեղճ աշխարքէն
Վաթանս աւեր-վաթաններ աւեր
Դուռ ու դրացի արտրւած կեանքէն:


Չորս դին սով ու ցաւ, չորս դին մղկտանք
Փոր հացի կուլ արնոտ ու դուման,
Միշտ գառը դատանք, ոչինչ չըստացանք
Չուրկ-զրկւած կապրենք գուլ-գերու նման:

Ա՛խ, ես էլ գարտուռ, բուն դադար չունիմ,
Ամենքից ցաւը իմ սիրտը կուսէ

Ախր չըզիաէք, ես մէկ սիրտ ունիմ
Ո՞ր մէկիդ հալալ բաժին տամ, օգտէ:

Պէտք չէ մորմորել, ինչ կուզէ էզնի
Սրտիս տեղ հոգիս ես ձեզի կուտամ.
էն լուսն է տեսեր ու ձեզ չի թողնի
Զուլում օրերին մենակ, անգուման:

Շուշանիկ Կուրդինեան



Բ Ի Ա Գ Ո Ի Ս Ո Ի Լ Ի.

Անիրաւ բաղդ, ինչո՞ւ ինձ մօտ չես գալիս,
Մնացել եմ խեղճ ու ստոր վիճակի,
Թշուառ աղքատներուն էրնէկ եմ տալիս,
Հասուցիր օրերս վատ ժամանակի,

Մանկութեան օրերս անցուցի ի զուր,
Ամենից լաւ օրս է տրտում ու տխուր,
Քու ձեռքիցդ մէկ ցաւս եղել է հարիւր,
Մնացել եմ բաղցած, կարօտ կամակի.

Բաւական է ինձի թողնես մոլորուած,
Որ միշտ ման գամ ոտաբոբիկ, գլխաբաց,
Ցաւալի փիղանն եմ աչքերս են թաց,
Մի մասնիք իմ անձս զու վառ կրակի.



Գ Ի Վ Ա Ն Ի

Ի՞նչն է քեզի տանջում ընկեր, եկ լրաւ ինձ ասա,
Գուցէ գտնեմ դեղ ու ճարը, սրտիդ ցաւ ինձ ասա,
Կուսին աչքեր, թէ՛ այլ հոգսեր, քեզ հալել ու մաշել են,
Թէ՛ խարդախի, ստորաքարչ նիւթած դաւը, ինձ ասա:

Կամ քո սիրած ու փայփայած սիրուն վարդի կոկոնը,
Սոխակի տեղ, տիրապետել սև ագռաւը, ինձ ասա,
Եւ կամ մօտիկ սիրելեացդ, համագոյժն է քեզ հասել,—
Կմախք շինել, սև նամակի վատ համբաւը ինձ ասա:

Պատասխանեց բաղգակիցս, ասաց՝ աշուղ Զամալի,
Ո՛չ այս, ո՛չ այն, այդ ցաւերից մեծը-վատը քեզ ասեմ,
Ինձ այս օրին հասցնողը, հայրենիքիս ցաւն է,
Անբուժելի ցաւերու պէտ, հին կերցաւը քեզ ասեմ:



ԲԱՂԴ ԵՄ ՓՆՏՈՒՄ

Մի քանի տարի է, զիբքս կորուած,
Իմ կորած հին բաղդս, նոր որոնում եմ,
Փոքր լաստով երկու ծովի մէջ ընկած,
Միշտ այս ու այն կողմը տարուբերում եմ:

Բաղդս ձեռք բերելու ունիմ մեծ բաղձանք,
Պիտի տանեմ դեռ ևս շատ հալածանք,

Չեմ խնայում ոչ մի տեսակ աշխատանք,
Տընում եմ գօր-գիշեր ու շարշարվում եմ:

Համարեան խախտել է հաւատս անբիծ,
Մարդկանց խոստումներից ու անկեղծ խօսքից,
Երբեմն յուսահատ, երբեմն յուսալից,
Այլոց տուած, քամով կերակրուում եմ:

Շատերն յիմար կասեն ինձ, կը բամբասեն,
Շատերն էլ յոյս կուտան լաւս կը խօսեն,
Ջամալիս անխելք չէ, ինչ կուզեն ասեն,
Ես իմ բռնած ուղին շարունակում եմ:




ԽՂՃՈՒԿԻ ԼԱՅԸ

Ի՛մալ պըտի էնինք, ես լէ չեմ վինա,
Որ չըթորկենք քոչինք մըր տուն ու վաթան,
Չունինք խաց ու խալաւ, խեղճ ինք չուր մըկայ,
Հիմկուց յետև տեսնանք, փոխինք, գմեր բան:

Իդա խարիպութեն աւիրեց գմըր տուն,
Կը թորկինք հեռենանք ճըժերսի սիրուն,
Լալով մընք հաց կուտինք չմըրի յիրիկուն,
Էլ եբ միտք կու բերինք մըր խեղճ Խայտատան:

Սէֆիլցեր՝ կըզողանք քրտերու առաջ,
Տաճկին գանգատ կէնինք, չի էնի ականջ,
Ծանաղցուցեր է մըր վըէն խարջ-խարաջ,
Խղճեցրեր պարտքնատէր, բեաֆիլ խարկախան:

Թորկած խօրօս հանդերս, թորկած սիրելիս,
Թորկած Ջամալ եգս, թորկած Մարալիս,
Ես Ստամբուլ կերթանք, ես թէ չէ Թիֆլիս,
Էնտեղ աչքներս առած ինք սև գերեզման:



Ղ Օ Շ Մ Ա Յ

Երանի այն աւուր կուտամ յարժամ,
Հայրենիքէ՛ս եթէ բարի լուր լսեմ,
Ողբամ ու կաղերսամ կենացը անգամ,
Վառուած բերանովս երգեր կսկսեմ:

Եթէ Տէրս տացցէ ինձ իմաստութիւն,
Այն բոպէին կունենամ ծանր բնութիւն,
Մտիս մէջ չը ճարուի ոխ կամ դառնութիւն,
Ի՞նչ պէտքս է, որ ես այլոց բամբասեմ:

Որբ Ծիզանն եմ, պապիս հին արմատիցը,
Ծնուել եմ հայկական որբ աղբատիցը,
Մի բար է մնացել պապիս պատիցը,
Համբուրելով գոյգ աչքերիս կը բսեմ:



Թ Ա Ի Ր Է Ձ Ի

Սիրական սիրովդ խելագար դառայ,
Դու ափսոսան երիտասարդ հասակիս,
Մանուկ հասակովս եղայ քեզ ծառայ,
Գոնէ ափոսոս գու իմ նպատակիս:

Շրջում է սրտիս մէջ սիրոյդ անիւր,
 Չը կայ երբէք, սուսեր սիրոյդ հաշիւը,
 Տպեցիր սրտիս մէջ ցաւերուդ թիւը,
 Սիրով յաղթող եղար իմ ժամանակիս:

Թորգոմեան ազգիցն ես, ինքդ անդրանիկ,
 Քու կամար ունքերդ, ինձ վառեց անշիւկ,
 Քայլքդ կաքաւի է, իսկ դու ազունիկ,
 Խնդրեմ լուր տաս Ֆիզան—երգիչ սոխակիս:



ԳԱՆԳԱՏ ԻՐ ԱՆՁԻՅ.

Չի ճարուի աշխարհում ինձ պէս խելագար,
 Իմ Խելքիս ձեռքիցը, օտար եմ դառել,
 Տերևներս թափուած, եղել եմ չոր ծառ,
 Այլոց համար ես մի նօտար եմ դառել:

Իմ ցաւիս բժիշկը ինձի չփրկեց,
 Խրատեց, համոզեց, օտար տեղ ղրկեց,
 Ցաւը իմ մարմինս գոյն գգոյն ներկեց,
 Ես մի մարդ եմ, ցաւով հազար եմ դառել:

Այսպէս էր կամեցել իմ Տէր—Փրկիչս,
 Այսպէս էլ կրակուած գրեց զրիչս,
 Ցաւով լցուած—տկար Ֆիզան երգիչս,
 Լուծս կոտորած, անպէտք նժար եմ դառել:



Մ Օ Ր Ս ՈՒ Գ Ը

Սարի լանջին ընկած որդիս,
 Կրժքիդ վարդին ես մեռնեմ.
 Մէկ ճար գտիր արուն գարդիս.
 Ա՛խ, քո գարդին ես մեռնեմ:

Արնաշաղաղ, մենակ ընկած,
 Կանաչէ քեզ անկողին.
 Անուշ քնով լուռ-մունջ քնած
 Չես լսում քո ծնողին:

Բաց, բալն շան, աչքդ մէկ բաց,
 Մէկ ինձ նայիր, այ անսիրտ.
 Ա՛խ, իմ սրտին՝ էրւած, վառւած,
 Մէկ ճար գտիր, քարասիրտ...
 ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.



* *

Ախ մեր լսմած շուրը մեր կերած հացը,
 Դառնացել են նրանց մէջը համ չկայ,
 Մեզ բաժին է ընկել սուգ և լացը,
 Ուրախ շաբաթ, ուրախ օր, ու ժամ չկայ:

Ինչո՞ւ չեղանք արիւնարբու աւազակ,
 Դուող գոբող վրիժառու ելուզակ,
 Ծով աշխարհում մնացել ենք միայնակ,
 Մեզ համար սրտակիր բարեկամ չկայ:

Մարդ գիտենայ ինչ ենք արել մարդկութեան,
Որ վարւում է մեզ հետ այսպէս չար դաժան,
Որ չի անում արդար դատ ու դատաստան,
Կամ քնել է մեր բաղդը կամ չկայ:

Ձիւան մեր արևը մոռթ ամպի տակ է,
Այցելութեան դուռը մեզ համար փակ է,
Հայր առանձնացած թռչնոց խմբակ է,
Մօտիկ արնակից մէկ երամ չկայ:



ՂՈՒՐԲԱԹ.ԻՑ

Պուլ հառաչանք, բեկ-բեկ ձայներ են ամեն կողմ հնչւում...
Անցորդ է այս... աղօթք է նա արդեօք, ջերմ-ջերմ մրմնջում.
Թէ անէծք է դառն սրտով կարդում պատած խաւարին,
Կամ չլինի՞ չար ոգին է բռնել նրբան ու տանջում...

Սակայն ոգին իւր գօրութեամբ գուցէ դողար նրբանից,
Գուցէ յըղին անիծելով՝ վիժէր պտուղն արգանդից,
Եթէ անգամ միայն նայէր նրա դէմքին թունալից:

Տիեզերքի ամբողջ թոյնը նա ժողուել է երեսին,
Կարծես մարտի է կոչելու չարախորհուրդ Իրիսին,
Եւ կարծես թէ սև ամպերի բիւր սլաքներ կայծակի
Նա ուզում է ողջ աշխարհի գլխին գարկել շեշտակի:

Շանթ ու կրրակ է դուրս ցայտում իւր աչքերից
Եւ Ղլապինդ բռունցքներ է երկնցնում երկնքին:

Քօայի պէս գալարւելով հանած բերնից չար լեզուն,
Նա ոռնում է և սուր ձայնը ձգձգում է շատ հեռուն...

«Ո՞վ գօրութիւն, որ ամենքը քեզ կոչում են Ասուած,
Որ աթոռդ եթերից վեր, երկնքումն ես հաստատած,
Որ բիւրաւոր հրեշտակներ խոնարհում են առաջիդ,
Ասա՛, արդեօք, մեր հեկեկանք հասնում են քո ականջիդ»

Այդքան բարձրից տեսնում ես դու արիւնագարդ այս լճեր,
Կամ լրսում ես որդեկորոյս, արասկտոր մօր ճիչեր:

.

Տանջեց, խաչեց դաժան բիւրդը բազմաչարչար Հայերին
Սակայն անհաս գօրութեամբդ երբ օգնեցիր տրկարին:
Հայի ձայնը դըղրդալով՝ հասաւ մինչև բևեռներ:

Կայծակի պէս՝ այրեց, շանթեց խղճահարւած շատ սրտեր,
Իսկ երբ սիրտդ գէթ մազի չափ տեղից շարժեց զայրոյթից.
Ե՛րբ բոց ու հուր դաժան քրդին պատիժ աւիր երկնքից...

Իմ բազմանդամ ընտանիքից ինձ թողեցիր մի որդի.
Թէ նրան էլ զոհ ես տարու կուսածարաւ լիրբ քրդի,
Թո՛ղ ոստանան գինէ ինձ բիւր նիզակներով դժոխքի,
Որ կործանեմ ես դռները անարգար բաղդի»:
Արմայիս



Վ Ա Տ Ը Ն Կ Ե Ր

Վատ ընկերդ հեռանում է,
Կուզէ էրթայ, թող տուր էրթայ,
Լաւութիւնդ մոռանում է,
Գնալու է թոյլ տուր էրթայ:

Նա որ յարգութիւնդ չը գիտէ,
էրած բարութիւնդ չը գիտէ,
Մարդ չէ մարդկութիւնդ չը գիտէ,
Գնալու է թոյլ տուր էրթայ,

Որքան նրան քարոզեցի,
Ասի գէշից հեռու կացիր,
Վերջապէս չը համոզեցի,
Եթէ կերթայ թող տուր էրթայ,

Ինքն իրան կարծում է դպիր,
Խելք չունի գլխի մէջ ընտիր,
Ֆիզահու պէս օտար էրկիր,
Նա որ կերթայ, թող տուր էրթայ:



ՀՅՅԻՆԻՔԻՆ

Ապերախա ենք մենք հայերըս,
Քեզի մոռացանք հայրենիք.
Մեր սերունդը մեր ետևից
Պիտի կարգայ նախատինք:

Եղեմական դրախտ էիր
Դու մեզ համար, Հայաստան.
Միթէ հիմայ դժողք դառար
Դու, սիրելի բուրաստան:

Սեփական շահերի համար
Մոռացել ենք ազգութիւն.
Եղբայր եղբօր դէմ ենք կանգնել
Այդպէս է արդարութիւն:

Գերութիւնը միթէ մեզի
Վիճակած է անպայման.
Մինչև երբ մենք ման պիտի գանք
Այսպէս խեղճ, թափառական:

Եերգիչ Միջազը խնդրում է,
Կապեցէք սէր միութիւն,
Միայն սիրով պիտի գտնենք
Խեղճ հայերըս փրկութիւն:



ԵՐԳ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԵԱՆ

(Ուսկադարի եղանակով)

Մի պարտեզից անց կենալիս տեսայ մի ծաղիկ,
Վարդ ծաղիկի մօտն էր կանգնած մի հայ աղջիկ,
Աչքն ու ունքն լուսով պատած չքեզ գեղեցիկ,
Միբունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի,
Ով որ մեզի բամբասում է լեզուն անուի,

Հոսա երեսը տեսնելու պէս սիրուն զարկուայ
 Երակներս շարժուեցան գոյնով ներկուայ,
 Իւր նագելի դէմքը տեսայ կեանքիցս զրկուայ,
 Սիրունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի:
 Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի:

Նրա սէրն իմ սրտիս մէջ անբաժան սէր է,
 Ինչպէս անմարել կրակն իմ սիրտս կէրէ,
 Այսքան սիրով տանջուելս թող աստուած ներէ,
 Սիրունն իմս է, ես սիրունին, ով կը խառնուի:
 Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի,

Ակնարկելով իւր պատկերին գառայ խելագար.
 Եթէ նրան ինձի չը տան մահուան եմ յօժար,
 Քաղցր համեզ բերան ունէր և լեզուն ճարտար,
 Սիրունն իմս է ես սիրունին, ով կը խառնուի:
 Ով որ մեզի բամբասում է լեզուն առնուի:



ՄՇԵՑՈՒ ԳԱՆԳԱՏԸ

Ողորմացիր տէր իմ, գութով նայիր մեզ,
 Մինչ երբ թողնիս նկուն տխուր հայ ազգիս,
 Հինգ հարիւր տարի է կաղաչենք քեզի,
 Չարիւր մէկ օգնութիւն տխուր հայ ազգիս:

Քեզ պաշտեցինք, մեզ շղթայով փակեցիր,
 Մեր բերդերն ու ամրոցները փակեցիր,

Պարծես գերութեան հետ մեզ պսակեցիր,
 Տւիր ստրկութիւն տխուր հայ ազգիս:

Առար քաջ Տրդատի ձեռքէն թագ ու թուր,
 Ելնելով սարն ասաւ աշխարհն է իզուր,
 Այն օրից մինչ այժմ խեղճ հայն է տխուր,
 Տւիր թոյլ բնութիւն թշառ հայ ազգիս:

Առ միշտ արիւր Մեհրուժանին սիրական
 Պարսկաց զօրքեր ուղարկեցիր Հայաստան,
 Չարեանդի մօտը մեծ հարւած տուաւ,
 Անիրաւ չար Շապուհն խղճուկ հայ ազգիս:

Խեղճ Յահրատն եմ, երկար ողբալով լացինք,
 Մեր սխալը յետոյ, յետոյ զգացինք...



ԱՌ ԶԵՓԻՒՌՆ ԱԼԷՄԳԱՂԻ

Չմեռն անցաւ գարունն է արդ
 Բլբուլի դէմ բացուում է վարդ
 Լեռներ դաշտեր գորգով ծածկուած
 Կենդանութեան արին նոր զարդ:

Շող լուսնեակի
 Կոյսն ու ծաղիկ,
 Միմեանց զգուին
 Սիրատարփիկ:

Ախ փափկասուն մանկիկ գեփիւս,
 Անուշ հոտով ծաղկանց սփիւս,
 Աղբերց վրայէն լուսակարկաչ,
 Ինչպէս թռչեն կուսին առաջ:



ՄԻ ՄՕՐ ՕՐՕՐԱԿԱՆ ԵՐԳ.

«Ազնիւ ընկեր» երգի եղանակով

Սիրահեզիկ սիրուն աղջիկ,
 Քնիր անուշակ ընով,
 Որ գօրանաս, սրտիս ծաղիկ
 Քնքոյշ տեսքով հասակով:

Քեզ օգնում է բո՛ւ մայրիկը,
 Մաքուր կաթնից ըեզ տալով
 Եւ օրհնում է քս հայրիկը,
 Քեզ փարելով գգուելով:

Ինձ մի տանջիր, իմ անուշիկ,
 Թող մնայ սրտիկս խաղաղ
 Ննջիր հանգիստ, հոգւոյս հատիկ,
 Թող ես չասեմ ան ու վնիս:

Խաչն Յիսուսի քեզ պահապան
 Գիշեր ցերեկ—օրն ի բուն,
 Որ զարգանաս, իմ աննման,
 Եւ լինիս մայր սիրասուն:



ՄԱՏԱՂԸ—«ԹՈՒՄՕ» ԻՑ

Յաղթանդամ լերան ձիւնոտ գագաթից
 Դէպ կիսակործան մատուռը, կամաց՝
 Ծանրը քայլերով, շնչարգել եղած
 Իջնում է մէկը յոգնած ու բրտնած:

Նրա շլապիսդ ուսին վիթխարի,
 Մի բան կայ կապած.—Արտօսի ժայռոտ
 Լանջերում զարկած հրս է ոչխարի,
 Թէ ձերպաքնակ այծեամ վայրենի...

Տնքում է որսը. անգօր, ուժասպառ,
 Մթնած աչքերը յառած երկընքին,
 Եւ ազատութեան ոչ մի յոյս իսպառ
 Չի ծագում երբէք իր թմբած մտքին:

Իջաւ ծանրաքայլ՝ որսորդը թումօն,
 Մըտաւ մատուռը, հաչ հանեց դէմքին,
 Ապա կիսամեռ իւր որսը—Մամօն,
 Երկիւղածութեամբ դըրաւ Սեղանին:

Դէմքը կատաղի, դաշոյնը ձեռքում,
 Ցառել է թումօն աչքը Սեղանին,
 Թնդում է սիրտը, արիւնը եռում
 Եւ բարկութիւնից դողում շրթունքնին:

«Իմ կթաններս բըշեցին, տարան,
 Այրեցին տունս, կինս լկեցին,

Վերջին պատառս քրդերը կերան,
Որդուս գլուխը սրբով շարդեցին...

Այժմ աղքատ եմ, սրբազան սեղան,
էլ ոչխար չունիմ որ քեզ զոհ բերեմ,
Աղօթք չգիտեմ բանամ իմ բերան,
Խունկ ու մոմ չկայ, չոքէ չոք վառեմ:

Բայց դրանց փոխարէն Արտօսի տակից
Գեղ զոհ եմ բերել, մի զոհ թանկագին,
Որից մինչ այստեղ ես իմ թիկունքից
Մի վարկեան անգամ չեմ դրել գետին:

Ես նրան խլել եմ իր տաք անկողնից,
Որտեղ իմ կնոջս առած իւր գիրկը,
Պիղծ համբոյրներով՝ կուզէր նրանից
Յագեցնել փութով վայրենի կիրքը:

Նա է, սուրբ մատուռ, Սեղանդ պղծողը,
Նա է որ անմեղ շատ արիւն թափեց,
Նա է իմ միակ որդուս մորթողը,
Նա՛ որ մեր հացով մեր արիւն լափեց:

Գուցէ մարդկային դու զոհ չես ուզում,
Գուցէ մարդկային հոսերն արեան
Շատ է ողորմած քո սիրտը յուզում...
Ապա ուր էիր, ուր էիր սակայն:

Երբ մեր սրգիքը կրակում ողջակէզ
Բառաչում էին նման ոչխարի.


Երբ նրանց կերկերուն ձայներն աղեկէզ
Թնդեցնում էին ծայրերն աշխարհի...

Ձէ իմ մտքերից ես չեմ նահանջում.
Պէտք է ընդունես, պէտք է զոհւի նա,
Վրէժս յագուրդ է անշուշտ պահանջում.
Եւ այդ անպատճառ պէտք է ստանայ:

Եւ յանկաբժ ցոլաց ցոլքով կայծակի
Ահեղ դաշոյնը թումօյի ձեռքում.
Արիւնածարաւ Մամօյի կրծքից,
Ցայտեց արիւնը վերքից ահռելի:

Ու կարմիր ներկեց մատուռ ու սեղան...
Ժպտում է թումօն ժպտով սոսկալի.
Ապա յարձակեց իւր որսի վրբան,
Կուրծքը պատառեց գազանի նման:

Արնոտ ձեռներով դուրս խլեց սիրտը,
Ջրգեց իբրև զարդ Սեղանի վրբան,
Ապա դէպ երկինք մեկնեց իւր ձեռներ,
Ու չոքեց հանդարտ, նա աղօթում էր...
Արամայիս



Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս Ը

Արեան ծովէն, մոխրի դաշտէն վայրօրէն
Հնադարեան ուխտաւորի մը նման՝
Սոր հաւատքով Արևմուտքի կողմերէն
Վրսպասէինք Արշալոյսի մեր ծագման:

Արևմուտքը Ծիածաններ մերթ կապեց,
Որ վիրակապ չեղան սակայն մեր վէրքին,
Եւ մերթ մոայլ ամպրոպներով ծածկըւեց
Ու շանթերով ակօսեց մեր սրբ հոգին:

Կոչնակներու պաղատանքին համընթաց
Մեր լացն, աղօթք կրկնեցան դարէ դար.
Կամ թէ չկար Աստուած. կամ կար չգլթաց,
Ու մենք մահին սպասեցինք հոգեվար:

Սակայն անա արդարութեան յովազներ
Իրաւունքի ճամբաներ կարօրեն...
Մեզ Արշալոյս, մաքառումի եղբայրներ,
Արևելքէն պիտի ծագէ շուտօրէն:
Վտարանդի



ԹՈՒԽ ՓՈՒՇՈՎ ԱՂՁԻԿ

Շարաֆով, թուխ փուշով աղջիկ, բոլոր յերես,
Չեմ գինայ յոստի գիգաս, դուն մոլորել ես:

Ախի, քու գլուխն է դրած կարմիր ջրայ,
Յէրիք է, հեա վզնոցիդ մալու մը խնդայ,
Ես ու դու արի եար էգնինք խօրօտ Սավդուլ,
Բալալու աղջիկ ես դու, ես էլ խեղճ տղայ:

Իմ ու քու նանի մէջ՝ թող Աստուած դատէ,
Սագուլ ջան, մէ իրիշկելդ ձիկ շատ ու շատ է,

Մօտկցի, մի վախենայ, քու անուշ եարն իմ,
Փաթաթուի, իմ վիզ գրկէ, մի ասի եատ է:

Քու խերանց գոռ ու յեր լիս մենձ պար ու խաղէ,
Էդ սիվտակ դոշիդ խամար, իմ սիրան ի դաղ է,
Ձիմ սէֆիլ—բալալու բաշ խօրօտիկ Սավդուլ,
Չեմ գինայ յօրի՛ ըզման սիրտդ վրէս պաղ է:

Պատուական ու խօրօտիկ բճեր ես խաքէ,
Հուսովընէ չուր իրիկուն ձըր դուռն իմ չօքե,
Քու սէրսուփ խաթեր խամար յըմէն լուսու մութ
Վըր ծնկան ես չօքէչօք խօրդ ձեռն իմ պաքե:

Աշխըրի դարդ—խասաւաթ քըզի՛ է տուած,
Օրթէ գիս գետին կու տփիս, ախ անաստուած,
Քու սէրն էփեց ու վառեց, շիվար մացի,
Չենք գինէ թը յիսնէ յեր իր խոոված,

Քու ձեռնէն բրորաւ սիրաս. էղայ դարբէզար
Քանդեցիր զիմ տուն ու տեղ, բցեցիր չոր բար,
Հարի էբ մնամ բրինդար, չէ բո Խլղաթն իմ,
Մէղբ արի, խանչէ քու քով, իմ բէֆալու եար:

Կող ու կուշտս կպաւ գետնէն ճամբախըդ իշելով,
Մեռայ, ես շատ տըլպայ քու փէշ քաշելով,
Ձիս մոռացար աղբըտի պէս դունէ դուռ քըցիր,
Թորկեցիր շիվար ու խեղճ, ախ—վախ քաշելով:

Մըռնիմ քու սըրսուռ ճամբն ու բարակ բաժին,
Քու ծամերն ու թուխ աչեր աշխարք կու աժին,

Իլլահի քու թեյուլ բոյն ու կեռ-կեռ ունքեր...
Ի՞նչ կեղնի էդ քու մասներ հեղմ գլօխս մաժին:



Զ Ա Ն Կ Ի

Զանկին եկաւ կոիւ տալով,
Խոր քարերը իրար տալով.
Սեան-ծովից մինչեւ Արագ —
Արտ, այգիներ զարգարելով:

Զանկի, գիտեմ դարդ շատ ունես —
Բարձր ձայնով բողոքում ես,
Դարգս խառնեմ դարդերիդ հետ —
Արտասուքս ջրերիդ հետ:

Ժայռի գլխին բանտ է շինած,
Անուշ եարս մէջը քնած,
Հարուստ Զանկի, ոյժդ ցոյց տուր,
Ափիդ կանգնեմ եարիս ինձ տուր:

Խիտ մազերս պարան հիւսեմ,
Ժայռի գլխից վար քաշ անեմ,
Կամար ունքերս մէջքիդ կապեմ,
Քաղցր եարիս կամուրջ կապեմ:

Էլ մի վազիր դէպի առաջ,
Կուրծքդ դէմ տուր ժայռի առաջ —
Ճինջ արձակիր՝ ժայռը դողայ,
Բալքամ բանտը ջանիս թողայ:

Թէ չհասայ իմ մուրազին,
Սե դիակս տուր Արագին,
«Սե աչերը» կեանքը զոհեց —
Առանց եարի ապրել չուզեց...

Թորոս



ԽՂՃՈՒԿԻ ԶԷՆ

Ընցաւ տարին, Հայոցս էլ փառք ընցաւ հետ.
Դրախտի սարէն գարունն յետին բարե ետ,
Կտրիճք առան զենքերն իջան տակ հողին,
Վախ մըր գլխուն, սե մուր էկաւ մեր օրին.
Հայու աչեր թող մըզի լան,
Հայու քաջեր թող մըզի գան:

Հայեր, գերի եղանք բաղդին անողոք,
Աստուած, հրշտակ, մարդ չըլսեց մըր բողոք,
Մըր լացերու ձէն ծածկաւ ճարնոյ տակ,
Մշու դաշտեր պահեն սրտից հառաչանք:
Հայու աչեր թող մըզի լան,
Հայու քաջեր...

Մըր աշխարհի քակվուկ շէնքերու ներքեւ
Նստուկ մամ, պապ՝ ճըժեր մացին անարեւ,
Նօթի՝ տկլոզ, ախ, չկայ տէր տիրական,
Անգուլթ բրտու զըլմին էղած ենք խուրբան,
Խարիպ աղբերք թող մեք լան,
Հայու քաջեր...

Մատղաշ աղջիկն ու հարս հալաւ մի շունի,
 Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի
 Էնպէս դրած ձեռքերն աչից ամաչկոտ,
 Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ:
 Հայ աղջիկներ թող մեզ լան,
 Հայու քաջեր...

Կեցէք, Մշու դաշտի քամիք, բիշմ կեցէք,
 Մըր ողբացէն բարեն էլ ձըր հետ տարէք,
 Ու եք ընցնիք սուրբ օրէնքի կամարից,
 Հոնկուց ըսէք խարիպ մըր հայ աղբերից:
 Էլ ինչ պէտք է, որ մեզ լան,
 Հայու քաջեր...

Մացէք բարով, իմ հէր ու մէր, բուր, աղբէր,
 Մացէք բարով անոթ սարեր ու դաշտեր,
 Գուցէ մեռնեմ, էլ չտեսնեմ այսուհետ,
 Դարտ մի էնէք, գուշմանմ՝ տարեր եմ իմ հետ:



ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

Մընաք բարով, արև, գարուն
 Եւ խնկաբոյր ծաղիկներ,
 Կարկաչահոտ վըտակ սիրուն,
 Կանաչազգեստ բլուրներ.

Մընաք բարով, համբոյր և սէր,
 Դէմքով հրեշտակ կոյս չքնազ.

Վայելչութեան պայծառ ժամեր,
 Քաղցր ժըպիտ, կեանք մատաղ:

Աղբատութիւն ես սիրեցի,
 Խեղճի լացը, հառաչանք.
 Ես քընարս նըւիրեցի՝
 Վիշտ երգելու և տանջանք...
 Յ. Յովհաննիսեան



ԼԱԻ ԳՈՒԶԼԿՈՒԹԻՒՆ

Կանցնեն այս օրերը, էլ յետ չեն դառնայ,
 Մեզի կը ժամանեն գեղեցիկ օրեր,
 Հոգիս գուշակում է բարի ապագայ
 Եւ նրա հետ մէկտեղ երջանիկ օրեր:

Նեղութեան դիմացոյ տոկուն հայ մարդը
 Բանի տեղ չի դնիլ կարկուտի ջարդը,
 Փուշ մենք կը քաղենք, որդիքս վարդը,
 Նրանք պիտի տեսնեն անուշիկ օրեր:

Զիւան, կը բացուի երկինքը կապուտակ,
 Կը յաջորդի գւարձալի եղանակ
 Աստուծով այս վատ օրերու փոխանակ,
 Պիտի տեսնենք լաւը հինգ պատիկ օրեր:



Յ Ո Յ Ս

...Ինչքան երկինքը ամպէ, որոտայ
Կայծակ, հուր, երկաթ, շանթեր արձակէ.
Թէ սաստիկ կարկուտ, շատ անձրև տեղայ,
Վերջը դարձեալ պայծառ արև կը ծագէ,

Թէ ծովը ծփայ կատաղի սաստիկ
Իւր ալիքներով ափից դուրս չի գայ.
Թող իջնի թաթառ, հանէ փոթորիկ,
Թող փչէ հողմը ինչքան կամենայ,

Թող պատերազմեն ազգերն իրար հետ՝
Թող մէկը միւսի արիւնը խմէ.
Թող խփեն իրար, գնդակ, մահու նետ,
Եղբայրն իւր եղբոր թող միսը ծամէ...

Կանցնի բոլորը, կուգա ժամանակ.
Ամեն առարկայ իւր վերջը ունի,
Որդին կը նստի հօրը փոխանակ
Նոր հողի, նոր կեանք նորից կսկսուի:




* *

Հերոս, դու անցար քո կեանքի ուղին,
Այժմ քո փառքը կ'ապրի աշխարհում.
Կ'ապրի քո վսեմ, անձնուրաց ոգին
Սուրբ հայրենիքիդ հգօր երգերում.
Կ'ապրի քո գործը—գործ հերոսական,
Որ ազատութիւն պարգևեց նրբան:

Քանի որ ազգը շնչում է ազատ,
Կենդանի կըմնաս դու նրա կրծքում
Դու ընկած... բայց քո արիւնն անարատ
Կընոսէ դարձեալ մեր երակներում.
Եւ քո գործերի փառահեղ դափնին
Միշտ ոյժ ու եռանդ կըտայ քո ազգին:

Կուրի փոթորկում անունդ յիշելով,
Սարսափ կը ձգենք թշնամու սրտում.
Հերոսիդ մահը կերգեն մեծ փառքով
Մեր մատաղ կոյսերն իրանց երգերում.
Եւ դու չես լսիլ երբէք լացի ձայն—
Լացը կանարգէր քո սուրբ գերեզման...
Ա. Մատուրեան



Ս Օ Խ Ա Կ Ի Ն.

Առաւօտուայ արշալուսին,
Երգում եմ, անուշիկ սոխակ,
Կարմիր վարդն է քոյ ամուսին,
Դու խօսէ, քնքուշիկ սոխակ:

Դու վարդի սիրոյն ես տարուած,
Նորա համար ես մոլորուած,
Ինչո՞ւ ես այդքան զբաւած,
Երբ չունիս նմուշիկ սոխակ:

Վարդի բացուելուն կարօտ ես,
Քուն մի լինիլ, բացուելը տես,

Որ տերևներէն հոտոտես,
Ման արի զգուշիկ սոխակ:

Ֆիզանն եմ, քեզ գովեմ ձրի,
Աստուած խորհուրդդ կատարի,
Զգոյշ կաց, որ քեզ չը խրի
Վարդենու սուր փշիկ սոխակ:



Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ

Աշխարհին եղիր պատուական,
Որ քեզ ասեմ մարդ բանական,
Թշնամիք ցաւերդ իմացան,
Վէրբդ արին հարիւր հողագործ:

Քու թշնամիքդ չունին վարք,
Քեզ հետ միշտ խօսում են անկարգ,
Դատարկ կուժդ լիք փարչին գարկ,
Ուժովդ ամուր, հողագործ

Մի քնիք, գործդ կատարէ,
Որ քեզ չասեն թէ անճար է,
Ունեցած դաշտերդ վարէ,
Թոռներուդ ձայն տուր, հողագործ:

Միշտ դու գործիդ արի կեցի,
Միշտ սո, քեզ այսքան գովեցի

Շատ պահէ հաց, ոչխար ու ձի,
Զեւքդ առ թակ, դուր հողագործ:

Խրատ արն ականջիդ օդ
Աստուած է հարազատ ծնող,
Փիզանն եմ այլոց խրատող,
Վարքով տխուր, հողագործ:



Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ի Գ Ա Ն Գ Ա Տ Ղ

Ես քեզ սիրի, որ դու ընծի չը թարկես,
Եթէ թարկես՝ հոգով մարմնով խարկես,
Անիծեմ, տաս տարի տեղումդ պարկես,
Եօրդանի մէջ տնքայ կողերդ, աղջիկ:

Ում հետ էլ որ երթաս՝ հետդ չվարւի,
Պսակւելուդ օրը՝ քօղքդ սև կարւի,
Հօրդ տունն ու դուռը սև քարով շարուի,
Սխ ու վախով մնայ ախպէրդ, աղջիկ:

Մօրդ լեզունն ուռի, բերանը կապւի,
Քառասունն օր տանջւի՝ հոգին չը քակւի,
Ընծնէն դայրի հետդ ով որ պսակւի,
Իրեք օր չվայելէ սէրդ, այ աղջիկ:

Զգտնես խամ կտաւ էնես արխալուդ,
Լէն բօլ աշխարհի մէջ օրըդ անցնի սուդ,

Հացդ կորեկ էզնի, գարին հետ կուղ,
Օձի պէս սակաւի քս կերդ աղջիկ:

Ես մի խեղճ տղայ եմ էրի բեզ գիւման,
Աստուածածին էնի քո մօրդ դիւան,
Իր կենաց մէջ նա՛ չունենայ սաղ ջան,
Որ ինձ էրաւ տնից դարբէդար աղջիկ:

Պատճառն ինչ էր, որ չհաւանաք դուք ընձի,
Կարօտ էք դօվլաթի, փափա՞գ էք գանձի,
Առաջ խօսք տւողի լեզուն պապանձի,
Տանողդ չը տեսնի բու խէրդ աղջիկ:

Ալագեօզ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնում սէրդ,
Քեզի ինձնէն էրաւ քո քեաֆիր մէրդ,
Խնդրում եմ շատանայ վերքերդ, աղջիկ:

Ես Արմենակն եմ, գարդերով եմ կեցի,
Գիշերն եմ մտածի, ցերեկն եմ լացի,
Տասը տարի խաթրիդ ազապ մնացի,
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ աղջիկ:



ԹՇԻԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Թշւառ ժողովուրդ, մոլեռանդ գերի
Փթած, խարխլած, անյայտ ոյժերի,
Որ այնպէս թափով խոնարհել գիտես,
Խաչ ու մասունքի զօրութեանը տնտես:

Որ այնպէս յուսով կեանքիդ փրկութեան,
Գութ ես միշտ մուրում, մուրում յաւիտեան,
Դեռ չըզարթնեցիր դարաւոր քնից,
Յուսախաբութեան մռայլ ցնորքից:

Դու այնպէս խղճուկ կեանքի շուկայում,
Չեղբից ձեռք անցար լռիկ, անդադրում,
Բանտ ու արսորի դու տաժանակիր,
Եղսր հարազատ, հլու որդեգիր:

Բայց հերիք անարդ եսամոլ մարդիկ,
Շինեցին իրանց շահի խաղալիք,
Քո ցաւն ու քո բաղդ, թշւառ մուրացկան,
Միթէ այդ կեանքը սիրուն է այդքան:
Արփենիկ



Զ Ը Մ Ո Ռ Ա Ն Ա Ս

Եթէ փառաւոր դանլիճում նստած՝
Հարուստ և շռայլ խնջոյք վայելես,
Չլարճութիւնով ու բախտով լցւած՝
Դու չմոռանաս, որ եղբայր ունիս:

Եթէ զիտութեան տաճարների մէջ
Բարձր մտքերով դու ոգևորւիս,
Բորբորւիս ուսման կրակով անշէջ—
Դու չմոռանաս, որ եղբայր ունիս:

Թէ մեծ հանճարիդ ոյժը կամենաս
Ցոյց տալ աշխարհին, որ փառաւորւիս,

Մտքերով տարւած՝ դու չմոռանաս,
Որ խեղճ ու քաղցած եղբայրներ ունիս:

Թէ բարձրաստիճան և մեծ իրաւունք
Քեզ պարգևեցին հօրքն աշխարհի՝
Դու չմոռանաս երջանկութեան մէջ,
Անհուն ցաւերը քո եղբայրների:

Ե. Ղ.



ԵՍ ՉԵՄ ՈՒՋՈՒՄ

Ես չեմ ուզում շողոքորթել
Ունեւորին իմ երգով,
Դափնու համար քծնել, պաշտել
Ապրել, նրա փշրանքով:

Ես չեմ ուզում նա ինձ պզւի
Եւ գրչակը վաճառւած,
Հարուստ կինը երգս գովի
Տոփ կեանքի մէջ խոր թաղւած:

Ես չեմ ուզում նա ինձ կարգայ
Եւ պատանին անուսում,
Ծախու հանած սէրը շուկայ
Ձեխ օրիորդը փափկասուն:

Թող չկարգայ երգն իմ ոչ ոք,
Հառաչանք է նա սրտի,

Մի թշւառի անվեջ բողոք,
Ոչ գովքերը հարստի:

Նա արցունք է տանջւած մարդու
Հացի կարօտը խեղճի,
Դառն անէծքը բոբիկ մարդու,
Եւ կուրծքը ցամքած մօր:



Ո Ս Կ Ի Ն,

Վաթսուն տարիս անցաւ հազիւ հասկացայ,
Աշխարհի Աստուածը՝ միակ պաշտելին,
Ամենահօրը, էլ ուրիշ չը կայ,
Հոգու-մարմնոյ փրկիչ անեղծ—անյեղլին:

Նա է իշխում այժմ համայն մարդկութեան,
Նրան չի հասկանալ յիմարն ինձ նման,
Գոյնը դեղին, ձայնը քաղցր դուրական,
Ամենագեղեցիկ, փայլուն գովելին:

Այսուհետև նա է իմ դաւանանքը,
Նրանով փրկվում է պատիւը, կեանքը,
Նա է կազմում ընդհանուրի բաղձանքը,
Միակ խնկարկելին, միակ պաշտելին:

Այդ ծանր մետաղն է աշխարհին տիրում,
Ծեր թէ մանուկ, խելագարն էլ է սիրում՝
Ինձ արժան է ասեն, ընդ է հասկանում—
Ի՞նչ անխելքն է եղել աշուղ Ջամալին:

*
* *

Զարկ, զարկ, այ վարպետ, շէկ կայծեր թոցուր
Կռանէ սալըդ, ձև տուր մետաղիդ.

Քամի տուր փուքսիդ, թորերդ ուռցուր,

Արծարծէ բոցը հանգած հընոցիդ:

Ժանգոտ, բիրտ երկաթըն «օճախը» խրէ

Անձև երկաթիդ բերան շինէ սուր,

Դժնխքի բոցով բարկ մետաղը ճրգմէ

Ձև տուր պողպատին, կոփէ փայլեցնուր:

Չար բախտն երկաթին կապեց մարդուս կեանք,

Երկաթն է վճռող սև ու կարմիր օր.

Առանց երկաթին արդարն անվրտանդ

Ե՞րբ անցաւ երկրիս ուղին նենգաւոր:

Այդ նենգ ուղին փշոտ սև մթին

Յատակազիծը արիւնն է գծած

Խեղճ ու զըրկեալին, ստրուկ-գերիին

Իրաւունք վճռող երկաթը մնաց:

Ուժով զարկ, վարպետ, կայծերդ թոցուր

Հանգած հընոցիդ մէջը կատաղի

Քամի տուր փուքսիդ թորերդ ուռցուր

Արծարծէ բոցդ հանգած հնոցիդ:

Ա.վ.օ




ՉԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ

Չախորդ օրերը ձմրայ նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան կուգան ու կերթան,
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար.
Որպէս յաճախորդ շարւեշարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանուշակ, վարդ բալասան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանապան կուգան ու կերթան,
Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը զէպի ազօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան
Աշխարհը հիւրանոց է, Չիւան, մարդիկը հիւր են,
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան:



ՍԽԱԼ ԽՈՐՀՈՒՐԴ

Շատ անգամ շատերը խորհուրդ են տալիս,
Ուրախ բան ստեղծել, ուրախ երգ երգել,
Բայց մեր սիրտը տխուր, այն է դուրս գալիս,
Ինչ որ կեանք է ծնում, ինչն է մեզ վայել:

Ուրախ երգը շինծու, ծիծաղ դուրս կգայ,
 Ինչ որ գրե՛րք միշտ ան ու վախ դուրս կգայ,
 Տասը տողից, հարիւր աւանդ դուրս կգայ,
 Մեր բաժինն է լալ ու ողբալ մըմնջել:

Սգի տունը, ուրախանալ չի լինի,
 Ասել, խնդալ դուարճանալ չի լինի,
 Տաղեր ասել նաև պար գալ չի լինի,
 Բանական է, պէտք է տխրել, մտածել:

Ջամալի մեր ցաւն է աշխարհին յայտնի,
 Կոտորածին, գաղթին բնաւ վերջ չունի,
 Հայութիւնը ուրախ երգեր չի ծնի,
 Գանի այս օրին ենք, կեանքը չէ փոխուել



ՔՐԴԱՅԱՆ ՄԱՐՇ

Լճ, լճ, լճ—Սիփանա սէգ սարի վրայ,
 Կարիճները շտապով գալիս են միանում,
 Այնտեղ անվախ որդիք հսկայ լերան վերայ,
 Զէնք ու զրահի են ընտանում:

Ահա վառուում են զինուում,
 Մանձակո՞ծ ձի հեծնում անհամբեր,
 Արիւնը նրանց բորբոք սրտի մէջ եռում,
 Թռչում, անցնում անհամբեր,
 Զերթ Սիփանայ պինդ քամիս,

Մլանում են դէպի ցած,
 Դաշտի միջին թշնամուն պատահում են
 Եւ մեծ վրէժ անմոռաց—
 Ահեղ կռուում նրանից առնում,
 Հատու սուսերը հանում,
 Ցեղապետին սպանում,
 Եւ գերթ կիզող հուր վառում:

Այժմ բոլոր ցեղն օտի կանգնած՝
 Թշնամու դէմ մահառիթ մարտի է կանչում—
 Արեան մեծ վրէժը թշնամուց պահանջում,
 Եւ թշնամին պարտուած՝
 Թողնում փախչում սարէ սար՝
 Յետ ձգելով մեծ աւար:

Արիւն թափեցին, արիւնի փոխանակ
 Արիւն քամեց ծարաւի սուսեր,
 Նրան յագեցած դրեցին պատեան,
 Ելանում են ի լեռ—սէգ Սիփանն ի վեր,
 Սէգ Սիփանայ կանաչ գլխին յաղթող
 Ցեղն անում է սհ, մեծ խնդում,
 Ամպերի թանձրութեան միջից
 Սիփանն ամբողջ է թնդում.
 Էլ չեն գալ մեզ մօտ թշնամիք
 Սուր տեսան մեր պողվատիք:



ՄԱՆԱՆԻ ԵՐԳԸ

Արի Մանան արի գնանք մեր տունը,
Գիշեր ու զօր կարաւ աչքերիս քունը,
Եւր, եւր, Մանան ջան եար,
Չանան ջան եւր,

Մանանիս հայրիկը չըլտըր դասալ է,
Ինձի Մանանիս քով էրթալ եասարէ,
Եւր, եար Մանան ջան եար,
Չանան ջան եար:

Մանանը վերէն կուգար շալկինը ժախ էր,
Ոսկէթել մագերը թիկունքից կախ էր,
Եար, եար, Մանան ջան եար,
Չանան ջան եար:

Երկինքը ամպել էր, գետինքը թաց էր:
Մանանիս ծըծերը կիսէն հետ բաց էր,
Եար, եար, Մանան ջան եար,
Չանան ջան եար...

Գիշերը դուրս էլայ ինչ անուշ թօն էր,
Կանգնած մայիլ էլայ Մանանս հոն էր,
Եար, եար, Մանան ջան եար,
Չանան ջան եար:

Գիշերը դուրս էլայ ոտքս բոբիկ էր
Էրծաթէ բամբարը մէջքիս գօտիկ էր
Եար, եար, Մանան ջան եար.
Չանան ջան եար...

*
*
*

Խուճար պառկել երես բաց,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ,
Հաճին եկաւ խելը գնաց,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ.
Հէյ, հէյ լաւն է, հէյ հէյ լաւն է:

Աչքդ լոյս հաճի աղա,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ,
Թոռներուդ հալաւ արա,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ.
Հէյ, հէյ լաւն է, հէյ, հէյ լաւն է:

Աշնան բացւեց նոր լալա,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ,
Խուճար բերաւ ջուխտ բալայ,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ.
Հէյ, հէյ լաւն է, հէյ, հէյ լաւն է:

Հաճոնց դուռը զալդրմայ,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ,
Աշնան թոխլին զաւուրմայ,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ,
Հէյ, հէյ լաւն է, հէյ, հէյ լաւն է:

Մտիր անէն սինին բեր,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ,
Հօրմէդ, մօրմէդ իզին առ,
Հոպ, հոպ հոպըտը դմբայ.
Հէյ, հէյ լաւն է, հէյ, հէյ լաւն է:



Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ

Հողագործ գարունն եկաւ, արտերդ մնաց ցանելու,
Ջանք արան շուտով տանես լծկանդ խամից հանելու,
Կարծեօք թէ դու փող ունես, քեզի սերմացու գնելու,
Երկաթէ խոփը սրէ, գնայ հողերդ վարելու:

Արթնացիր իմ հողագործ, ժամանակը չէ քնելու
Քարմաններդ պատրաստ է, բարդոցի կեմեր մանելու:

Քուռ մաքիդ խորհուրդները, թշնամիքը շուտ լսեցին,
Մէկը տասը շինելով, գնացին այլոց պատմեցին,
Ոչ թէ միայնակ քեզի, այլ և որդուդ բամբասեցին,
Դրացիքդ քեզնից շուտ, իրանց գործը սկսեցին:

Չարկամ մարդիկները, կուզեն որ դու միշտ ծոյլ մնաս,
Չեն ցանկայ որ իրանցից շուտով զարթնիս գործի գնաս,
Ջանք արան, որ ժիր լինիս, ընկերիցդ յետ չըմնաս,
Իմ խօսքերս թող լինին, քեզի համար անմոռաց դաս:

Մի սգար, իմ սիրելիս, ինչո՞ւ են քու աչքերդ թաց,
Աշխատիր որ ձեռք բերես, քեզի համար մի պատառ հաց,
Որ չասեն հողագործի չարչարանքը ի դուր գնաց,
Կամ թէ չէ Ֆիզահու պէս, գրպանը խիստ դատարկ
մնաց:




Յ Ի Մ Ա Ր Մ Ա Ր Դ.

Յիմարին որ հազար անգամ խրատ տաս,
Ոչինչ չի հասկանայ, գլուխը հաստ է.
Սյրպէսն է ազգի մէջ մի մեծ պատուհաս,
Որովհետև տուն քանդելու պատրաստ է:

Ամեն անգամ մարդոց մեծ մնաս կուտայ,
Կը խօսի խելքէն դուրս ինչպէս երեխայ,
Չի մտածէ իւր խօսած բանի վերայ,
Ըստորում նա, եզի նման գրաստ է:

Ընդունակ չէ գեղեցիկ խօսք խօսելու,
Ականջ չունի բարի լուրեր լսելու,
Քաղցր լեզուով շատ մարդիկ համոզելու,
Ֆիզահ, միթէ նորա համար այդ փաստ է:



ԱՂՂՈՒԽՍ ԿՈՐԱԻ

Աղլուխս կորաւ ձեր դուռը,
Սըտէս դուրս չի գայ մրմուռը,
Բաղդն ինձի գցեց էդ կուռը՝
Անուշ տղայ տուր աղլուխս:

—Քու աղլուխդ ինձ մօտ չկայ,
Ես կը երդուիմ, Աստուած վկայ»,
Ով գտել է թող բերէ տայ—
Սիրուն աղջիկ, քու աղլուխդ:

— Աղլուխս եարի բաշխած էր,
 Այ աբրեշումով նաշխած էր,
 Պատկերս վրէն բաշած էր,
 Անուշ տղայ, տուր աղլուխս:

— Գու վարմուքիդ ինչ անուն տամ,
 Գիչ է մնում որ անվերջ լամ,
 Մօտս լինի՝ բերեմ կուտամ—
 Սիրուն աղջիկ, բու աղլուխս:

— Մուժտէդ կուտամ աղլուխս բեր,
 Դու ամեն օր կեր կաթի սեր,
 Ինձի քարերուն մի խփեր,
 Անուշ տղայ, տուր աղլուխս:

Սէրդ ընձնէն վաղուց է սառեր,
 Տուած խօսքէդ ետ ես դառեր,
 Հաւատա՛, որ ես չեմ առեր,
 Սիրուն աղջիկ, բու աղլուխս:

— Ի՞նչ ջուղաբ պիտի տամ մօրս,
 Սիրտս կտրաւ ընկաւ փորս,
 Խաբար տարէք մեծ ախօրս,
 Անուշ տղայ, տուր աղլուխս:

— Աղլուխիդ տեղը չեմ գիտեր,
 Ինձի մի անուշ եար պիտեր,
 Աջաբ տեսնես ո՞վ է գտեր:
 Սիրուն աղջիկ, բու աղլուխս



ՍԻՐՈՅ ՏԱՂԵՐԻՑ

Առաւօտեան ելամ, աչքս ընկաւ երեսիդ,
 Էլ չը մնաց ինձի վերա հալ, փարի
 Տարար խելքս գլխէս. արիւր սարսարի,
 Մարդիկ ժողվիր գլխիս, արիւր դալ, փարի:

Ասլըդ խաբար անսիմ, ըշկամ տիւնդո՞ր ես,
 Նախշուն շամամայ ես, կարմիր խնձոր ես,
 Էշխիդ ալաւը ինձ էրեց մնձորեց,
 Էլ չմնաց ինձ վերայ հալ, փարի:

Խօսքդ որ կտաս իլղարէդ մի դարձ,
 Դեօշդ ինձ դեօշակ, թիւրդ գլխիս բարձ,
 Զիլֆերդ ետ արա՛, մէ երեսդ բաց,
 Տըսնամ ջաւահիր ես՝ եօխսա լալ, փարի:

Սալմաստցի Յարութիւնն եմ, ջիւմլէին դաստան,
 Օրս էլ անցուցիմ քիւլի բուրդստան,
 Իմ ու քոնը մնաց վերջին դատաստան,
 Մինչ Գրիստոսն իկայ ուռնէյկալ, փարի:



ԷԼԻ ԵԱՐԻՍ ԵՄ ԳՈՎՈՒՄ

Սիրուններ, միք նեղանայ
 Որ ես իմ եարին եմ գովում,
 Դուք իմ դարդըս չէք իմանայ
 Էնդուր նրան եմ գովում:

Թէկուզ լինէք աղանեակ
Թևիկներդ լայն բաց արած.
Ճախրելով վեր բարձրանաք
էլի նրան եմ գովում:

Թէկուզ լինէք սիրամարդ
Ձեր գեղեցիկ փետուրներով,
Կամ անուշիկ երգող սո՛նակ
էլի եարիս եմ գովում:

Մագերդ ոսկէթել է
Ունքերդ նորածին լուսին՝
Աչքերդ փայլուն աստղեր,
էլի եարիս եմ գովում:

Որքան կուզէք գարդարւէք
Այլ ու եշիլ գոհարներով.
Եարս սև՝ դուք ալ հագէք
էլի եարիս եմ գովում:

Ամէն մէկդ մէկ մէկ փէրի
Իմ առաջս ման էք գալի
Բայց ինձի չէք գրաւի
էլի եարիս եմ գովում:



* * *

Թո՛իր իմ սէր սրտիս խորքից,
Գնահ գտիր սիրուհուս,
Նրա քնքոյշ սրտի խորքում,
Դի՛ր կրակը, իմ սիրուս:

Եւ նա կզգայ այն ժամանակ,
Թէ ի՛նչ է իմ տանջանքս,
Զօր ու գիշեր միշտ հանապազ,
Մաշու՛մ է իմ խեղճ կեանքս:

Կամ իմ նախշուն աչքերիցս,
Թուէք շանթ ու սլաքներ,
Չանթէք կուրծքը իմ սիրուհուս
Բացէք սիրոյ խոր վերքեր:

Այն ժամանակ ո՛վ դու անգութ,
Իմ վիճակիս կը խղճաս,
Թէ ի՛նչ աղի աբտասուքներ,
Թափել եմ ես հանապազ:



ԹՈՂ ԵՐԳԷ ԲԼԲՈՒՆ

Թող երգէ բլբուլ Մշու դաշտերում,
Թող վարդեր բացւին Սասնոյ լեռներում,
Թող մեր թշնամիք սարսեն, սարսափեն,
Գազան քիւրդերն ճաքեն, տրաքեն:

Մշու դաշտերը ծաղկունքով բացւած,
Հայու սերունդը կը պահէ Ասուած,
Ինչքան որ կուզեն թշնամիք թող գան,
Սասնայ լեռներէն ի՛նչ պիտի ստանան:

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՛վ կը վախենայ,

Թող հայ աղջիկ եողէ վառվառուն,
Սուր զէնքը ձեռքին շարդէ քիւրդերուն...
Թ. Ս.



Թ Ո Ղ

Թող ինչպէս ընկել եմ, այնպէս վեր կենամ,
Դիմակաւոր ընկեր խրատդ պէտք չէ,
Թող իմ հօրս, պապուս ճամբովը գնամ,
Հաւատ ունիմ, քո նոր հաւատդ պէտք չէ:

Այն գունով կը մեռնեմ, ինչով որ ծնայ.
Ձեռք մի տար իմ վէրքիս, թող այնպէս մնայ,
Մի կտրատիր ծառիս ճիւղերը, գնա,
Վնասատու կոպիտ մկրատդ պէտք չէ:

Միայն դու Ջիւանուն եղբայր անուանէ,
Միւս ծրագիրներդ մտքիցդ հանէ,
Իմ փլփած տունս ինձ բաւական է,
Քեզ լինի, բարեկամ, պալատդ պէտք չէ:



Ղ Օ Շ Մ Ա Յ

Երեք բան կայ մարդու հոգոյն հաւասար,
Կայքը ու կրօնը, նաև պատիւը,
Իրանց սիրոյն գոհ են տարել ըիւր հազար,
Կայքը ու կրօնը նաև պատիւը:

Կայք է մարդկանց գոյութիւնը—ապրուստը,
Մրանով է ճարոււմ հաց—հագուստը,
Այս երեքով կ' ապրի աղքատ—հարուստը,
Կայքը ու կրօնը նաև պատիւը:

Կրօնը՝ տուել է անթիւ—նահատակ,
Պատուի համար մեռնողներ կան շատ տեսակ,
Կեանք կը տան երեքն էլ մեզի շարունակ,
Կայքը ու կրօնը, նաև պատիւը:

Ջամալի, նա մարդ չէ, ով չունի պատիւ,
Կրօն չունեցողի հոգին չէ ազնիւ,
Երեքն էլ յարգուած են փորձերով անթիւ,
Կայքը ու կրօնը, նաև պատիւը:



Յ Ո Ի Ս Ո Յ Ն Շ Ո Յ Լ

Տխուր աչքեր, բաւական է արտասուէք,
Մօտ է օրը ուրախութեան—ցնծութեան,
Քանի սգաս վշտալի սիրտ յուսաբեկ,
Յուսապարար օրը հասաւ փրկութեան:

Բաւ է շմես խղճուկ գլուխ երերուն,
Մտածելով քո օրերդ անկայուն,
Ո՛վ դու, բերան պատրաստ եղիր հաստատուն,
Անէծքներդ՝ պիտի փոխուի օրհնութեան:

Համը լեզու, պիտի խօսես դու արձակ,
Մտքիցդ անցած ամէն բանը համարձակ,

Անգործ ձերբեր, պիտի գործէք շարունակ,
Նորից շինէք աւերակները, բուրաստան:

Իողգոջ ոտքեր էլ չէք շրջիլ մոլորուած,
փուշ ու տատասկ շուտով կլին մաքրուած,
Ջամալուս հետ ողջ անդամներ: անկասկած,
Պիտի ապրիք, հոգով, մարմնով յաւիտեան:



Ի՞նչ ԱՆԵԼ ՀԱՅԻՆ:

Անդազար աշխատել ու առաջ դիմել,
Մեր ազգին փրկուելու ուրիշ ճար չկայ,
Անընտհատ պատրաստուել, ինչպէս բաջ- գործել,
Մենք մեզի պաշտպանել, էլ հնար չկայ:

Գիշեր—ցերեկ մի ելք մտածել պէտք է,
Սէր—միութեան ոգի: արծարծել պէտք է,
Ամէն խաւերու մէջ տարածել պէտք է,
Այս ուղղութեամբ գնալ, էլ դադար չկայ:

Ամէն մէկ հայ դարձած մէկ սիրտ մէկ հոգի,
Մեր ազգի զարգածման տքնի աշխատի,
Ջամալ ամէն տանջանք կարծեմ զուր կանցնէ,
Թէ՛ միութեան հոգի—գաղափար չկայ:



Ս Ա Մ Ա Յ Ի .

Ինչու պէտքէ ադամանդը: Թէ նրան հասկացող չկայ,
Ոսկու հանքն էլ դեռ ոչինչ է, եթէ մաքրող- գտող չկայ,
Ժամանակը այնքան փոխուեց, հաստ ու բարակ մէկ գէն
դառձաւ,
Հազար անգամ, հազար ափսոս, արժանիք ճանաչող չկայ:

Ամէն բանի իրա յարմար, պէտք է յարգել կամ անարգել,
Բայց ի՞նչ օգուտ, վատին ատող, լաւին ընտրող-յարգող չկայ,
Արդարութեան-ճշմարտութեան, միայն անուշը յայտնի է,
Իսկ գործի մէջ չէ երևում, այդպէս շարժուող--գործող չկայ:

Ամենալաւ բարի մարդը, ամէն ազնիւ անձնուէրները
երբեմն յուսահատվում է, եթէ գնահատող չկայ.
Ջամալ քանի մեր աշխարհը խաւարի մէջ խարխափում է,
Գանցնին այսպէս շատ տարիներ, ուղիղ առաջնորդող չկայ:



* *

Պարզիւ աղբիւր, պարզիւ քեզնից ջուր տանեմ.
Պարզիւ, պարզիւ, բէկի տղին ջուր տանեմ:

Աղբիւր, գիտե՞ս քիւրդը մեզի ի՞նչ կանէ,
Կը կողոպտէ, կը չարչարէ, կսպանէ:

Կար ժամանակ, որ մենք էլ ազատ էինք,
Մեր սեփական թագաւորներ ունէինք:

Գահ ու փառքից, ազատ կեանքից զրկեցինք,
Արիւնարբու թշնամու ձեռք մատնեցինք:

Դէհ, շուտ պարզիր, բէկի տղին շուր տանեմ,
Պարզիր, պարզիր, խան Մուրադին շուր տանիմ:



Ի Ր Ա Ի Ո Ի Ն Ք

Թող ես մշակ լինիմ, դու եղիր իշխան.
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի,
Թէ կուզես հաշտ ապրենք, բարի հարևան,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Անհատական իրաւունքս է ամեն ժամ,
Իմ պարտքն է աշխատեմ, ոչ ոքի չը տամ,
Թէ կուզես իրար հետ մնանք բարեկամ,
Պատւիս ու կրօնիս հացիս մի դիպչի:

Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ,
Պատիւ չեղած տեղը հաց չը կայ առատ,
Կը ցանկանաս որ չանեմ քեզանից գանգառ,
Պատւիս ու կրօնիս հացիս մի դիպչի:

Բնու չեմ նախանձի քու ձօխ սեղանին,
Քու ոսկուն, արծաթին, քո գանձարանին,
Այս երեքով կապրի աշղ-Ջիւանին,
Պատւիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:



ԵՐԵՔ ԶԱՅՆ

Երեք ձայն կայ շատ է սիրում աղանջս.
Ոսկիի ձայն, սիրունի ձայն ջրի ձայն,
Այդ երեքն են մշտական իմ պահանջս
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Ջուրը կեանք է, ոսկին զօրաւոր յաղթող,
Սիրունից կը լսես կենսատու ներբող,
Արդեօք մարդ կ'այ այդ երեքը չը սիրող,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Գրպանդ ունենաս ոսկով լի քսակ,
Մօտդ մի չքնաղ կոյս, դիմացդ գետակ,
Իրեքին էլ լսես գիշեր ժամանակ,
Ոսկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:



Դ Ի Վ Ա Ն Ի

Մինչև երբ ինձ մոռանաս, բաղգս անիրաւ, մինչև երբ,
Մինչև երբ աշխարհի մէջ կրեմ վիշտ ու ցաւ, մինչև երբ,
Մինչև երբ ազգիս հոգսերը, ծանրանայ հոգոյս վերայ,
Մինչև երբ աղանջներս լսեն վատ համբաւ, մինչև երբ:

Քանի մէկ խղճուկ հայիս, չը թողնին դադար, քանի մէկ,
Քանի մէկ անգուլթները տանջեն չարաչար քանի մէկ,
Քանի մէկ միսս ծամեն անկուշտ հայտկերները,
Քանի մէկ ինձ պառակտեն զազանից վատթար, քանի մէկ:

Ի՞նչ անեմ թշնամիքս են ուժեղ ահարկու, ի՞նչ անեմ,
Ի՞նչ անեմ ինձ չեն թողնում. ազատ խօսարու ի՞նչ անեմ
Ի՞նչ անեմ անմեղ տեղս, մեղաւոր են դուս բերում,
Ի՞նչ անեմ խեղճ Զամալիս, չունիմ ես լեզու ի՞նչ անեմ:



Բ Լ Բ Ո Ւ Ի Ի Ե Ր Գ Ը

Նպատակիս գէթ մի մասը կատարւէր,
Եարալի բլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնեմ.
Եար արի, տուն արի, շուտ արի բլբուլ,
Իմ սարերի գիւլն եմ:

Ախ իմ դարդս շատացել է չեմ կտրող,
Եարալի բլբուլ եմ,
Դարդի ձեռքից ո՞ր ջուրն ընկնեմ ազատւեմ,
Տուն արի, շուտ արի, եարալի բլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:

Ա՛խ, անբախտ հայ տղին Տէր իմ, դու խղճայ,
Եարալի բլբուլ եմ,
Մի թողնիր թուրքի գնդակով զուր գնամ կորչեմ.
Եար արի, տուն արի, շուտ արի բլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:




ԴՈՒ ԶՈՎ ԽՆԴՐԵՍ...

Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ,
Ե՛կ, մի դողար՞ մօտեցիր հոս,
անլաց աչօք դիտէ զորդիդ,
Ու իւր վէրքերն արիւնահոս:
Թուրքաց մայրեր թող լան ու դուն՝
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն օրբանիս մէջ,
Կակուղ ձեռքով փայփայելով,
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իբրև հրեշտակ նւագելով:
Զիս հանգչեցուր ի հող, ու դուն՝
Ուրախ լուրեր...

«Նորեկ որդւոյս կենացն արև
Զեզի համար փայլի հայեր»,
Այսպէս յայնժամ դու կերգէիր,
Օրօրոցիս նստեալ քովեր:
Անոնց համար շիջաւ, ու դուն՝
Ուրախ լուրեր...

Վերջին համբոյր մ՛ տամ քեզ, մայրիկ,
Հատուցանես զայն սիրելւոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր գող
Ուր արդ կիջնիմ մ՛ ծոցն անլոյս.
Խաչ մ՛ տնկէ վրաս, ու դուն՝
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:



ԿԵՂԾ ԲԱՐԵԿՍՄՆԵՐ

Նեղը ընկած օրը մարդ կը հասկանայ,
Իրա հաստատ բարեկամն ու թշնամին,
Աջող, ուրախ ժամանակը, միշտ շատ կայ,
Կեղծ սիրելի, ոուտ ցաւակից ամենին:

Ընկած մարդը երբէք բարեկամ չունի,
Վերան հաշող միտը ծամող շատ կլլի,
Ասած է «խեղճ ծառը երբ որ վայր ընկնի —
Ամէն մարդ վազում է վերցրած կացին»:

Մենք այն օրին ընկանք, արժող—չարժողը,
Մեզ վերայ է խօսում, մեր լակ լակողը,
Երեկ—մէկէլ օրը մեզնից բաշտողը,
Զամալ այսօր գուզէ նստել մեր գլխին:



Ե Ա Ն Ը Ղ Ե Ղ Ա Ն Ա Կ

Երկու բան կայ մարդու համար շատ քաղցր,
Հայրենի հողը և մայրենի լեզուն,
Երկուսից զրկուածի կեանքն է շատ ծանր,
Հայրենի հողը և մայրենի լեզուն:

Հայրենի սուրբ հողը մարդուն կեանք կը տայ,
Եւ մայրենի լեզուից հոգի կը ցոլայ,
Ո՛վ սրանց, չէ սիրում նա է անզգա,
Հայրենի հողը և մայրենի լեզուն:

Զամալուս բռնութեամբ քարշում տանում են,
Սրտիս մէջը օտար սերմեր ցանում են,
Մէկը վաղուց կորած, մէկն էլ խլում են,
Հայրենի հողը և մայրենի լեզուն:




Տ Ի Բ Է Ի Թ

Ազդ իմ, որքան նկուն մնաս,
Սիրտս քեզնից չի գատուի,
Հազար տեսակ շարձարանք տաս,
Սիրտս քեզնից չի գատուի:

Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թէկուզ դրախտն էլ ինձի տան,
Սիրտս քեզնից չի գատուի:

Քեզնով եմ ես երջանիկ,
Իմ սիրելի, իմ անուշիկ,
Ծոցիդ մէջը հանգչեմ մայրիկ,
Սիրտս քեզանից չի գատուի:

Զիւանին եմ քեզ բարեկամ,
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,
Հնդկաստանին էլ տէր դառնամ,
Սիրտս քեզանից չի գատուի:



* *

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,
Բայց միմիայն կուսին աչքերը,
Ոչ մի բերկրանք չէ ինձ համար:

Ինձ համար չէ կենաց փառքը,
Ինձ համար չէ երջանկութիւնը,
Բայց միմիայն կուսին աչքերը (կրկնել)

Ինձ համար չէ արևի ծագելը,
Ինձ համար չէ թռչունի թռչելը,
Բայց ինձ համար կուգայ ժամը
Կերթամ թշնամեաց պատերազմ:




Շ Ր Ձ Ա Ն Ը .

Հազար փորձանքներից, պահում է հեռու,
Մարդուն, միջավայր—յարմար շրջանը,
Գործածել չափաւոր ու քաղցր լեզու,
Կը սորվեցնէ, բարի—արդար շրջանը:

Ծնողներից սովորում է երեխան,
Այլև ընկերները ուղղութիւն կը տան,
Բնաւ չար չի ծնուիլ մարդը բնական
Նրան կը փչացնէ միշտ չար շրջանը:

Ջամալի մարդը իւր գործով չափվում է,
Խելօքը սխալուի, շուտ սթափվում է,
Երկաթի պէս կամքի տէրն էլ խաբվում է,
Ներգործում է միշտ անդադար շրջանը:



Բ Լ Բ Ո Ի Լ

Գնա բլբուլ մեր աշխարհից էլ դու այստեղ մի երգիր
Մեր օրը սև մեր կեանքը ցաւ, էլ այս երկրում մի երգիր:

Տանջւած սիրաբ անուշիկ երգից քրքրվում է խորանում:
Սրտի վիշաբ քո երգերից փրփրում է լեռնանում:

Գնա բլբուլ մեր աշխարհից գնա երգիր այլ երկրում
Ասա այստեղ որ մեր վարդից արեան թարմ հոտ է բուրում

Որ ողբաձայն մրմնջացող վտակների հոսանք են
Միանում են արեան շիթեր առաջ շարժում մուկգին

Որ ծաղկազարթ հովիտներից մահւան ցուրտ հոտ է փչում
Որ մեր երկրում կանաչ դաշտերն իսկոյն կարմիր եններկում:

Գնա պատմիր որ դու տեսար այրիացած մի երկիր
Մարեր ձորեր կարմիր հագած արիւնագարդ մի երկիր
Ախ ջան բլբուլ էլ մի կանգնիր գնա պատմիր աշխարհին
Մեր ցաւ ու հոգսն վիշտն ու թախից մեր օրերը դառնագին
ԺԻՐԱՅԻՐ.



ԱՆԻՐԱԻ ՉԿՆՈՒՄԸ

Անիրաւ վատ ձկնորսը, մտաւ գետը որսալու.
Պաշարելով ամբողջ գետը, ուզեց բոլորը պարպելու.
Քայց չէր տեսած գետի ափին, մի ահագին վիշապ կար
երբ որ տեսաւ քաջ վիշապին, սկսեց նա փախչելու:

Այդ ձկները շատ քիչ էին. չունէին տէր տիրական
Մնացել էին խեղճ ու մոլոր, յուսահատուած անպաշտպան
Յանկարծակի մի լոյս ծագեց, վիշապն հասաւ օգնութեան,
Երկնքիցը կրակ թափեց, չարժանացաւ կուլ տալուն:

Այդ խեղճերի սրբավայրը կոտորեցին քանդեցին
Բագում մարդով մօտեցան աւերեցին վառեցին
Չէին կարծում թէ յետ տալ կայ գողացան ու թալանեցին
Կէս ճամբայ մնացին չը կարողացան տանելու:

Երգիչ Սիրաթ քաջ վիշապը դար ու կէս շարունակ
Տարաւ յաղթութեան պսակը, թափելով անշէջ կրակ
Նրանով էր մեր Կործերն յանկարծ դարձաւ աջողակ
Այնուհետև սկսեց մէկիկ մէկիկ յետ տալու:



ԼԱՅ ՏԱՐԱԲԱՂԻ ՕՐԵՐԴ

Լաց քո խեղճ գլուխը բաց էդ ձեռներդ,
Տնը հողիդ անտէր ողորմելի հայ,
էլ ո՞ւր ես դնում գլխիդ չը տալիս վայ
Վաց մեռիր էստեղ, թող քո ոսկերքն էլ:

էս սուրբ հողումը կարենաս թաղել
Որ մարմինդ էլայ էս աշխարհումը,
Քո թագաւորաց հետ ու միջումը
էս տեղ դինջանայ, չունքի քո աչքը,
Կարօտ մնաց տեսնի քո ազգի փառքը:

Նրանց սուրբ հողն էլայ թող երեսդ ծածկի,
Նրանց կոխած թուփը քո գլխիդ ծաղկի,
Թողէք սրբազան սրբազան նախնիք մեր հօրը,
Չեր սուրբ երեսին հող լինիմ մէկ օր:



Ե Ր Գ.

Երբ հեռացայ հայրենիքէս՝ դառայ ես մի խելագար,
Մի մասնաւոր վէրբ ունէի, նա մեծացաւ եղաւ սար,
Չունիմ հարազատ բարեկամ բոլորին եղել եմ վատ,
Խնդրում եմ քեզանից, Արարիչ, դու արա վէրբիս ճար:

Իմ մտերիմ լաւ ընկերս բոլորովին խոյս տուեց,
Ինձի երեխայ կարծելով մի աննշան յոյս տուեց,
Աւելացուց իմ վէրբերը խոր արմատից բոյս տուեց
Փութան ինձ. օգնութեան հասիր. սիրելի հարազատ մայր:

Ապերախտից ինչ կսպասես, նա չի տալիս քեզ օգուտ
Նա իրա դրպանն է քաշում, որովհետև է անգութ,
Տարիներով քաղցած մնա թշնամուն ինչո՞ւն է փոյթ.
Մի խափւիր նրանցից. սիրելիս, քեզ կը դարնեն քարէ քար:

Մնացել եմ խեղճ ու շւար, չեմ կարող օգնել ազգիս,
 Ոյժ ու գօրութիւնը գնաց երկաթի նման բազկիս.
 Գիշեր, ցերեկ, արիւն-արցունք թափում եմ ես, Միջագիւ
 Թագաւորաց թագաւորը ցաւերը ինձանից տար,



* * *

Դարդս լացէք, սարի սմբուլ,
 Ալւան-ալւան ծաղիկներ,
 Դարդս լացէք, բաղի բլբուլ,
 Ամպշող երկնուց զով-հովեր...

Երկինք-գետինք գլխուս մթնան,
 Անտուն-անտէր կուլամ ես,
 Եարիս տարան, ջանիս տարան,
 Հոնգուր-հոնգուր կուլամ ես...

Ախ, եարս ինձի հանեց սրտէս,
 Անճար թողեց ու գնաց...
 Սրտիս սաւղէն—խորունկ եարէն
 Անդեղ թողեց ու գնաց...

Դարդս լացէք, սարի սմբուլ,
 Ալւան-ալւան ծաղիկներ,
 Դարդս լացէք, բաղի բլբուլ,
 Ամպշող երկնուց զով-հովեր...



Ե Ր Գ

Հեռացիր ինձանից, օրիորդ,
 Էլ չեմ քեզի համակրում:
 —Պատասխանիր ինչո՞ւ, պարոն,
 Վիրաւորում ես անտեղի:

Վարդացիր դրկած նամակս,
 Գրել էի հայ տառերով,
 Պատասխանիր դու ինձ
 Օտար լեզուով ու բարբառով:

Միթէ դու ուրախ չես, որ ես.
 Քանի մի լեզուով կարդալ գիտեմ.
 Բարձր ուսում եմ ստացել
 Չը կարծես՝ թէ ես անմիտ եմ:

Ուսումնական կասեմ այն ժամ
 Երբ կը լինես դու հայի մօտ.
 Խօսէ քո մայրենի լեզուդ
 Որ ասեմ քեզ հայ օրիորդ:

Կեցցես դու հայ կտրիճ տղայ
 Մեղաւոր եմ ներէ ինձ,
 Էլ չեմ խօսի օտար լեզու
 Պիտի խօսեմ միշտ հայերէն:

Հիմա եղար դու երջանիկ,
 Դառար հայ ազգի պիտանի
 Միջագին եմ հիմա կասեմ,
 Նորոգւում է մեր խեղճ...

* *

Դու անցար, հերոս. դէհ հանգիստ քեզ քուն.
 Դու լուսադէմին մեռար լիայոյս,
 Դու ճամբորդ ժիր դէպ ազատութիւն,
 Երբ գեռ հեռո՛ւ էր, հեռո՛ւ՝ արշալոյս:

Տես ինչ հերոսներ՝ երգովդ ստեղծւած՝
 Փակեցին աչքերդ, որ հանգիստ առնուս.
 Հերոսների մէջ դու մեռար, հերոս,
 Մարմնով դառար հող, հողով արշալոյս:

Է՛րնէկ քո յոյսին, նա, որ չէր գողում,
 Երբ թոյլ անքում էր մեր ճահիճն անյոյս.
 Այն օձեր էին և գորտեր սողում,
 Քանզի գալու էր անշուշտ արշալոյս...

Սակայն երբ ազգդ թմբկով ու փողով
 Դէպ ազատութիւն երթայ սրտայոյս,
 Դու կգաս այնտեղ յարութեան շողով,
 Բայց ննջիր... գեռ կայ մինչև արշալոյս...
 ՀՈՒՐԷՆ



* *

Սուրբ օրօրանքով գաւակիս կերդնում,
 կերդնում իմ ծնողաց ես գերեզմանով,
 Ինձ կեանք պարզեող արզանդով կերդնում
 Եւ մկրտութեան սուրբ աւազանով:

Թող լինի վրկայ ինձ լեռոն Արարատ,
 Նոյեան տապանի ամուր պատւանդան,
 Եւ Արաքս գետի շուրջ անարատ,
 Որով կուռգւի մայր մեր Հայաստան:

Թող լինին վրկայք իմ անսուտ երդման
 Պարծանք հայութեան ազգաշէն նախնիք—
 Սուրբ Սահակ, Մեսրոպ, Ղևոնդ, Քաջ-Վարդան,
 Ողորմած Աշոտ, անըսփոփ Գագիկ...

Ազգիս սեղանի վրայ ես դրրի,
 Իբրև ողջակէզ իմ այս սուրբ ուխտին—
 Իմ ինչքը, կեանքը, վայելքն աշխարհի,
 Աւելի քան զայն՝ քաղցր իմ ամուսին...
 Քամաւ. Քաթիպա



* *

Յուսահատուել մեղք է ընկեր,
 Արիացիր, ոգի առ,—
 Նայիր, փայլեց հեռում լապտեր,
 Մենք էլ կառնենք շուտ դադար...

Արիացիր, սիրտ առ, ընկեր,
 Շարունակենք մեր ուղին,
 Լսիր կարծեմ՝ թէ գանգակներ
 Ղողանջեցին սարերէն...

Ահա բացւեց աղօթարան,
Վստահ, ընկեր, առաջ քայլենք,
Զինուոր ենք մենք ազատութեան
Եւ անփորձ տեղ կը հասնենք...



* *

Է՛հ, ջան հայրենիք, ինչքան սիրոււն են,
Սարերդ կորած երկնի մովի մէջ,
Զրերդ անուշ, հովերդ անուշ,
Միայն բալէքդ արիւն—ծովի մէջ...

Քու հողին մեռնեմ, անգին հայրենիք,
Ա՛խ, քիչ է թէ որ մի կեանքով մեռնիմ.
Երնեկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ...

Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ
Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն՝
Մենակ մի կեանքը թող ինձի պահեմ,
Էն էլ քու փառքի գովքը երգելուն...

Որ արտուտի պէս վեր ու վեր ձտխրեմ
Նոր օրուայ ծէգիդ, ազիզ Հայրենիք,
Ու անուշ երգեմ, բարձր ու զիլ գովեմ,
Կանաչ արևդ, սիրուն Հայրենիք...



* *

Ճամբէս արիւնի հետք թողեր կերթայ,
Արիւնոտ ճամբէս մեր թշնամու դէմ,
Խէթ օձը առաջիս ընկեր ու կերթայ,
Ու ազուաները հետս ճամբորդ են:

Զիս տխուր, տրտում, կերթայ անգիւման
Ա՛խ, նա էլ լաւ գիտէ, որ էլ յետ չեն դառնայ,
Դարգս թաղելու, ցրուելու կերթամ,
Դարգս վրէժով, ու էլ յետ չեմ գայ:

Է՛հ, միաք բարե մեր դաշտ ու սարեր,
Ուր քոյ ու քարեր մեր արնով ներկուաւ
Ինձ էլ չես տեսնի, իմ խեղճ, ազիզ մէր,
Ու գերեզմանս չես գտնի բնաւ,

Սիրուն օրերի, անգին ընկերներ,
Իմ տեղս պահէք, երբ գաք իրարքով:
Ա՛խ, եարիս ասէք, որ ես էլ չկամ
Որ լայ վրէս լայ անուշ աչքերով:



* *

Հազար բարով, հպարտ սարեր,
Թե եմ առեր՝ ձեզ կուգամ,
Արծիւներին ձէնն եմ լսել
Արծիւներին դէմ կուգամ:

Իմ հայրենիքի կապոյտ սարեր,
 Թշնամու շարք ձեր բոլոր.
 Դաշտ, անապատ, արնոտ գետեր,
 Արագը խոր ու բոլոր:

Հազար ձէնով, հազար սրտով
 Առիւծների հետ կուգամ,
 Հողիդ մեռնեմ, ազատ սրտով
 Իմ հայրենիք մէրիկ ջան,

Բարով ձեզի դարդ ու դուժան
 Բանձրիկ սարեր ու քարեր
 Հազար բարով, հող ու դուժան
 Ծովակ, ծմակ ու ձորեր:



Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Հայրենիքէս հեռացեր եմ,
 Խեղճ պանդուխտ եմ—տունն չունիմ.
 Ազիդ մօրէս բաժանւեր եմ,
 Տխուր-տրտում—քունն չունեմ:

Սարէն կուգաք նախշուն հաւքեր,
 Ա՛խ, իմ մօրս տեսեր չէք.
 Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
 Ախրը, բարև բերեր չէք:

Հաւք ու հովեր եկան կըշտիս,
 Անձէն դիպան ու անցան.
 Պապակ—սրտիս, փափագ—սրտիս
 Անխօս դիպան ու անցան:

Ա՛խ, բու տեսքին, անուշ լեզւին
 Կարօտցեր եմ, մայրիկ ջան,
 Երնէկ, երնէկ, երազ լինեմ,
 Թռնեմ մօտդ, մայրիկ ջան:

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
 Հողիդ գրկեմ, համբոյր տամ,
 Սրտիդ կըպնեմ վառ կարօտով.
 Լամ ու խնդամ, մայրիկ ջան...



ԵՐԳ ԱԼԱԳԵԱԶԻ

Սև մութ ամպեր ճակտիդ զիզան
 Դուժան հազար, Ալագեազ,
 Սըտուժս արև հէչ չի ծագում.
 Սիրտս էլ դուժան, Ալագեազ:

Չառ փէշերդ անցայ, տեսայ,
 Առանց դարդի մարդ չկայ,
 Է՛հ, իմ դարդս, ջան Ալագեազ,
 Իմ դարդիս պէս հէչ չկայ:

Է՛յ, Մանտաշի մարմանդ հովեր.
 Իմ դարդս որ ձերն եղնէր.
 Ձեր նուշ-անուշ ծաղկանց հոտը
 Թոյնի, տօթի կը փոխէր:

Է՛յ Մանտաշի նախշուն հաւքեր.
 Իմ դարդս որ ձերն էղնէր
 Ձեր էդ զառվառ, խաս փետուրներ
 Կը սեանային քանց գիշեր:

Է՛յ, վախ կոտորան իմ թևերս.
 Ընկայ գիրկդ, Ալագեազ,
 Ա՛խ, մեծ սրտիդ սղմեմ սիրտս,
 Համ, արուն լամ, Ալագեազ:



ԱՆՁՐԵՒՆ ԵԿԱԻ

Անձրին եկաւ շողալէն
 Ուռի տերև դողալէն
 Վայ լէ, լէ, լէ,
 Ձան լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,

Հրէս էկաւ իմ արայէր
 Ալ ձին տակին խողալէն
 Վայ լէ, լէ...

Քանաքեռ բարձր տեղ ա,
 Զուրը հիւանդի դեղ ա,

Սիրած սիրածի չեն տայ.
 Էս ինչ անօրէն գեղ ա:

Սիրել եմ սէրն երեսին
 Ռէհան թէրն երեսին
 Ո՞վ իմ սիրածն ինձ չի տայ
 Ասու կրակն երեսին:



ՀՕԴԱԼԼՕ ՁԱՆ

Հօ դալլօ, ջան, հօդալլօ, ջան, հօդալլօ,
 Աղջիկ սիրուն, աղջիկ անուշ, դալալլօ:

Կայնել ես աղբերակին.
 Հօդալլօ, ջան, հօդալլօ,
 Շող կըտաս արեգակին.
 Դալալլօ ջան, դալալլօ.
 Քո շող երեսին մեռնեմ,
 Հօդալլօ, ջան, հօդալլօ,
 Ունքերիդ աղեղնակին:
 Դալալլօ ջան, դալալլօ:

Մագերդ ուրբել ա,
 Աչերըդ բոլորել ա,
 Երկ' օր ա, չեմ տեսել,
 Իմ սիրտը մոլորել ա:

Փող ես ուզում, բեզ փող տամ,
 Ոսկի տամ, ոչ թէ հող տամ.
 Թէ գըրան էլ հաւան չես,
 Հողիս հանեմ, բեզ փոխ տամ:



ԳԻՒՂԱԿԱՆ ՄՐՄՈՒՋՆԵՐ

Ես սարէն կուգայի՛
 Դուն դուռը բացիր,
 Ձեռքդ ծոցդ տարար:
 Ա՛խ, էրիբ լացիր:

Վայ, վայ վառուում եմ,
 Վայ, վայ հալուում եմ,
 Հալուում, վառուում եմ:

Ես մի պինդ պաղ էի,
 Դու մրմուռ լացիր.
 Քո հրեղէն արցունքով
 Ինձի հալեցիր:

Ես մի չոր ծառ էի,
 Դու գարնան արև,
 Քո սիրով ծաղկեցաւ
 Իմ ճիւղն ու տերև:

Թէ ինձ չէիր տեսնի,
 Ինչո՞ւ սիրեցիր,
 Մի բուռ կրակ եղար,
 Սիրտս էրեցիր:

ԳԻՒՂԱԿԱՆ ՄՐՄՈՒՋՆԵՐ

Իմ ետըր դուռ կը գնէր,
 Գոտիկը նուռ կը գնէր.
 Ես կըմեռնիմ էն ետրին
 Փափախը ծուռ կը գնէր:

Ջաղացիս յետի կուռը,
 Կը ցնծայ միջի գիւլը,
 Վայ իմ սիրած բիւլիւլը
 Քաշեցին խանի դուռը:

Իմ ետըր ելաւ գնաց,
 Դարին դէմ առաւ մնաց,
 Հալալ թողութիւն չէրի,
 Սրտիս դաղ էլաւ մնաց:

Կեանքիս խաղաղ օրերը
 Ընկել են խոր հորերը,
 Սիրտս հողիս վըղովաճ
 Ման եմ գալի չօլերը:

Քարըս տաշի, բուլբեցի,
 Ետրիս տեսայ մուլբեցի,
 Անտէր մնար էն ուխտը,
 Որ ես ընտեղ սիրեցի:



* * *

Ծխում է խոռակը աւեր տաճարում
Սուրբ խաչելութեան պատկերի առաջ,
Տառապեալ հօտը հովւին է կանչում
Արիւնաշաղագ, մերկ, լալահառաչ:

Իսկ տաճարի մօտ մայրեր, այրիներ
Գերեզմանատան նիրհը խանգարած,
Հողակոյտներն են արցունքով ծածկել
Եւ դարձեալ օրհնում քո կամքը, Աստուած:

Բայց ո՞ւր ես Աստուած, ինչո՞ւ չես լսում
Հալածեալ հօտիդ աղերսը արդար
Որ քո սուրբ անւան համար այս կեանքում
Արիւն արցունք է թափել, դարէդար:

Նա, որ ամեն բան զոհել քեզ համար
Վանքեր, տաճարներ կառուցել շքեղ,
Որ իր թանկ որդոց արիւնով արդար
Ներկել քո անւան կուլի դաշտն անեղ:

Եւ այսօր անգամ նեղ ճգնաժամին
Երբ հալածուում է անախրտ, չարաչար,
Կրկին քո գութն է հայցում լալազին
Արհամարելով մարդիկ և աշխարհ:

Բայց զիտցիր, Աստուած, որ քո ստեղծած
Ամենաանգութ ոճրագործն անգամ,

Գիտէ յետ առնել սուրը չներկած
Արտասուող զոհերի արիւնով անպարտ...

Բայց որոնց քայլը դու անիծել ես
Վաղանցուկ կեանքի այս տանջարանում,
Եւ որոնց համար տանջանքով պէս պէս
Դժոխք յարգարել անտի աշխարհում...


Իսկ թէ քո կուրծքը ծարաւի է դեռ
Լծիդ տակ հեծող ստրկի արեան,
Ահա պատրաստ եմ արձակիր վճիռ
Եւ դատապարտիր ինձ անմահութեան:

Թաղիր ինձ ողջ ողջ գերեզմանի մէջ
Եւ շրջապատիր անմահ որդերով...
Բորբոքիր խարոյկ գեհննու անշէջ
Ուր նետուին անվախ, այրւին դարերով:

Եւ կամ երկնքի բարձրերում անկործան
Խաչ տնկիր անեղ փշերից հիւսած,
Ուր ես բեկուած անվերջ, անվախճան
Քաւեմ մեղքերը հօտիդ... չգործած:

.
.
Լոկ թէ զորանով հալածեալ հօտին
Մի անկապտելի ազատ կեանք գնեմ:

Վտարանդի



* * *

Սիրունուս գարուն է եկել
 Շատ գոյներով է զարդարւած,
 Ինչպէս գարնան վարդն է բացւած.
 Այդ ինչ սիրուն պատկեր ունես սիրելի,
 Շատ թանկագին պատկեր ունես սիրելի
 Ասա ինձի, պատմիր ինձի այդ մատանին
 Ով է տւել քեզ նրջան
 Խնդրեմ ասես մի ամաչիր սիրեկան:

Արքայական սէր բուխաղիտ
 Մէկ մտիկ արա մատաղիդ
 Ձոնվում եմ ուրախ ծիծաղիդ
 Այդ ինչ սիրուն մազեր ունես սիրելի
 Շատ թանկակին պատկեր ունես սիրելի
 Ասա ինձ... և այլն:

Դու ծաղիկ ես Հայաստանի ես
 Գեղեցիկ ես նազանի ես
 Սուրբ պսակի արժանի ես,
 Այդ ինչ սիրուն աչկեր ունես սիրելի,
 Շատ թանկագին պատկեր ունես սիրելի և այլն.

Աշխուժով ես հոգով սրտով
 ես մեռնում եմ քո կրակով
 Բաց արա դրախտըդ ինձի առ քո գրկում,
 Այդ ինչ սիրուն զարդեր ունես սիրելի,
 Շատ գեղեցիկ պատկեր ունես սիրելի
 Ասա ինձի և այլն:

ԼԱՅ, ՄԵՐԻԿ ԶԱՆ

Հովերն առան սար ու ձորեր,
 Անպերն ելան, մութն ընկաւ,
 Անգին մէրիկ, հէրիք յուսաս,
 Քո շողշողուն առաջն ընկաւ,
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
 Վէրբը սրտիս տուն չեմ գայ:

Կաթիլ-կաթիլ ամպըն էր ցողում,
 Սև ու պտոր երկնքից,
 Մաղիկ մաղիկ վէրբըս էր ծորում
 Իմ անգուման սև սրտէս,
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չըգամ,
 Վէրբը խորն է, ճար չկայ:

Անգութ կեանքում վէրբ ըստացայ,
 Սրտանց սիրած ընկերէս,
 Անխիղճ կեանքում վէրբ ըստացայ
 Անուշ սիրած քոյրիկէս,
 Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
 Ազիզ բալէդ էլ չի գայ:



* * *

Անողոք բաղբը զարկաւ մեզ ուժգին:
 Ու մենք գառուեցանք, մենք երկու ընկեր,
 Որոնք տորիներ մէկ տեղ են երգեր,
 Մէկ տեղ են լացեր արցունքը կեանքի:

Եւ անա այսօր ձայնդ հեռաւոր
Ձայնդ եղնիկի խոցւած, որբացած,
Ժայռին ու ծովին իր սիրտը բացած,
Կեզէ իւր ընկեր սիրով վիրաւոր,

Ես այնպէս կղձամ ձայն տալ քեզ խորոտ,
Ձայն մը, որ կտրէ սար, ձոր, դաշտ ու ծով,
Հնչէ ականջիդ յստակ հարւածով,
Պատմէ, որ ես ալ տեսքիդ եմ կարօտ:

Կուզէմ ըսել քեզ և պոռալ նորէն,
Որ ձեռք ձեռքի տանք ու գործենք այնտեղ,
Ուր կը փոթորկի տառապանքն անեղ,
Ընկճւածներուն, կեանք բրտօրէն:

Եղնիկ



Ե Ր Կ Ր Ի Ձ Ա Յ Ն Ը

Երբ ես հոն էի, թոյն ուժեղին քով,
Արցունքն ու քրքիջ, ոճիրն ու խոր վիշտ՝
Մին հայհոյանքով, միւսը խնդրանքով՝
Կը պայքարէին իրարու հետ միշտ:

Կատաղի յորձանքն այդ խուլ պայքարին
Կառնէր զիս իր մէջ ու գրոհ կուտար,
Սյնպէս կը փրփրէր, կը գոռար ուժգին,
Որ կեանքս ու շունչս կառնէին դաղար:

Եւ ժխորի մէջ շանթի պէս անեղ,
Ճնշող, մեռցնող ձայն մը կորոտար՝
«Կորիր», հեռացիր, ինչ ունիս այստեղ,
Գնա, թափառէ աստղի տակ օտար:

Քանի հեռացայ, այդ ձայնն ալ այնքան
Կորուց իր շեշտը տխուր, ցաւագին,
Կորուց իր ժխոր, քրքիջ դիւական,
Երգ ու մեղեդի դարձան մեղմագին:

Բայց անա՛ այսօր երկրի ձայնն անուշ,
Միրելիներու համեզ երկնածիր
Ժպտի ու լացի ակկօր իով քնքուշ
Կը կանչէ կուզէ տանիլ զիս երկիր:

Եղնիկ



Բ Լ Բ Ո Ի Լ Ի Ն

Արի, բլբուլ, մէկ տեղ նստենք
Ձէն ձէնի տանք ու երգենք
Էս օրուանից դառնանք աղբէր
Իրար խառնենք մեր ցաւեր:

Անցաւ զարուն, աշուն կուգայ
Շատ հեռու չէ և ձմեռ
Լաց, աղբէր ջան, էլ վարդ չկայ
Թ՛նւփը մնաց կիսամեռ:

Երգենք, աղբէր, ցաւը երգենք
Դու քո մեռած ալ վարդի
Երգենք, աղբէր, ցաւը երգենք
Ես իմ աւեր վաթանի:

Անցաւ գարուն, արնոտ գարուն
Մօտ է աշուն, ցուրտ ձմեռ
Ա՛խ, աղբէրս մնաց անտուն
Քոյրս քաղցից կիսամեռ:

Արի, բլբուլ, ցաւը երգենք
Վարդի, աւեր վաթանի
Արի, աղբէր, իրար խարնենք
Մոմնւո ցաւը մեր սրտի

Շուշանիկ Կուրդիկեան



ԽԱՐՐԲԵՐ ԿՈՌԻՆԿ

Մարտի քսանին աչքերս պաղաւ
Ձնտանի բակից երկինք աչքերս պաղաւ
Ասի՛ բալթի մի խաբրիկ մը առնեմ,
Կորնկներ կընցնին սօրանց ըռաֆով,

Եարապ, Տէր Աստուած ի՞նչ եզան աճապ,
Ի՞նչի կըռնկներ էս տարի չեկան,
Գիշերով գացին, յօր ես չը տեսնիմ,
Թէ ուրիշ ճամբխով թողին ու յնցան...

Ձան, ձէնիդ դուրպան, տեսայ քո ճամբան,
Զ՛Աստուածն կը սիրես, դու զատանց չերթաս,
էս մեր վերկից յնցուր քո բարան.
Քի խարցմունք մ՛ ունիմ, ձիյ ջուհապ մի տաս:

Դու բարով եկար, որ տեղ մնացիր,
Ասան ձիկ, կռունկ, ի՞նչի յանգրցար.
Ձուապ մի տուր ձիյ, ա՛խ սիրտսի պատուաւ,
Դէ՛հ, ասան կռունկ, աճապ ի՞նչ տեսար:

Դուն կը բարձրանաս, ու կը ցածրանաս,
Հարաֆից կուգաս, կերթաս ի հիւսիս
Տարին երկու դիր քո զուն կը դնես.
Նպատ, Անդօք, Սիս, Սիփան ու Մասիս:

Ձիկ ընկերներ կան է՛ն սարանց վերէն,
Աճապ ի՞նչ կէնին, խապրիկ մի չունի՛ս,
Տեսար տու գէնոնք, լսի՛ր գէնոնց ձէն,
Ձուապ մի տուր ձիյ, դուրպան քի խողիս:

Ի՞նչ ումուտներով ճամբախ յէլոյ իս,
Ի՞նչ կէք սրտիս մէջ, ու ի՞նչեր դարձաւ,
Յընկերներս յըմէն չորս տեխ կը կուին
Ես մացի գնտան, էս ա իմ դառ ցաւ,

Ընկերներիս ձիկ, ճամբխու զրեցին
Թէպիմ էրէցին տէրով ամանաթ
Գրկւանք մէկ մէկ, պաքեցինք զերար,
Ուրախ ին լըմէն սաղ ու սալամաթ:

Մկայ չը՛մ գիտեր, սա՛ղ են, թէ՛ մեռան,
Խապար մի չառայ վիրնից խարցուցիմ.
Ոտս ձեռս կապեր ին, թալիւր ին զնտան,
Կռունկ, քեզնից զատ խաբրբեր չունիմ:

Մումուռ մտաւ սիրտս, թուլացաւ իմ ոտներ,
Կռննկ, ջուռապ տուր, ասա՛ ինչ եղան,
Իմ խարբրներով կտրիչ ընկերներ...

Կռունկ, ձէն չէտուր, զուր քարւան քաշեց
Թռաւ զատրցաւ, աչքէս կորուսաւ
Կտրեց զիմ ումուռ, իմ բաժին թողեց
Մութ զնտան, զնջիլ, սև դարդ ու սև ցաւ:

Չ Փ.



Մ Ի Վ Հ Ա Տ Ի Ր

Մի վհատիւր, յոգնած ընկեր, ոտքի ել,
Առաջ թո՛ւր խիզախ ոգով անարգել.
Թո՛ղ հաւատով լցւի սիրտդ այրական,
Թո՛ղ սփոփւի՛ն վառ յոյսերդ առնական:

Ինչո՛ւ տրտում հեռու քաշւենք վհատած,
Երբ մենք կեանքի տէր, իշխան ենք որոշւած,
Կեանք մերն է, մենք ենք փոխում անպայման
Առաջ շարժում նրա ընթացքն անսահման:

Մի վհատիւր, տես ինչ յամառ եռանդով
Մարդիկ կեանքում աշխատում են լի յուսով.
Յոյսը նրանց կեանքի ոյժ է պարզևում,
Յոյսը նրանց առաջ, առաջ է մղում:

Օ, մի ընկճւիւր, տես թէ ինչպէս ամեն ինչ
Ունի և վիշտ և քաղցրութիւն սփոփիչ.
Ցաւն ու վիշտը սուր փշեր են մեր կեանքում.
Առանց փշի վարդ չէս գտնի աշխարհում:
Ժիրայր



ԵԿԱՆ ՈՒ ԱՆՑԱՆ

(«Ձ սխորդ օրեր»-ի եղանակով)

Կարկուտ, ջրհեղեղ, շանթ ու կրակ եկան ու անցան,
Ժայռի վերայից աննպատակ եկան ու անցան
Արդար ու տոկուն մարդը մնաց իր տեղը անշարժ,
Անթիւ սրիկայ, գոդ, աւազակ եկան ու անցան:

Թուխը ձագերը, իւր տնակը չը թողեց անտէր,
Բազում գունի թռչնոց երամակ եկան ու անցան.
Ապրեց տկարը և չը մեռաւ, ոյժ տւեց Աստուծ,
Ցաւեր զանազան հաստ ու բարակ եկան ու անցան:

Քանդել ուղեցին որբի տունը, բայց մնաց հաստատ.
Ջուկ-ջուկ ցեղի բանւոր ու մշակ եկան ու անցան.
Ջրկող, կեղեքող մարդիկը տես, Ջիւանի երգիչ,
Մեռան ու կորան անյիշատակ, եկան ու անցան.



* * *

Որ մահկանացուն այս երկրիս վերայ,
Երջանիկ ժամեր վայելել կրնայ
Եւ որն է այն վարդը ծլած աշխարհի,
Որ ձեռացդ մէջ իսկոյն չը թառամի:

Չեն, չեն երջանիկ ոչ ժամ սիրանւէր,
Որ գրգռէ հովիկն զկուսին մագեր:

Թէ մտոք գրկես զերկին և զերկիր,
Եւ ամեն գաղտնիք քեզ մերկանային
Անհնար է քեզ ըլալ երջանիկ,
Այդ դշխեմ բաղդին թշուռ խաղալիք,

Չեն, չեն երջանիկ ոչ ժամ սիրանւէր,
Որ գրգռէ հովիկն զկուսին մագեր:

Ի՞՞զուր զիւցազուներ պատերազմ եկան,
Դաշտերի վերայ կանգնեցին նշան,
Հազիւ ըստացանք յաղթութեան պսակ,
Կորցեց ձեռքերից գայն մահու հրեշտակ,

Չեն, Չեն երջանիկ ոչ ժամ սիրանւէր
Որ գրգռէ հովիկ զկուսին մագեր:
Ո՞հ չէք երջանիկ ո՞հ դժբախտ հայեր,
Մինչ դեռ հայրենիք չէք մխիթարել:



ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի, գութան, վարի գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,
Օրհնեալ է Ասուած, հօրօւէլ:

Քաշիր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշիր, քաշենք, վար անենք.
Ճիպտին արա, քըշիր, հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը գանգատ զընաց-
Քեօխւէն կըզայ, կը ձեծի,
Տէրաէրն օրհնեց, անվարձ մընաց
կը բարկանայ, կանիծի:

Էն օրն եկան թօւջի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ինչ տամ կուին ու բէգեարին...
Վարի, վարի, իմ գութան:

Չեռս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արի, գութան, վարի գութան,
Օրն եկել է, ճաշ դառել.
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,
Օրհնեալ է Ասուած, հօրօւէլ:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Գ Ա Ր Ո Ի Ն

Կարկտձեձ արտերը, երբ նորից բուսնին,
Դաշտերը կանաչեն, ծառերը ծաղկին,
Սարերը, ձորերը ծաղկով պճնուրին,
Գուցէ ես հաւատամ թէ գանուն է ճիշտ:

Երբ որ ձիւնը դադրի և անձրև տեղայ,
Որոտայ երկինքը և ամպը գոռայ,
Երբ ծարաւ երկիրը յագի կշտանայ,
Գուցէ ես հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Երբ որ Մասիս սարին Աւետիս կուտան—
Սրբաբար կը հագնի նոր պատմուճան:
Երբ հեռացած թռչունները յետ դառնան,
Գուցէ ես հաւատամ թէ գարուն է ճիշտ:

Երբ որ պայծառ արեգակը իր արդար
Հոյսը կը տարածէ համահաւասար,
Երբ անխտիր կը ծիծաղեն հող ու բար
Գուցէ ես հաւատամ, թէ գարուն է ճիշտ:

Մարտի տան է, դեռ արագիւր չի գայ,
Աւետաբեր սարեակը չի ճրովողայ
Երբ իմ ասածներուս սչ մէկը չըկայ,
Դժուար ես հաւատամ, թէ գարուն է ճիշտ:

Զիւանք



Տ Ր Տ Ո Ի Ն Ձ

Մեծ գործի հետ ես, թէք քնել ես, Ասուած,
Որ չես տեսնում, չես իմանում մեր ցաւը,
Ուրուրները գրոհ կուտան գէնք առած
Ո՞ր մէկի հետ կռուի խղճալի հաւը:

Ուշքը գրաւել է վեհապանձ արծուին,
Սրկելըբում գոյացել էլ մի նոր ցին,
Ժամանակ գտնելով գորտերը չնչին,
Կուզեն որ ջախջախեն, խորտակեն նաւը:

Մեծանունը քաջ սարը դեռ թարմ է հոգով,
Փչել են քամիներ գլխին տաք ու հով,
Նրա գործը անյաջողակ տեսնելով,
Հրճում է գիշակեր ագեղ ագռաւը:

Թէ ուզում է գտնել նախկին պատիւը,
Պէտք է կշտացնէ իւր հաւն ու ճիւղը,
Տանապատիկ ոյժ կստանայ արծիւը,
Եթէ որ նա փոխէ իւր հին հալաւը:



ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Հաշտութեան և սիրոյ բարի հրեշտակ,
Խոսված աշխարհին խաղաղութիւն բեր.
Սրագ թռիք, արի, նոյեան աղանձեակ
Գալստեանդ սպասում ենք անհամբուր:

Կամար կապէ աղեղնակը լուսատու,
Պայծառ աստղը, արուսեար լուսատու.
Թող մէզ իշխէ արեգակը լուսատու,
Չենք ուզում որ լինի մութ խաւար գիշեր:

Գթա և ողորմեա, երկնայի Իշխան,
Հաշտութեան հոգի տուր բոլոր մարդկութեան
Ինչո՞ւ համար մէկ մէկին վնաս տան,
Մարդը մարդուն համ եղբայր համ ընկեր,

Թող բաց-ին քո, աղբիւրներդ լուսածով,
Բոլոր մարդիկ ապրեն հանգիստ ապահով,
Մնա պատկառելի խաղաղ անխռով,
Լայնածաւալ, հզօր, մեծ աշխարհը մեր:

Իրար յարգեն, սիրեն, թէ ձեր թէ ջիւան,
Մարդիկ ապրեն խաղաղ սիրով միաբան,
Խռովութեան ամպերը թող հեռանան
Արդարութեան հոգին թող բարձրանայ վեր:



ԱՆՓՈՐՉՈՒԹԻՒՆ

Ափսոս, որ մենք դեռ տհաս ենք,
Գրավում ենք կեղծաւորից,
Ու մշտական վեր չը դասենք
Անպատիւը պատուաւորից:

Յարգում ենք «ես եմ» ասողին,
Գործողներուն բամբասողին,

Սուտ ու մուտ մեծ-մեծ խօսողին
Չատ ենք սիրում չափաւորից:

Մէկի գործը դեռ չը քննած,
Տեսնում ես ամեն տեղ գոված,
Փառաց ի փառս երկինք հանած,
Ճանչւած բարերար բոլորից:

Պարզը ասել ո՞վ կարող է,
Թէ՛ այս ինչը միշտ գովող է,
Այլոց զրկելով ապրող է,
Վախիլ պէտք է փողաւորից,

Մատնում են ինչպէս որ Յուդայ,
Իրանց պէսին բռնած վկայ,
Բռնանում են խղճի վերայ,
Չեն վախենում անաւորից:

Ո՞վ որ զրանց թակարդն ընկնի-
Հոգով-մարմնով գերի կըլլի,
Ինչ ունի-չունի տայ չի պրծնի
Այդպէս անգութ դատաւորից,

Չամալի խօսքերը՞ փշոտ-
Կը խայթէ վատ մարդուն կեղտոտ,
Ուղղութիւնը խօսիւր սրտոտ,
Չը վախենալով ստորից:



Կ Ռ Ո Ի Ն Կ Ի Ն

Կանչէ, կռունկ, կանչէ
 Քանի գարուն է,
 Ղարիբներու սիրաբը
 Գուտ—գուտ արուն է:
 Կռունկ—ջան, կռունկ—ջան, գարուն է
 Կռունկ—ջան, կռունկ—ջան, գարուն է

Ա՛խ, սիրաս արուն է:
 Կանչէ, կռունկ, կանչէ
 Քանի արօտ է,
 Աշխարհն արեգակ
 Սիրաս կարօտ է:
 Կռունկ—ջան, կռունկ—ջան, արօտ է
 Կռունկ—ջան, կռունկ—ջան, արօտ է

Ա՛խ, սիրաս կարօտ է:
 Կանչէ, կռունկ, կանչէ
 Քանի արև է,
 Աշուն կերթաս երկիր
 Եարիս բարևէ:
 Կռունկ—ջան, կռունկ—ջան, արև է
 Կռունկ—ջան, կռունկ—ջան, արև է
 Ա՛խ, եարիս բարևէ:




ԱՐԻ ՍԻՐՈՒՆ ԳՆԱ ՍԻՐՈՒՆ

Մեր տան ետև քառասուն կարաս,
 Քառասուն կարասի գինին էր խաս,
 Օսկէ գիւզիւմ արծըթէ թաս,
 Ամեն թասին սլազիկ մի տաս:

Արի սիրուն, գնա սիրուն,
 Հազար էրանեկ քո սիրուն:

Մեր տուն ձեր տուն մօտիկ—մօտիկ,
 Գու կապել ես կարմիր գօտիկ,
 Էրթանք քաղենք կանաչ խոտիկ,
 Տեսնանք վիր եարն է խօրօտիկ:

Քամին էկաւ էրան—էրան,
 Գնաց հասաւ Մշու բերան,
 Մշու հաւեր թևաւորան,
 Քեալաշի տուն սևաւորան:



ՍԵՒՈՐԱԿ ԱՉԵՐ

Սևորակ աչեր հրաշալի աչեր
 Գեղեցիկ աչեր սքանչելի աչեր,
 Հէնց որ բեզ տեսայ խելագարւեցայ
 Քեզ համար միայն աշխարհ մոռացայ:

Ձը տեսնէի ես քեզ չէի տանջւիլ,
 Կապրէի մի դար ուրախ ու գլարթ,

Դու աչեր սիրուն, աչեր գեղեցիկ,
Խղեցիր ինձնից բաղդաւորութիւն:

Երբեմն երազումս տեսնում եմ ես քեզ,
Եւ կարծում եմ թէ բաղդաւոր եմ ես,
Զարթնում եմ յանկարծ շուրջ մութն է,
Զըկայ մի ընկեր, չը կայ կարեկից:

Դեռ չի թառամել ձեր վարդը ինձ տւած,
Նշան սրբութեան գրկախառնութեան.

Պոկեցիր սիրտս անգութ անաստւած,
Եւ մոռացար ինձ այժմ էլ յաւիտեան:
Լախանա Փօքչուլուդեանց



* *

Բոյըդ շամշու սուրայի
Խարաբա սիրտըս շահի,
Ինձ դու տար մօտըդ բաշի,
Հերիք է ետդ ես արել:

Դու ես իմ սիրեկանըս
Մի մաշիլ ջիւան ջանըս
Երեք տարւայ դուշմանըս
Նոր բարեկամ ես արել:

Ես եմ ազիզ աղբէրըդ,
Ինձնից մի կարել սէրըդ
Երկնից կամար ունքերըդ,
Ինձ վերայ թաղ ես արել:

Ինձ տեսնելուն տուր բարով,
Խորհուրդըդ ասա դու գրով,
Ինձ հօ մորթիլ չես սրով,
Անսուր մատաղ ես արել:



Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն


Ինչ ազգ չունի սէր ու միաբանութիւն,
Ես չեմ յուսալ նրանից կենդանութիւն,
Զի ունենալ երբէք նա ազատութիւն,
Երբ չի տալիս իւր մեծին հաւանութիւն.
Ունենայ էլ հարուստ զրականութիւն,
Տգէտներից չունի զանազանութիւն:

Անմիաբան ազգն է այլոց միշտ ծառայ,
Նրա համար ազատութիւն բառ չըկայ.
Հալածանքի, թշուառութեան ենթակայ,
Մնացնիւ է, համարելու է խաբեբա.
Վերջին օրն է, կորչելու է համարեա,
Ոչ մի տեղից չիք նրան պաշտպանութիւն:

Մինչև Աստուած ձեռք կը բաշէ նրանից,
Միութիւն ու ոէր չը գտնւած տանից,
Կըսկսի քայքայել ինքն իրանից
Ու յետ մնալ շարքից ու կարավանից.
Զի յարգուիլ մերձաւոր հարևանից,
Թէև ունի մօտիկ ազգականութիւն:

Անմիութեան հողին չար է և ժլատ,
 Օստանայի զարմ է չունի յոյս, հաւատ.
 Ոչ քարոզ կը լսէ, ոչ բարի խրատ,
 Կը թափառի աստանդական յուսահատ
 Այնպէս ազգի կործանումը մօտ է շատ.
 Որի մէջ որ լինում է բաժանութիւն:

Զիւան, սէր է մարդկանց բերդը անառիկ,
 Իրար կապող ոսկի շղթան գեղեցիկ.
 Ինչ ազգ ունի միութիւն, սէր անուշիկ
 Կը համարւի մարդկանց մէջը անդրանիկ.
 Աշխարհիս մէջ կապրի ուրախ երջանիկ,
 Ամեն կողմից կը լսէ երանութիւն:



ԻՆՉ ԱՍԻՆ

Քանի կզկըթած ման եկայ, ինձ մեռած, դիակ է—ասին.
 Երբ որ մի բիշ շարժեցայ, գող է, աւազակ է—ասին.
 Իմ ստացած մեծ հարուածս արժանի ապտակ է—ասին
 Պատւի համար մեռած որդու իշու նահատակ է—ասին:

Իրաւացի, արգար դատս պաշտպանող մարդ չը գտայ ես.
 Իմ խորհուրդս ում որ ասի, հաւանող մարդ չը գտայ ես.
 Զեռքս բռնող, իմ ցաւերուս դեղ անող մարդ չը գտայ ես.
 Բոլորը ինձ՝ միտք պղտորող, անգուսպ ստահակ է—ասին:

Քամի տալով ինձ թոցրին մի բանի տաք զլուխ մարդիկ,
 Ոտքերու տակ տրորեցայ որպէս անտէր վայրի ծաղիկ:

Ընկայ բորենու ճիրանը, քովս մի մարդ չեկաւ մօտիկ,
 Իրան օգնել—ժամանակի հոգուն հակառակ է—ասին:

Վէրքս մեծերուն ցոյց տալու գործ դրի ես մեծ աշխատանք,
 Իմ կրօնս և իմ լեզուս ինձանից ուզեցին փրկանք.
 Երեւ ինքն իրաննա չի կարող կառավարել, եթէ տեղ տանք.
 Քաղաքագէտ, խելօք պապիս, անգէտ է, համբակ է ասին:

Նին հագուստի մէջ մնացի, չը ճարեցի թաժա հալաւ,
 Ապասելով լաւ օրերու, ճար չը մնաց, բանս բուսաւ.
 Պատ երգեցի բղաւցի, ոչ որ ձայնս լսող չեղաւ,
 Չեղջը անբախտ Զիւանուս շատախօս, թութակ է ասին:



* * *

Ինձ մի խնդրիւր ես չեմ երգի
 Շատ է տխուր իմ երգը,
 Նրա ձայնը կը խորտակի
 Քնքուշ սրտիդ բերկրանքը,
 Ոչ քեզ համար այդպիսի երգ
 Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վերայ
 Եւ չորացան խոտ ու վարդ
 Անապատ է այնտեղ հիմա
 Սև ամայի անապատ
 Հառաչանքից այրուած սրտում,
 Էլ ծաղիկ չի դալարում:

Ես երգեցի կէս գիշերին,
 Վառ աստղերը իմ երգից,
 Գունատեցին զողողացին,
 Եւ չքացան երկնքից,
 Մէկը միայն որ փայլում էր
 Սյն էլ մահւան աստղն էր:



*
 * *

Ես սիրել եմ մի զոյգ աչեր,
 Նման փայլուն աստղերի
 Նրանք խորն են որպէս եթերք,
 Նման յուզող ջրերի:

Ախ այն կոյսը անտարբեր է,
 Սէրս նորան չի գրաւում,
 Իմ վառ սէրը լոկ ցնորք է,
 Նա տեղ չունի աշխարհում:

Ես գերւել եմ նոցա փայլից,
 Արար աշխարհ մոռացել,
 Ջքնաղ կոյսի ջերմ կարօտից,
 Աշուղ դարձել ջերմ հոյսել:



Ե Ր Գ

Ասա լուսին դուն տեսնում ես
 Նորա աստղեր աչերը,
 Ասա գուցէ և լում ես
 Նորա անոյժ երգերը:

Ինչ էր երգում նա իր երգում,
 Վառւած սէրը ինձ համար,
 Թէ այլևս ինձ չէ յիշում,
 Ճարել է նոր սիրահար:

Ախ գթայ ինձ, թոյլ տուր ազատ,
 Գրկեմ սէրդ վայելեմ,
 Վառված սրտիս վառ բարևս,
 Ազիզ ջան դու նրան:



ՄԵՐ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Օտարներից գանգատուելու, հայերս, իրաւունք չունինք,
 Որովհետև համերաշխ գործ, մի որոշ սկզբունք չունենք,
 Թարի բաներ արտասանող, մաքուր բերան-շրթունք չունինք
 Խախուտ է մեր դրութիւնը, հաստատապէս հիմունք չունինք
 Իրար հետ մեզ սիրով կապող լաւ կրթութիւն ուսմունք
 Հաւատ ունենք, յոյս էլ ունենք, ամսոս սիրոյ մասունք
 չունինք:

Եթէ քիչ խորը մտածենք շուտ կիմանանք թէ ինչ բան ենք
Թէ այլք մեզի նախատում են, նախատելու արժան ենք.
Մեր տունը ինքներս ենք քանդում, որովհետև անձնասպան
ենք.

Սուտ, անցաւոր փառքի համար ինչ ցածուծիւն ասես
կանենք.

Արտաքուստ փայլուն, գեղեցիկ, կմախքով լի գերեզման ենք.
Գործերս խօսքերուս պէս չէ, մենք նաբի արարմունք չունին

Աշխարհի ամեն անկիւնից ստանում ենք բօթալի լուր,
Այս ինչ հային սպանեցին, կամ թէ տունը ձգեցին հուր.
Մեր մամուլն էլ ուրախութիւն չունի, միշտ գլուխ է տխուր.
Աւարառու գողերի զէմ անգամ մենք չենք վերցնում սուր,
Կարծես սրտերս մեռած է կամ թէ մենք թև ու թիկունք
չունինք:



ԽԱՌԻՄԾ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Խղճուկ թուրք ժողովուրդ, ինչո՞ւ խաբւեցիր,
Ուրիշների ձեռքին խաղալիք դառար,
Հայերի հետ կոպիտ ոյժով չափւեցիր,
Կուելովդ աստ ինչ օգուտ տարար:

Հային փասելով, չունեցար վաստակ,
Քու էլ տուն ու տեղդ եղաւ աւերակ,
Ջարգեցիր, ջարգւեցար միշտ աննպատակ,
Մէկին՝ տասը գնաց գեռ խելքի չեկար:

Քարոսական մի մեծ ոյժ կայ հայի մէջ,
Չի հանգչի յաւիտեան այդ կայծը անշէջ,
Ջամալիս յոյս ունի, որ կապրի անվերջ,
Ինչ ազգ ունի կուլտուրայ ու գաղափար:



Խ Ն Ա Մ Ի Ն

Ան իմ պապի տանիցը ինձ դուրս արաւ թշնամին,
Եկաւ տեսաւ չը օգնեց իմ սիրելի խնամին,
Ո՛չ հաւատալ չի լինի հիմիկայ բարեկամին,
Ինձ այսօրւան հասցրեց նրանից գալած քամին:

Խնամիս ինձ տեսնելու, երբ եկաւ իմ երկիրը,
Թշնամիս գրգռելով կովի փոխեց խնդիրը,
Տուն ու տեղս քանդւեց երկինք ելաւ մոխիրը,
Խնամուս պատճառովը մատնուայ անզգամին:

Թշնամիս հին էր թէպէտ, բայց մարել էր կրակը,
Քարեկամիս գալովը վար առաւ իւր զիմակը,
Այսպիսի վատ դրութեան հասցրուց իմ վիճակը,
Քիչ ֆնաց, որ խնամիս ինձի ուղարկէր Համին:

Խնամիս քաջ հեռատես, ինքը հարուստ մեծանուն,
Աշխոյժ մարդիկ գրաւող, իր շահի մէջը գիտուն,
Որդոցս մի քանիսը թողնելով ողջ տեղ ու տուն,
Ետնն ընկան գնացին փափագելով դրամին:

Իմ թշնամիս դաժան է, ես նրանից խռով եմ,
Ուր որ գնամ, ուր լինեմ խեղճ եմ անապահով եմ,
Թէ ուզում էք իմանալ թշուառիս արդեօք ով եմ,
Հայրենեաց զոհ գնացած որդին եմ քաջ Արամին:



ԱՅՍԳԷՍ ԵՄ ՀԱՍԿԱՆՈՒԾ

Ես սիրում եմ մերձաւորիս, բայց չեմ ատում օտարին,
Օտարն էլ ինձ նման մարդ է, ցանկանում եմ միշտ բարին,
Թէ օտարը ինձ չը ճնշէ մէկ վրաս չը հասցնէ,
Չեմ կամենալ մինչև անգամ ոտքը հանդիպի քարին:

Գայլի գլխին աւետարան կարդալով չի գսպւի,
Նրան պէտք է բռունցք ցոյց տալ, որ վախենայ ընկճւի,
Կոն այս տեսակ օտար մարդիկ, նրանց հետ չի ապրւի,
Բարութեան միշտ հակառակ են. սիրահարւած են չարին:

Շատ սիրեցի և յարգեցի, օտարին անձիս նման,
Իմ այս տեսակ ընթանալս համարեց վախի նշան,
Որովհետև նա տգէտ էր, բարբարոս էր իսկական,
Լաւութիւնս չը հասկացաւ զաւակը խենթ յիմարին:

Տես Ջիւանի կայ այնպիսի երկիր, այնպէս կլիմայ,
Մերձաւորի, և օտարի մէջը խտրութիւն չկայ,
Վերը սրբեր են բնակվում, վարը դե ու սատանայ,
Երկիրը երկինք չի դառնայ՝ գործը այլ է աշխարհին:



* *

Ով որ ազգ ու հայրենիք չի ճանաչում,
Հայր ու մայր, անյայտ ընկեցիկ է նա,
Փողոցներում առէք-առէք է կանչում,
Առօրեայ վարձուած մունետիկ է նա:

Մարդկութեան մէջ առաջինն է ուժեղը,
Որ պահում է ամուր հայրական տեղը,
Անհայրենիք թափառական թոյլ ցեղը,
Երկրէ երկիր ընկնող մուրացիկ է նա:

Ոչ ոք յարգ ու պատիւ չի տալիս Ջիւան,
Թէ յարգել չգիտէ մարդը ինքն իրան,
Ինչ ժողովուրդ, երկիր չունի սեփական,
Ուրիշներու ձեռքին խաղալիք է նա:




* *

Նշի ծառին նուշ կլինի,
Վարդի ծառին փուշ կը լինի,
Էրանէկ էն աղջկանը,
Սիրած եարին թուշ կը լինի:

Բամբակ եմ ցանե զողա,
Մի ես. եմ բռնե թագա,
Մմեն մի ներս մտնելիս,
Լեզուդ ու ուր ինձի մագա:

Ինձ նման ըեզ տէր ունես,
Ուրախ սիրտըդ բաց արա,
Թէ որ հետս սէր ունես,
Չոր պոռոզդ թաց արա,



ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայաստանի աւետարներ
Ով դու կոռունկ ձայնդ անուշիկ,
Արդ եկել ես օտար տեղից
Ինչ լուր բերիր ինձ պանդխտից:
Ո՞հ հայրենեաց կոռունկ սիրուն
Ուրախ լուրեր տար հայերուն:

Կասի կոռունկ հայ զաւակաց
Թէ ձեր եղբայր օտար վայրեր,
Բանակի բաց սիրտ սիրտ,
Ինաւ չի մոռցան միշտ հայրենեաց
Ո՞հ հայրենեաց կոռունկ սիրուն,
Ուրախ լուրեր տար հայերուն:



* *

Մաճկալ ես, բեզարած ես,
Առ շուռ տուր, շուռ արի,
Ծովի պէս քրտնած ես,
Եզներդ արձա՛ր տուն արի:

Կաթի սերը քաշեր եմ,
Դրեր եմ հովին սառի,
Ալ գոգնոցս փոեր եմ,
Արի թառւան թըռռ արի:

Տեղ եմ քցել շւարում,
Քամին կուգայ զով կանի,
Լուսնի շողքն մեր ծոցում,
Չափ տուր չափ առ շուռ արի:

Դադրած բեզարած եմ ջան,
Ամպերն ելան դէհ արի,
Բեզարած ջանիդ զուրպան
Ծախց թե ան, շուռ արի:



Դ Ո Ի Պ Է Ի Դ

Քայլքդ մանրիկ, դու գեղեցիկ,
Վարքդ մաքուր է սիրական,
Չեմ տեսած ըեզ նման աղջիկ.
Եղեմական բոյս հողի ջան:

Քեզ համար խելագարուայ ես,
Սիրոյդ կրակով վառուայ ես,
Առանց բեզի աւերուայ ես,
Դու իմ ասպար ու պահապան:

Սիրոյդ համար եղայ գերի,
 Փափագս մի թողուր թերի.
 Կեանքս կրակովդ կերի,
 Խոստացիր սէր ինձ յաւիտեան:

Դուն Ֆիզահուն լեր ցաւակից,
 Գեղեցիկ ես բովանդակից,
 Հոսդ քաղցր է մանուշակից,
 Ո՛վ ծաղկով լեցուն վարդարան:




ԵՕԹԸ ՍԱՐՈՎ

Եօթը սարով հեռո՛ւ բեզանից
 Քու շուաքով եմ ապրում,
 Եօթը տարով բաժան բեզանից,
 Քու կարօտով եմ էլում...

Դարդիս դարման, եարիս մահլան,
 Զան ու ջիգար եարս սէր ա...

Գիշեր-ցերեկ զրկած բեզանից
 Ծով է կարում աչքերս,
 Բալի դարիբ մի ճամբորդէմ
 Խաբար առնեմ իմ եարէս:

Եօթը տարի ծում ու պաս
 Օր ու արեւ սկզուցի
 Բալի Մշու Սուլթան զօրքով
 Իմ մուրագս տար ինձի...



*
 *

Կապոյտ երկնքում
 Աստղեր են փայլում:
 Կապոյտ երկնքում
 Աստղեր են փայլում,
 Արև ու լուսնեակ,

Ամենից սիրուն
 Ամենից փայլուն
 Ամենից սիրուն
 Ամենից փայլուն,
 է արեգակը:

Կանաչ դաշտերում
 Եւ այգիներում
 Կանաչ դաշտերում
 Եւ այգիներում
 Ծաղիկներ կան շատ:

Սիրուն աղջիկներ,
 Ինչպէս ծաղիկներ
 Սիրուն աղջիկներ,
 Ինչպէս ծաղիկներ
 Ամեն տեղ կան շատ:

Բայց չեն ոչ մէկը
 Վարդի նմանը
 Բայց չեն ոչ մէկը
 Վարդի նմանը
 Նա է բնութեան զարդ

Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Հրեշտակի է նման:




Կ Ա Ր Օ Տ Ց Ե Լ Ե Մ

Կարօտցել եմ հայրենիքս
եւ իմ ծնող մայրիկիս,
Անցան գեղեցիկ օրերս
Անցան ժամեր թանգագին:

Ոհ ինչ անբախտ վիճակի եմ,
Որ ես նստած եմ բանտում,
Ինչպէս ստիակը գեղեցիկ
Չարչարում է վանդակում:

Ես ընկերներ շատ ունիմ,
Եւ բոլորը պէտքական,
Հէնց որ ես ընկայ բանտի մէջ,
Էլ չեն յիշում մէկ անգամ:

Ծնողներից զրկեցայ,
Եւ կը զրկեն հայրենիքից,
Կուղարկեն ինձ հեռու երկիր,
Էլ չեմ ազատուի մահից:



ԱՆՄԵՂ ՀՍԼԱԾԱՆՔ

Հայը ի զուր հալածւում է շատերից,
Այս է ընկած ազգի օրը-վիճակը.
Գաղափար են կազմում քանի մը վատերից,
Ամեն ազգ էլ ունի իւր վատ զաւակը,

Մեր աչքի մէջ եղած շիւղը տեսնում են,
Իրանց աչքի գերանը միշտ պահում են,
Մեծ ազգերը հազար սխալ գործում են,
Բայց ծա՛կում է նրանց իրանց դմակը:

Ձամալ, հայը ինչո՞ւ նախանձ է շարժում,
Նրանով որ աչքաբաց է իր գործում,
Այս նեղ օրն էլ կեանք են տեսնում նրանում,
Քարեր են գլորում անիւի տակը:



Մ է Կ Է

Ո՞վ է հարցնողը, ո՞վ է քննողը,
Մեղաւորն էլ մէկ է, արդարն էլ մէկ է.
Ո՞վ է հասկացողը, ո՞վ է գննողը
Իմաստունն էլ մէկ է, յիմարն էլ մէկ է:

Գիտունը սակաւ է, անգէտը բազում,
Ծառերու վրայի պտուղները հում.

Աշխարհից անտեղեակ ամբոխի աչքում
Գետի քարն էլ մէկ է, գոհարն էլ մէկ է:

Անաչք մարդուն պէտք չեն ճրագ ու լապտեր,
Նրանց մասին նա մնում է անտարբեր.
Հաւասար են կոյրին ցերեկ թէ գիշեր,
Առաւօտն էլ մէկ է, խաւարն էլ մէկ է:

Զիւան, իբրև սոխակ կերպէ ազոաւը.
Կերպասի տեղ կերթայ ճերմակ կտաւը.
Մէկ գնի են ծախում վատը և լաւը.
Զուտ արծաթն էլ մէկ է, կապարն էլ մէկ է:




ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

Ալեկոծւած է մեծ ծովը,
Զրհեղեղից շատ երկիւղ կայ.
Փչում է քամին ցուրտ, հովը,
Ամեն տեղից շատ երկիւղ կայ:

Մարդկանց պէտք է զգոյշ մնալ,
Անպատրաստ ճամբայ չըգնալ,
Օձին չի լինի հաւատալ,
Սողուն ցեղից շատ երկիւղ կայ.

Չար մօր որդին կըլինի չար,
Անհեռատես տգէտ յիմար,
Խելացին կը մնայ դադար,
Խենթ ուղեղից շատ երկիւղ կայ:

Ահարկու է ձայնը, Զիւան.
Վիրաւոր է առիծ հսկան.
Պէտք է հանգիստ թողնել նրան,
Այն ուժեղից շատ երկիւղ կայ:



Ե Ր Գ Բ Լ Բ Ո Ի Լ Ի

Մի լար բլբուլ բեզ մի տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ,
Վարդդ սիրուն վարդդ կարմիր,
Թփից պոկեց ու տարաւ:

Կանցնեն օրեր կգայ կրկին,
Մի նոր գարուն վարդաբեր,
Եւ մոռացած քո վիշտը հին.
Նորից կերգես վարդի սէր:

Բայց վայ կեանքի այն խեղճ երգչին,
Որ վաղաժամ որբացած,
Իւր սիրելի խօսուն վարդին,
Ցուրտ հողին է նա յանձնած:

Երգչի համար գարուն չի գայ,
Եւ ոչ նոր վարդ կսիրէ,
Նա պէտք է լա պէտք է սգայ,
Մինչ յաւիտեան կը լուէ:



ՀԱՅ ԱՇՈՒՂ

Մշտական բու ազգիդ ցաւը դու երգեցիր, հայ աշուղ,
Մելամաղձիկ տխուր ձայնով գեղգեղեցիր, հայ աշուղ,
Սրտիդ խորքից ախ քաշելով հառաչելով, տխրագին,
Շատ քարացած-անդգայ սիրտ փափկացուցիր, հայ աշուղ:

Վատերուն միշտ մտրակով, լաւերուն միշ գովելով,
Դէպի բարին, դէպի լաւը գոգոնեցիր, հայ աշուղ,
Երբ վիճակեց խղճուկ հային հեռու տեղեր ցրւելու.
Ազգիդ հետքից շատ երկըրներ թափառեցիր, հայ աշուղ:

Յուսահատւած, կորչելու մօտ, հայի սառած սրտերը,
Ոգևորիչ յուսոյ երգով, նորոգեցիր, հայ աշուղ,
Բայց քո կեանքդ շատ չարքաշ է, փորձով գիտէ Չամալխո,
Անյայտութեան մէջ ու զրկւած թառամեցիր, հայ աշուղ:



Ա Ր Մ Ե Ն Ո Ի Հ Ի .

Քեզ համար վառվում եմ ես միշտ զօր գիշեր,
Ինձի խելագար արաւ մազերդ աղջիկ,
Կոչում եմ աչքերիդ երկնային լապտեր,
Գիսաւոր աստղիկ է ծամերդ աղջիկ:

Քեզ տեսնողները էրնէկեն տա լիս,
Շատ մարդիկ ապշում են, երբ ման ես գալիս:

Ճակատիդ ծածկոցը բո, յեա բանալիս,
Ոսկեղէն կանթեղ է աչքերդ աղջիկ:

Արի եղիր Յիզահուս հետ համեմատ,
Որ սիրով կեանք վարես ինձի հետ ազատ
Հասակդ փոքր է, մեծից ան խրատ:
Ինչ որ պատուէր կուտայ բու մէրդ աղջիկ:



Ե Ր Ա Ձ

Ես լսեցի մի անուշ ձայն
Իմ ծերացած մօր մօտ էր,
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց արփոսս որ երազ էր:

Կարկաչանոս աղբիւրն այնտեղ,
Թաւալում էր մարգարիտ,
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր մայրենի,
Յիշեց մանկութեան օրեր,
Մօրս համբոյր ես զգացի,
Ա՛խ արփոսս որ երազ էր:

Կրճբին սեղմեց կարօտագին,
Աչքեր սրբեց շատ թաց էր,
Բայց արտասուք գնուս էին,
Ա՛խ այդ ինչու երազ էր:

ՀՈՒՍՆԵԱԿ ԳԻՇԵՐԻՆ

Հուսնեակ գիշերին ես քեզ սիրեցի,
եւ այտերդ ալ ես լուռ պագեցի,
ինչու սիրեցի ինչու այրվեցի,
Հուսնեակ գիշերին ինչու երգեցի:

Վկայ էր լուսին վկայ են աստղեր,
Կուզես բացիր տես բերել է քեզ,
ինչու սիրեցի, ինչու այրեցի,
Հուսնեակ գիշերին ինչու երգեցի,

Ուխտել եմ սիրել սիրել յաւիտեան,
եւ քեզ հետ ապրել մինչև գերեզման,
ինչու սիրեցի ինչու այրեցի,
Հուսնեակ գիշերին ինչու երգեցի:



ԱՄՊԵՐՆ ԷԼԱՆ

Ամպերն էլան բլուր բլուր,
Մասիս սարի գագաթից,
Ախ իմ սիրաս կարօտ մնաց,
Իմ մարալին իմ բալին:

Ախ, թողեց հեռացաւ,
Եարաբ ինձի մոռացաւ,
Մի տարի է որ խաբար չունեմ,
Իմ եարին,
Ճամփու զբի մնացի մորմորբային:

Քանի տարով հեռու գնաց,
Ազիզ եարբս ինձանից,
Զիգարբս եարալու մնաց,
Բեզարել եմ իմ շանից,

Ախ, թողեց հեռացաւ և այլն

Հուսին չկար որ մէկ տեսնեմ,
Ասեմ եարիս խաբար տամ,
Թէ ազգն ինչպէս կը տառապէ,
Նրա սիրուն չարեչար.
Ախ, թողեց հեռացաւ...



ԵՅ ՍԻՐԵԼ ԵՄ

Ես սիրել եմ վարդըդ դժգոյն,
Սիրուց տանջւած այտերիդ,
Մեղամաղձոտ խաղաղութիւն,
Զոյգ սևօրակ աչերիդ:

Ես պահել եմ սրտիս խօրքում,
Մի լուռ գաղտնիք սիրային,
եւ այդ երբէք ոչ մի երգում,
Յայտնելու չեմ Աշխարբին:

Բայց պահել ես անկարող եմ,
Օ դժւար է համբերել
Զասել ինչպէս եմ սիրել ես,
Զասել ինչով եմ ուրախ:

Մէկ ՍԻՐՏ ԷՐԱ

Մէկ սիրտ էրայ էյ անջիգար,
Արի մեր աուն ներս մտիր,
Ես հիւանդ եմ քո դարդով,
Քո սիրոյ մի ճար գտիր:
Վարդ ցանեցի, դարդ քաղեցի,
Եար վնտրեցի եարայ գտայ:

Աչքս մնաց ախ քո ճամփին,
Հէչ չէ արի երագով,
Մէկ էլ տեսնամ չինար բոյրտ,
Չեղնի մեռնեմ մուրագով,
Վարդ ցանեցի..

Տարիներըս հօլօր մօլօր,
Ախ շուտ անցան գնացին,
Իմ սաւգալը սրտիս բօլօր:
Քո դարդերը մնացին,
Վարդ ցանեցի...

Թէ սարեր կան ճամփիդ վրեն,
Թե առ թուր անց կացիր,
Թէ չարեր կան սրտիդ մէջը,
Դուրս վռնդիր շուտ հասիր,
Վարդ ցանեցի...



ՎԱՐԴԱՆԻ ՄԱՀԸ

Հոնց ամպերը եկան ծածկեցին,
Երկինք ու լուսի աչքէս խլեցին,
Մնացի մենակ հողիս վրդոված,
Չեռներս ծոցս գլուխս քաշ արած:

Եւ այնուհետեւ ամեն իրիկուն,
Մնում ենք լուսնի խաղաղ ծագելուն,
Նրա տխրամած դէմքը նայելիս,
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:

Ախ ցոլա փայլէ տխրագէմ լուսին,
Գուցէ քո փայլից փայլ տաս և հային,
Պատմէ շատերին Վարդանի մանը,
Կամ ինչպէս կորաւ հայ ազգի գանը,
Կամ ինչ վեհ սիրով սիրում է Վարդան,
Մայրենի հողը աշխարհ Հայաստան:



ՀԱՄԵՍՏ ԱՂԶԻԿ

Ամեստ աղջիկ ինձ մի տանջիր չարաչար,
Չարաչար սիրուն ջան չարաչար:

Հողիս հողոյդ մատաղ լինի ամեն ժամ,
Ամեն ժամ սիրուն ջան, ամեն ժամ:

Ես հայ դու հայ չկայ մեր մէջ խորութիւն,
Խորութիւն սիրուն ջան խորութիւն:

Նազլու, Նազլու ինձ մի գցիր սարէ սար,
Սարէ ոար սիրուն ջան սարէ սար:

Մատաղ կեանքս ինձ մի դնիր գերեզման,
Գերեզման սիրուն ջան գերեզման:

Ինչ կլինի ես հարս լինիմ դու փեսայ,
Դու փեսայ սիրուն ջան դու փեսայ:



ԻՄ ՎԷՐԲ

Գիշերն անցաւ էլի պատեց մութ խաւար,
Իմ վէրքերս նորոգեցան անդադար,
Գիշերն ի բուն տանջում եմ չարաչար
Ախ չի զարթնիր իմ նազելին չի զարթնում,
Իմ ցաւերիս դեղ ու դարման չի զարթնում:

Ողջ գիշերը նազլուիս մօտ նստեցի,
Արտասուքս հեղեղի պէս թափեցի,
Շատ խնդրեցի աղաչեցի ու լացի,
Ախ չի զարթնիր իմ նազելին չի զարթնում,
Իմ ցաւերիս դեղ ու դարման չի զարթնում:

Իմ նազելին խոր բուն ընկած ննջում է,
Մոռացել է նա ինձ հրբէք չի յիշում,
Կարծես թէ նա պահել է պաս ու ծով,
Ախ չի զարթնիր իմ նազելին չի զարթնում,
Իմ ցաւերիս դեղ ու դարման չի զարթնում:

Առաւօտ է ոտս գործի չի գնում,
Ես դառել եմ բոլորովին խելագար,
Խելքս մոլոր, միտքս մոլոր, ես մոլոր:
Ախ չի զարթնիր իմ նազելին չի զարթնում,
Իմ ցաւերիս դեղ ու դարման չի զարթնում:



ՄԻՐԱՅԻՆ ԵՐԳ

Ազատ արա ինձ վանդակից,
Թոչեմ զատուեմ քեզանից,
Իրօք այլևս չես սիրիր,
Ինձ ազատիր կապանքից,
Էհ, է էհ, անուշիկ եար ջան:

Խելահաս ես այժմ դու,
Խրատ չունիմ քեզ տալու,
Երբ ատում ես ինձ հաստատ,
Էլ ինչ ունիմ մօտ գալու,
Էհ, է էհ, անուշիկ եար ջան,

Նոր հնար եմ մտածէ,
Սիրունիս քեզնից չեմ զատուի,
Երեք ամիս մի անգամ,
Մի համբոյր ես խոստացել,
Էհ է էհ անուշիկ եար ջան:



Ը Ն Կ Ե Ր Ի Ս

Երեք արմատացած ցաւ ունիս, ընկեր
Համ աղքատ ես, համ հպարտ ես, համ յիմար,
Դարձրել են քեզ վավաշոտ, անհամբեր,
Ման ես գալիս որպէս անմիտ խելագար:

Գիտեմ քու կարծիքով հիմայ ես վատ եմ,
Որ միշտ ամեն ազամ քեզ կնախատեմ,
Քիչ սպասէ, որ փաստերով հաստատեմ,
Թողած միւս արարքներդ քո վատթար:

Աղքատ ես, որ զիշեր ցերեկ չզւնիս քուն,
Եւ հպարտ ես, որ չես նստիլ էժան տուն,
Յիմար ես, որ քեզ կարծում ես դու գիտուն
Ահա իմ փաստերս ամենաճարտար:

Ստախօսութիւնդ որպէս մի նիզակ,
Աշխարհք իմացել է չի մտնիլ տուրակ,
Արբեցող, թղթամոլ կեանքդ անառակ
Աֆրողիտեան ախտով վարակւած տկար:

Իւղը շան տկի մէջ ինչ համ որ կուտայ,
Քո շնորհքդ այնքան բանի պէտք կուգայ
Սարգախ, շողօրթիչ, բծնող, խաբեբայ,
Սուտ, անիրաւ, կեղծ համբաւի սիրահար:



ՍՈՐԱՅԻՆ ԵՐԳ


Աղբիւրի մօտ նստած զիշեր պատմեցի,
Էցուած սրտով, մտածում եմ քո մասին,
Փլիխս վերայ, փայլում է պայծառ լուսին,
Արի արի արի աննմանս դու ես,
Արի արի արի սրտով սիրած եարս դու ես:

Ես քեզ առաջարկեցի ո՛հ իմ սերը
Որ յաւիտեան դառնաս դու իմ ընկերը,
Ուր որ գնաս ես կը լինեմ քու բեռը,
Արի արի արի աննմանս դու ես,
Արի արի արի սրտով սիրած եարս դու ես:

Նամակ ես գրել կարգալ չը գիտեմ,
Նամակիտ պատասխանը գրել չը գիտեմ,
Գնա-գնա գնա չեմ սիրում ես քեզ,
Գնա-գնա գնա ատեցի ես քեզ:

Մուժամբարի դաշտում չը կայ չինարի,
Իմ սիրուհիս այնպեղ կապրի շատ տարի,
Արի արի արի աննմանքս դու ես,
Արի արի արի սրտով սիրած եարս դու ես:

Ուրբաթ օրը խօսք ես տալիս, չես գալիս,
Ուրիշները հետ էլ ման էլես գալիս,
Գնա գնա գնա չեմ սիրում ես քեզ,
Գնա գնա գնա ատեցի ես քեզ:



Լ Լ Ր Ի Կ

Գացի արտեր, բռնի լոր,
Աղջիկ տեսայ եայլի ձոր,
Նըման էր կարմիր խընձոր:

Լորիկ, գարնան քարեր,
Դու վարդ արիւր, լորիկ,
Նըման էր կարմիր խընձոր,
Լորիկ, լորիկ, լորիկ, լորիկ,
Լորիկ, գարնան քարեր,
Դու վարդ արիւր լորիկ:

Արև դիպաւ սարերուն,
Կաքաւ թըռաւ քարերուն,
Լորիկ կայնե վեր դարուն,
Լորիկ, գարնան քարեր:

Ձուր կուգայ գոչգոչալեն,
Գըլխուդ ես գըցե վալեն,
Լոր, չեո հարցնէ իմ հալէն,
Լորիկ, գարնան քարեր:

Քար մի թողի իմ դշին,
Թող գայ նըստի քու թըշին
Կըրակ տու զարիւր փըշին:
Լորիկ, գարնան քարեր:



Ն Ո Ր Ե Ր Գ

Եօթ տարի պաս պահեցի քու մասին,
Որ ես ու դու ընկեր լինենք միասին,
Ինձ խաբեցիր գտար ուրիշ ամուսին.
Գնա, գնա, անխղճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դըրիւր ցաւ:

Ազուաւին ինչ պէտք է սիրել աղաւնեակ,
Խարդախ մարդը չը գիտէ սէրն անապակ,
Քեզ չար գեիդ ես կարծեցի հրեշտակ,
Գնա, գնա անխղճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դըրիւր ցաւ:

Մինչ չը թողնեո քու պագուի հետ խաղալդ,
Լոկ խօսքերով չի ուղղուիլ սխալդ,
Այսուհետե ուշ է քու ինձ սիրտ տալըդ.
Գնա, գնա, անխղճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի սրտիս վրայ դըրիւր ցաւ:

Սուր դանակ է քո երկայրի ըերանդ,
Գործդ նման չէ հոչակած անւանդ,
Ո՞րտեղ մնաց ինձ հետ արած պայմանդ.
Գնա, գնա անխղճմտանք անիրաւ,
Ցաւ չունէի, սրտիս վրայ դըրիւր ցաւ:



ԱՅԺՄԵԱՆ ԿԵԱՆՔԸ

(Անկատար)

Կեղծ ու նենգամիտ մարդիկ շատերի տուն քանդող են,
Սրբութիւն պղտորող և բարին անարգող են,
Բարոյական նուրբ ուղին յատկապէս խանգարող են,
Միշտ չարութեան հակամէտ, ցոփութեան յարմարող են,
Այժմեան իմաստակաները բոլորը սուտ ասող են,
Պորտաբոյժ և անառակ խառնակեաց շնացող են:



ԱՅԺՄԵԱՆ ԴԱՐԸ

Համ յաւ է, համ շատ վատ է, իմ կարծիքով այժմեան
դարը,
Բարութեան հետ հաւասար մրցում է անիրաւ չարը,
Մէկը անշարժ կեցած է ծանր ու մեծ իրան տեղը,
Մէկը շատ ծայրահեղ է, անցել է սահմանը,—սարը:

Տեսնում ես կուրի մէջ են նորն ու հինը հաստատապէս,
Ամենը պաշտպանում է իւր ունեցած գաղափարը,
Մէկը պաշտպան է կեցած իւր հաւատոյ հիմունքներուն,
Մի ուրիշը թաւալել կուզէ նրա հիմնաքարը:

Մէկը լոյս է քարոզում իւր մտքով մեր աշխարհին,
Մէկն էլ ամուր գրկել է մառախուղը, մութ խաւարը,
Քող վրայից անց կենան հազարաւոր դարեր նորից,
Ցաղթող է հանդիսանում ճշմարիտը և արգարը:

Դանդաղը յետ կը մնայ արագ կերթայ անխոտոր,
Պարզ բան է ոտաւորից միշտ յառաջ է ձիավարը,
Այսպէս էլ ստութիւն պաշտպանողը կը յոգնի շուտ,
Ճշմարիտը, ով Զիւան, կերթայ իրան ճանապարհը:



Ե Ր Գ


Ոհ ինչ տրտում տխուր օրեր
Եկաւ պատեց հայոց քաջեր
Ինչքան արցունք թափեն մայրեր,
Այլ չեն տեսնի իւրեանց քաջեր:

Հիմայ մթնեց հայոց աչեր,
Այլ չեն տեսնի իւրեանց քաջեր,
Հազիւ կը լրացնեն տանջանքներ,
Կը պակասեն կեանքի ուժեր:



Ե Ր Գ

Փարուն կեանքս դառաւ աշուն,
Քեզ համար հայ աղջիկ սիրուն,
Ինչու հետս չես խօսիր դուն,
Պատճառն ինչ է սևիկ աչեր,
Սևիկ աչեր կարմիր այտեր,
Հերիք է հողիս մի հաներ (կրկն.):



ՄԵՐ ՆԵՐԿԱՆ

Այս ի՞նչ դարի հասանք ի՞նչ օրեր գտանք,
Ամենևին հաւատարմութիւն չըկայ,
Ի՞նչ օրեր կորուսինք ի՞նչ կեանք ստացանք,
Հագարից մէկի մէջ լաւ արիւն չըկայ:

Ասեն թէ լուսաւոր է այս դարը
Լաւութեան փոխարէն կերթանք վատթարը
Կարծես թէ ծոռել է ամբողջ աշխարհը
Իսկ ուղիղ մնացած մէկ անկիւն չըկայ:

Պարզակրօն կասենք վերին թաբունով,
Ափսոս, խառնուած ենք այլ և այլ գունով,
Մէկ տուն ունինք ճշմարտութեան անունով
Նրա մէջն էլ անծուռ, հաստատ սիւն չըկայ:

Պէտք է միշտ ճշմարիտ մտքով վերանաս,
Աշխատիր ուղղութեամբ, մինչև ծերանաս
Զիւնն, լաւ հասկացիր չը ընկերանաս,
Խաբերայ խմբերից օգնութիւն չըկայ:



ԱՇԽԱՐՀԸ

Ո՛հ, ո՛հ, Արարիչ, աշխարհը խաբերայ է դարձել
Ուխտը ուրացող, տէրը ատող յուզոց է դարձել,
Կարծես վերացել է հողային գնդիցը ամբողջ,
Ճշմարտութիւնը կեղծ ստութիւն ծառայ է դարձել:

Ինչպէս Սողոմոնն լիշել է իւր առակի միջով,
«Ողճուկ քաղաքիս տագասըրը տղայ է դարձել»
Լսուել է գիւղի տանուտիրոջ վրայի լոյսը,
Եւ հաստատել է իւր մշակը, վկայ է դարձել:

Երեկ-միւս օրը սարերում ոչխար արածողը,
Մարդկանց քարոզիչ ծայրագոյն արեղայ է դարձել,
Դատաստանի տակ ընկնողը հնար մտածելով,
Իսկոյն անունը փոխել է, քահանա է դարձել:

Տես, բարոյախօս, առաքինի ողջախոնը, տես,
Հռչակ ունեցող հոմանիին փեսայ է դարձել,
Ձէ, չէ, Զիւնի, բաւական է խաբուեցար այդքան
Գիտեցածդ՝ հրեշտակն հիմա սատանայ է դարձել:



ՊԱՏԻԻ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Թէ ուզում ես քեզ գիտնական անուանեն,
Եւրոպացի ձեռով հալաւ ունեցիր,
Թէ կը ցանկանաս պատիւդ լաւ պահպանեն,
Շինծու դիպում, շինծու համբաւ ունեցիր:

Ժողովրդի կամքը, բերանը շինէ.
Ձի հասկանալ, նորա համար դիփ մին է,
Այն որ հիմա հաստ ու պարակ միջին է,
Անխնաս է, խելք էլ սակաւ ունեցիր:

Այնքան որ ունեցիր մի վկայական,
 Կասեն, որ մտել ես դու համայնարան,
 Վախենաս թէ հազարներով քեզ չըտան,
 Հոգաբարձուաց հետը քեզ լաւ ունեցիր:



ԽՐԱՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈԳՈՒՆ ՀԱՄԵՄԱՏ

Անմտածել վերէ վարէ խօսքերդ ճարտար եղիր,
 Քեզ ճոռոմախօս կասեն, ուզում ես յիմար եղիր,
 Քանիմ նախադասութիւն զըքերից բերան արա,
 Միշտ ուսմիկ դասի մէջ գիտնական հանճար եղիր:

Կշեռքի ծանր կողմը աչքի առաջ ունեցիր,
 Ճշմարտութիւնը ստէ, համ նորից արդար եղիր,
 Առիւծասիրտ անձի մօտ կզկըթիր, եզիր կատու,
 Եթէ տեսար տէար մարդ արիացիր, չար եղիր:

Ժամանակի պահանջն է անուժին կողոպտելը,
 Թէ խիզճդ քեզ խայթում է, արտաքուստ արդար եղիր,
 Ձիւան, քեզ սվ կիմանայ, դու գիտես քո հաշիւը,
 Խօսքերովդ սուտ ազգասէր, փորի սիրահար եղիր:



ՄՕՐՍ ՎԵՐՁԻՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Տվեց համբոյր վերջին անգամ,
 Իմ հարազատ ծնող մայր,
 Ես ուր գնամ որտեղ ման գամ,
 Բանտ է աշխարհն ինձ համար:

Ես այն օրից թափառում եմ,
 Անօթևան թռչնի պէս,
 Օտար երկրում տանջւում եմ ես,
 Կեսանքս արդէն եղաւ կէս:

Դեռ չեմ գտել ես տուն ու տեղ,
 Ընտանեկան յարկի տակ,
 Թափառում եմ անտուն անտէր,
 Անհիւրընկալ երկնի տակ:



ԻՄ ՍԻՐՈՒՀՈՒՄ

Սիրուններ դուք միք նեղանայ,
 Մշտական իմ եարս եմ գովում,
 Միք նեղանայ միք զարմանայ,
 Որ պատւական եարս եմ գովում,
 Թէկուզ լինիք աստղ ու յուսին,
 Անդաւաճան եարս եմ գովում,
 Ինչ կայ նրան ինչ չկայ ձեզ,
 Իմ աննման եարս եմ գովում:

Դուք խեղճերու արհամարհող,
 Հարսուութեան երկրպագող,
 Պար ու խնջոյք շռայլութիւն,
 Աննպատակ ցոփ կեանք սիրող,
 Կեանք մեռցնող կորուստներով,
 Զարդի համար հոգի տւող
 Այդ բոլորին արհամարհող
 Իմ գովական եարս եմ գովում:

Ձեր զէնքերը արդ ու զարդն է,
 Առաջ եկէք շորով ոսկով,
 Աշխատէք որ մարդ գրաւէք,
 Անբնական շինծու խօսքով,
 Քննութեան չէք դիմանայ,
 Խիստ աղքատ ու խեղճ էք գործով,
 Գործքով պահանջիս համաձայն
 Ինձ օգնական եարս եմ գովում:

Զարդամով կուռք, կանացի
 Սիրտ, ոսկոյ մարգարտի շող չէ,
 Իսկական իւր փոքրերուն մայր,
 Տնտեսական գործին ծոյլ չէ,
 Փչած տիկ—ծուկրտան տիկիկների
 Նման անգործ ու թոյլ չէ,
 Գործքով եռուն կազմով առողջ,
 Իմ սիրական եարս եմ գովում:

Իւր մարդուն դրամը տալով
 Մեծ բարեգործ չէ ձեանում
 Նոր կարողութեան արդիւնքով,

Բարերար չէ հանդիսանում,
 Իւր շնորհ ձիրք ու տաղանդով
 Փող աշխատում արցունք սրբում,
 Դրա համար անուշ ազնիւ
 Իմ գիտնական եարս եմ գովում:



ՊԱՆԴՈՒԽՏ ՄՇԵՑՈՒ ԵՐԳԸ

Եօթն օր, եօթ գիշեր
 Շախկամնի զօտիս թոռմշեր,
 Եար մզիկ դրոնէն դուս չեխնայ
 Բշուրմի սիրտ մըզիկ խովնայ—
 Վայլէ, վայլէ, վայլէ, վայլէ...

Էրթամ Ստամբոլ,
 Դատիմ փարայ բօլ
 Իմ եարի խամար
 Առնեմ ջուխտ մի սօլ,
 Արի, եար արի,
 Խոով մի կենայ,
 Աստուորիս բան
 Եւր, մզիկ չի մնայ:

Վայ, սանխէր հիվկիվ,
 Դու գացիր ի Մուշ բարով,
 Եւ չըս յիգայ հազար տարով,

Խարս պարկէ տղայ բերէ,
Առջընեկ լէ գութան կը վարէ—
Վայլէ, վայլէ, վայլէ, վալլէ,

Կայներ ես յիգին
Խաղող կու քաղես,
Համամ ծծերով
Շաքար կու մաղես.
Ալմաստ բիշախով
Ձիմ սիրտ կու դաղես.
Արի, եար արի...

Երթանք Չաջուռ գեղ,
Առնենք նուկիմ եղ,
Սըր եարի խամար,
Անենք ձւածեղ.
Արի եար արի, խոով մի մնայ,
Ասուորիս բան, եար, մզիկ չի մնայ:



Ա Ղ Ա Ս Ի

(Խ. Արովեանից)

Սար ու ձոր ընկած՝ մէկ չոր թփի տակի
Գեանին նայելով մնացել եմ նստած
Ձեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տուած, լալիս եմ օրըս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցը Մասիս.
Աղի արտասուենքով էրուած խորոված,
Երեսիդ նայեմ մնամ քարացած:

Ծընող, ազգական հեռու ինձանից,
Հուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Եարաք երբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ ձոզ ջան սսելով:

Աչքս ծով դարձաւ ճամբին նայելով,
Մէկ աշուղ, որ գըլխիս պըտիտ է գալիս,
Թէ երբ մէկ խաբար կըհասնի ինձ բարով,
Հոգոց հանելով՝ ասում եմ, լալիս:

Նազըն, իմ Նազըն, անման Նազըն,
Սիրտս խորովուի անուշդ յիշելով.
Նազըն իմ Նազըն, հրաշալի Նազըն,
Աղասին քեզ տայ իր հետին բարով:

Սարերի գոշին, ձորերի միջին
Վայ գլխին տալով բո խեղճ Աղասին.
Երկսիցք գրկուած բո սիրուց մաշուած.
Տատրակի նման փշի վերայ նստած:

Նազըն, իմ նազըն, մէկ շունչս է մնացել,
Ոսկերքս քրքրուել, աչքերս խաւարել.
Թող մէկ շունչ առնեմ, յետոյ հողը մտնեմ,
Դժոխք էլ տանեն, հանգիստ կըլինեմ,

Քեզ եմ մտում, քեզ, քո ջանին մեռնեմ,
Հող ու գերեզման ես վրէս ունէմ,
Քանց իմ սառը մարմին, էլ ինչ գերեզման
Ինչի պէտք կուգայ, երեսիդ զուրբան:



Ճ Ա Կ Ա Տ Ա Ք Ի Ր

(Ա. Նեզրի)

Մանրիս մօտ լուռ գիշերին յայտնուեց մի չքնաղ կին,
Սրած դաշոյն, շիկած ածուխ, ասեռ աչքերը լինէին,
«Բուք մարդիկ, ինձ կնքեցիք վիշտ, տառապանք անուշով»,
Այդպէս են ինձ այժմ կոչում—ասաց կինը ժպտալով:

Ես սարսեցի... «Հանգստացիր, խեղճ իմ զաւակ փոքրագի,
Այսօրուանից իմն ես միակ. չեմ զիջանի ոչ ոքի,
Յետքէդ կուգամ մինչ գերեզման—խինդ ու լացդ կխտելու,
Ա՛խ հեռացիր...» բայց չէ ուզում նա աղերսս լսելու:

Եւ կանգնած է արձանի պէս դժբախտութեան թագուհին,
Բաղդդ այնտեղ երկնքումն է լոկ սահմանուած թշուառ կին,
Նոճիների մեռած կոկոն, զրկանքների դու դատրիկ,
Բաղդդ այնտեղ է սահմանուած, շիրիմի դալուկ որկ ծաղիկ:

Ես արթնացայ... «Ե՛խ, ես կարօտ դեռ իմ ջանել հասակում,
Գուզէի, որ բաղդը բէրէր երջանիկ օր այս կեանքում,
Գուզէի, որ կուրծքս ուրչէր ցնորալից յոյգերով,
Ապրէր, շնչէր, ոգևորուէր՝ կենսուրախ, վառ սիրով...»

Ո՞վ Ձի ՍԻՐԵԼ...

Ո՞վ չի սիրել խնորեմ ասէր,
Ես նրան հնց սիրեմ կամ լինեմ ընկեր.
Չէ՞ որ ստիպելով մեզ կը վնասենք,
Շատ կը թշուառանայ յետոյ կեանքը մեր:

Փեսան ինձի է պէտք թէ քեզ, հայրիկ,
Քո հաւանած մարդով ես չեմ երջանիկ.
Երբ սիրով կապուած չեն տղայ ու աղջիկ:
Նշանն անհիմն է, պսակը անվաւէր:

Հայրիկ, քո բաղձանքը բարի բաղձանք չէ,
Այդ քո տուած կեանքը ինձ համար կեանք չէ,
Աղջիկ սեռն էլ մարդ է, ծախու ապրան չէ,
Փող շահուելու առարկայ չէ օգտաբեր:

Տուր ինձ այն փեսան, որին ես կըսիրեմ,
Գնամ, ուրախ սրտով կեանքս նուիրեմ.
Այնուհետեւ հաստատ ես պարտաւոր եմ
Քեզ համար աղօթել ցերեկ և գնչեր:

Գուր ինձ մի տար մեր թշնամու զաւակին,
Ձեմ կարող դիմանալ ես այդ կրակին.
Ո՞նց թողնեմ իմ սրտի ընտրած Հայկակին,
Ո՞վ ունի նրա պէս գեղեցիկ պատկեր:

Ես սիրել եմ իմ Հայկակին յաւիտեան,
Ինձ համար մեռած է քո ընտրած փեսան

Կսպասեմ իմ եարին, չեմ գնայ նրան,
Ծնող ես, մի գառնայ որդուդ գլխակեր:

Մի աղջկայ բերանից լսել եմ հաստատ
Այս խօսքը, հօր դէմ խօսում էր տղատ,
Թէ տեղը չը գտաւ մի աղջիկարմատ,
Շուտով կը թառամի որպէս անջուր վարդ:



ՀՕՅ ՆԱԶԱՆ ԻՄ

Հօյ նազան իմ, նազան իմ,
Ձան, նազան իմ նազան իմ,
Նազան դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Ծաղիկ բաղելով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հօյ նազան իմ, նազան իմ,
Ինձ համար աղանիկ ես,
Ձան նազան իմ, նազան իմ,
Գըլխիս վըրով պըտիտ տուր,
Հօյ նազան իմ, նազան իմ:

Նախշուն թև թիթեռնիկ ես,
Ձան նազան իմ, նազան իմ:
Եար ջան, դու բարով եկար,

Կանաչ սարերով եկար,
Ղաքար ծամելով եկար,
Քիշմիշ ուտելով եկար:



ՂՂՐՄԵՑՈՅ ԵՐԳ

Ես վերէն կուգայի՛ դու դուռը բացիր,
Ձեռքդ ծոցդ տարար ան էրիւ լացիր,
Ես էլ քեզի չառայ՝ տունը մնացիր,
Գընը, զապլի խային, եար չեղար ինձի:

Ես սարէն կուգայի, շալակս բուրդ էր,
Լեզուդ ընձի համար վառած քուքուրթ էր,
Բօյդ զարդու զամիշ, յերեսդ թուխթ էր,
Գընը, զապլի խային, եար չեղար ընձի:

Երկինքը ամպեր էր, ինչ անուշ թոն էր,
Էկայ դըռնէն անցայ, ջանանս հոն էր,
Էրեցայ վառեցայ, էս ինչդ տուն էր,
Գընը, զապլի խային, եար չեղար ընձի:

Էսօր շաբաթ էդնիր էգուց կիրակի,
Եարըս դըռնէն անցնիր էրթար կրակի,
Լեզուն բանլիք էդնիր, ծոցը Փռանկի,
Գընը, զապլի խային, եար չեղար ընձի:



ՄԱՐԱԼՕ ԶԱՆ

Մարալօ, ջան մարալօ, մարալօ,
Մարալօ, սարի աղջիկ դարալօ,

Մարալօ, աղջիկ անունդ Շուշան.
Մարալօ, մատնիքս տամ քեզ նշան:

Մարալօ, արի գնանք Սուրբ-Նշան,
Մարալօ, քեօ մինթանէն խըշխըշան:

Ջաղացս մանի, մանի,
Գունս անուշ կըտանի,
Իմ եարս սարում քոլում,
Իմ քունս սնց կտանի:

Ջաղացիս դուռը տաշած,
Աղլըխիս գիւլը քաշած
Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
Ոսկի դալամով քաշած:

Հանդէն գաս՝ գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես.
Ինձնից գիւման եար բռնես՝
Բիւուրվաթ հողը մտնես:

Մտիկ արէք էն ղըշին,
Ոտը դրել ա փշին,
Գլուխս դուրբան կտամ,
Չալ աչք, կարմիր թշին:

Դու նստել ես դօշակին,
Ուշ ու միտքդ փէշակին.
Խմել ես նռան գինին,
Հոտ քաշել մանուշակին:

Արևը կամար-կամար
Կապել ես ոսկէ քամար:
Յիսուն օր պաս եմ պահել,
Իմ աղբօր ճամբի համար:

Մարի խոտը ծեղւէ ծեղ,
Ընկեր երթանք միատեղ.
Որ հարամին վըրայ տայ.
Գլուխս տամ գլխիդ տեղ:

Սարէն կըգայ ձիաւոր,
Մեր տունը չարգախաւոր,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրան թագաւոր:

Հաց եմ թխել, դարի ա,
Իմ եարը սաֆարի ա,
Սաֆար երթալուդ մեռնեմ,
Խօսքերըդ շաքարի ա:

Խնձոր ունեմ կըծած ա.
Չորէք կողմն էրծաթ ա.
Աղբէրս ուզեց, տւի սչ,
Ազիզ եարի ղըկած ա:

Ջաղացս ման եմ տւել,
 Սիրել եմ, ջան եմ տւել,
 Օխտը տարի սէրութիւն,
 Մէկ օր պայման եմ տւել:

Այ տղայ, դու բաղովն արի,
 Ոտներդ շողովն արի.
 Էս թաղը զալմաղալ ա,
 Ման տնւր, էն թաղովն արի,

Ծաղիկ եմ քաղել՝ դեղին ա,
 Իմ եարը ձեր գեղին ա.
 Հէլ ու մեխակ շատ ունեմ,
 Հըրէ եարիս ձեռին ա:



ԱՐԱՋՆ ԵԿԱԻ

Արազն եկաւ լափին տալով,
 Ժեռ քարերին տափին տալով,
 Որտեղ թաղեմ ես իմ դարդը,
 Չոր գլուխս տափին տալով:

Այ իմ Արազ, շուրդ վարար
 Սիրուն եարիս եարաբ տեսնոր
 Ես չը հասայ իմ մուրազին,
 Արազ, եարաբ կարօտս առնոր:

Ամպերն ընկան Մասիս սարին,
 Կարօտ մնացի ես իմ եարին,
 Աստուած սիրես, էրւած սրտիս
 Ջուղաբ բերես էկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
 Արտասուքս թանաք շինեմ,
 Արագ, ծէգը ջրիդ շառած,
 Իմ սե դարդը բեզ կը բերեմ:

Կասես շողքը քարին ընկաւ,
 Կրակը սրտիս մէջն ընկաւ,
 Կամար ունքից, թուխ աչքերից,
 Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ:

Յ. Յովհաննիսեան



ԳՆԱ ԵԱՐՕ ԶԱՆ

Ղարսա բերդը փլել ա
 Գնա, եարօ-ջան գնա
 Եարս տակը քնել ա,
 Գնա սալդաթ մի մնայ,

Ձեր բաղի դուռը բաց ա
 Գնա եարօ-ջան, գնա
 Ոտներդ շաղով թաց ա,
 Գնա գինւոր, մի մնայ:

Մեր սան յետև մի մառան
 Տղերքն եկան յետ դառան
 Ձեռս տարայ թէ բոնեմ
 Դիփ լալ ու մարջան դառան
 Դէ, գնա, եարօ-ջան, գնա
 Գնա կուին մի մնա:



ՀՈՎ ԱՐԷՔ ՍԱՐԵՐ՝

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
 Իմ դարդին դարման արէք:
 Սարերը հով չեն անում,
 Իմ դարդին դարման անում:

Ամպեր, ամպեր, մի քիչ զով արէք,
 Վարար անձրև թափէք, ծով արէք
 Գէշ մարդու օր-արևը
 Սև հողի տակով արէք:

Հով արէք ամպեր ջան, հով արէք,
 Իմ դարդին դարման արէք,
 Ամպերը հով չեն անում,
 Իմ դարդին դարման անում:

Սուրեր, ձորեր դաշտեր ու ջրեր,
 Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ:

Մի վեր կացէք, իմացէք,
 Տեսէք իմ սըրտի ցաւեր:

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
 Իմ դարդին դարման արէք,
 Սարերը հով չեն անում,
 Իմ դարդին դարման անում:



ԼՈՒՍԵՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
 Վայ, լէ, լէ, լէ, լէ,
 Վայ, լօ, լօ, լօ, լօ.
 Շինականի քունն անուշ:

Երնէկ էն օրեր,
 Որ կեխենք սարեր:
 Ծագեց լուսնակ երկընուց,
 Հովըլի փողն էր անուշ:

Հօտաղն եզներ կարածայ,
 Մաճկալ պառկեր՝ քունն անուշ:

Զըզըղղուն քամին կը փչէ
 Ծովային հովն էր անուշ:

Դաշտեր, ձորեր մընջեր են,
 Զըրեր գըլգըլան՝ ձէնն անուշ:

Հաւքեր թառան իրենց բուն,
Բլբլբուլի տաղն էր անուշ:

Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ:




ՏԱՐՕՆՅԻ ՊԱՆԴՈՒԽՏՆ

Մայիս ամսոյ դուն գեփիւռիկ,
Սլանում ես Մշոյ լեռինք (կրկնել)
Կորուսել եմ քաղցր հայրենիք,
Կուլամ կ' ողբամ չասես հէրիք:

Լեռան Մշոյ ես նման Մասիս,
Մայրիկս կուլայ կոչում է զիս
Կասէս ինձի եկուր առ իս
Բաւ է որդի դուն թափառես:

Պանդուխտ մը եմ օտարութեան
Ատէն չունիմ որ առ բեզ գամ,
Ցաւերս շատ են միշտ հարածամ
Գուցէ դոցա եմ ես արժան:

Պանդուխտ եմ ես տարօնեցի
Շատ ժամանակ պանդուխտ մնացի
Ցաւօք սրտիւ ես միշտ լացի
Մշոյ երկրին կարօտ մնացի:



ՍՈՆԱ ԵԱՐ

Սոնա եւր, Սոնա եւր,
Սոնա սիրուն, Սոնա եար,

Վարդավառը գալիս ա,
Սոնա եւր, Սոնա եւր,

Ծաղիկը ցնծալիս ա.
Սոնա սիրուն, Սոնա եար.

Այ գիւլում կանչող աղջիկ,
Սոնա եւր, Սոնա եւր:

Ձէնդ ծրվալիս ա.
Սոնա սիրուն, Սոնա եւր:

Կանաչ տեղը՝ բաղում ես,
Պարի միջին խաղում ես.
Կաքաւի պէս սորալով,
Տըղաներին դաղում ես:

Կարմիր գինին թասումը,
Ես եմ ըս հաւասումը,
Ե՞րբ կը տաքնան աղջկերբը,
Վարդավառի պասումը:

—Սիրուն աղջիկ, նազ ունիս
Շահգաղայի սազ ունիս,
Հողեմ շահ-գաղի գըլուխ,
Դու իմ հոգում հազ ունիս:

ՇՈՂԵՐ ԶԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի,
Շողեր ջան,

Սարիցը տուն չի գալի.
Շողեր ջան.

Դու շորորա, դուն օրօրա.
Շողեր ջան.

Ամպի տակին ձուն կերևայ,
Շողեր ջան.

Սիրտըս կրահով լրցւած,
Շողեր ջան.

Աչքերիս քուն չի գալի,
Շողեր ջան.

Դու շորորա, դու օրօրա
Շողեր ջան.

Ամպի տակին ձին կերևայ,
Շողեր ջան,

Հուրը ա թափում վերևիցը,
Ես վառայ քո սէրիցը.
Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դու սարբերիցը:

Սարի գլխին ձուն եկաւ,
Շողեր ջան.

Շէկկիկ եարբս տուն եկաւ,
Շողեր ջան.

Ուն կերևայ, ձուն կերևայ,
Շողեր ջան,

Բերդի տակին տուն կերևայ,
Շողեր ջան.

Դեռ մուրազիս չը հասած
Շողեր ջան.

Վըրէս խորուն քուն եկաւ,
Շողեր ջան.

Բերդի տակին տուն կերևայ,
Շողեր ջան.

Աշունն եկաւ սարիցը,
Տերև թափեց ծառիցը.
Շողօն դարդով լրցուել ա.—
Հեռացել ա եարիցը:



ԳԻՒՂԱԿԱՆ ՄՐՄՈՒՆՁՆԵՐ

Ալագեազ բարձր սարին
Ձին ա կիտւել կատարին
Սարի ճամբէք, բաց էլէք
էրթամ, հասնեմ իմ եարին:

Ա՛խ, իմ ճամբէն քարոտ ա,
Սիրտս էրուած, եարոտ ա,
Ղարբբի օրն ընի սև,
Ազիզ եարի կարօտ ա:

Եարիս տեսայ, լալիս էր,
Ղալիս, գլխին տալիս էր,
Ճամբայ տուէք, այ սարեր
Ձեռով արի գալիս էր:

էլ ի՛նչ շուշա էն քարին
Սիրտս կաթում ա արին
Ա՛յ իմ թառլան, թե տուր ինձ,
Թունեմ, հասնիմ իմ եարին:



ԳԻՒՂԱԿԱՆ ՄՐՄՈՒՆՁՆԵՐ

Ա՛յ վարդ-աղջիկ, մօտ արի
Քեզ եմ կանչում մօտ, արի
Նազըն աղջիկ, շեկ աղջիկ
Քեզ եմ կանչում, մօտ արի:

Վարդերի հետ խաղում ես
Երեսիս ծիծաղում ես
էրուած սիրտըս քաղում ես
Քեզի եմ կանչում, մօտ արի

Աչքըդ ծով, ունքըդ կամար
Աղջի՛, սիրտըս ուր տարար
Բիւլբիւլ դառայ քեզ համար
Քեզ եմ կանչում, մօտ արի:




Գ Ե Օ Թ Է Ի Յ

Փոքրիկ աղան մի վարդ տեսաւ
Սիրուն վարդը դաշտի միջին
Ուրախ ուրախ շուտ մօտեցաւ
Որ լաւ նայէ սիրուն վարդին:
Ա՛յ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Մանուկն ասաց, քեզ կը քաղեմ
Ա՛յ իմ վարդիկ դաշտի միջին
Վարդիկն ասաց, փշեր ունեմ
Գու ձեռ մի տայ կարմիր վարդին:
Ա՛յ իմ վարդին, կարմիր վարդին
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ձար երեսան վարդը քաղեց
Սիրուն վարդը դաշտի միջին

Վարդը նորան խիստ ծակծկեց
 Բայց և գերի մնաց ձեռին:
 Այ իմ վարդին, կարմիր վարդին
 Կարմիր վարդը դաշտի միջին:



Հ Է Յ Ն Է Ի Յ

Այս ինչ երգ է հեշտագին
 Թափանցում խորքն իմ հոգուն
 Հնչիր, երգ դու գարնանային
 Զայնիկդ համն է թող հեռուն:

Հնչիր, հասիր այն տնակ
 Ուր ծաղկունք են բողբոջում
 Այնտեղ կ'լինի իմ հոգեակ
 Կըտաս նորան իմ ողջոյն:

Իմ արցունքից բուսնում են
 Անուշաբոյր շատ ծաղիկ
 Հառաչներըս գառնում են
 Սոխակների դայլայլիկ:

Միրիւր դու ինձ, քեզ պարգև
 Տամ, իմ հոգեակ, ծաղիկներ
 Պատուհանիդ առաջև
 Անուշ երգեն սոխակներ:



ԽՆԿԻ ԾԱՌԸ

Մեր դըռանը խընկի ծառ,
 Գիւլում ջան,

Զեր դըռանը խընկի ծառ,
 Գիւլում ջան.

Խընկենին ա բերել բար,
 Գիւլում ջան:

Մեր դըռանը խընկի ծառ
 Նախշուն բլբլու վըրէն թառ,
 Երթար ու գար, շորոր տար,
 Սիրուն եարին օրոր տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
 Մարջան բլբլու վըրէն թառ.
 Գընար ու գար, շըւին տար,
 Անուշ եարի թևին տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
 Ոսկի բլբլու վըրէն թառ.
 Կարմիր խընձոր անել տար
 Այուան ծաղիկ տանել տար:



ԽԱՆՈՒՄ ԵՒ Ա ՋԱՆ

Ես Աղեկն եմ Չամբրուցի, մէկ շիւան
Խանու՛մ եւա շան:

Բըռնին տարան էստուց չուրի Երևան.

Քուն կեցիր բարով,
Ես կերթամ լալով.

Լալով ողբալով,

Քաջ ու բարխանով,

Սարեր ման գալով:

Կալով ողբալով,

Քաջ ու բարխանով,

Սարեր ման գալով:

Չե՛ն ու ոտըս կապին բերդը դըրեցին,

Չուխայ, շալուար լալով տունը բերեցին:

Օրեր, կարնան անուշ օրեր.

Ախ, մեղքեր կորեր.

Օրեր, կարնան անուշ օրեր,

Բերդիցը կտրեցի Երեւան, Ալագեազ տեսայ,

Արարած անխաբար դրոշխտի պէս ա.

Ապարան չբերիս դու՛ման ա դառել, —

Ի՞նչ կեանքն ու՛րբեր եաման ա դառել:

Ոչխարն էսզին կարծայ՝ էնզին գառները,

Կանաչել են ծաղիկները, ծառները,

Արի, երթանք քո՛ ման գալած արտերը,

Քեզի տեսայ, նորացան իմ դարդերը:

ԵՕԹՆ ՕՐ ԵՕԹ ԳԻՇԵՐ

Եօթն օր, եօթ գիշեր

Շամամն ի գօտիս թոռմըշեր,

Եար մեզիկ դըռնէն չ'եղներ,

Փըշուր մի սիրտ մեզիկ հոգնէր:

Վայ, լճ, վայ, լճ, վայ, լճ, վայ լճ:

Եարսի խռովաւ,

Շամամ թոռումաւ.

Հովիւ խըռովաւ,

Ոչխար մոլորաւ.

Բերուոր շիւարաւ.

Կըթոց գըլորաւ:

Արի, ետր, արի, խըռով մի կենա,

Աստըւորիս բան ձի, ըե չի մընա:

Առնեմ ըզգամըուրէս.

Ենեմ ըու մամու երդիս,

Ձիմ կաքուում ձէն լըսես,

Անուշ ըրնէզի դարթիս:

Բոստան եմ դըրե

Վերե էն դարին.

Սատուած շէն պահէ

էս տարուան տարին.

Շամամ մի չեղաւ,

Ուղարկեմ ետրին:

Արի, ետր, արի, խըռով մի կենա,
Աստըւորիս բան ձի, քե չի մընա:

Աղջի էրեցայ քու դարդէն,
Գամ նըստիմ քու հէրանց բաղչէն.
Էնքան զարնեմ, էնքան ասեմ,
Չուր հալի միս, թափի իմ շանէն:

Արթուն, թէ քնած.
Ընկել եմ քու փէշ.
Խոցերս շատ են,
Մի անի ինձ գէշ,
Կը մեռնեմ սիրովդ,
Կը տեսնես իմ լէշ:

Կանչեմ ետր, արի,—եարիկ ձէն չի տայ,
Ընկեր քաղցըր բուն, անունս էլ չի տայ:

Էսօր քեզի ապով ինձ էնքան են զարկած,
Չիմ արիւն գըզած բամբակով են բըռնած,
Հում աբըրշումով վէրքերս են կարած,
Նարաթ շաքարով խոցերս են քաղած:

Վայ, լօ, վայ, լօ, վայ, լօ, վայ, լօ:

Երթամ պըզտի գեղ.
Առնեմ նուկիմ եղ.
Իմ եարի համար
Անեմ ձուածեղ.

Տանեմ հովըւուն,
Չի չը դընի մեղ:

Արի ետր, արի, խըռով մի կենա,
Աստըւորի բան ձի, քե չի մընա.

Ինչ իմ աչք ընկաւ քու կարմիր երեսաց,
Էնպէս՝ ինչ վարդ ուեհան վեր ձի չեն շարժած
Դու արի մէկ պագ առ կարմիր երեսաց՝
Թող զարկած եղնին ինձի թամամած:

Էրին, էրերին
Ոչխար վեր բերին.
Կըթենք թուխ մաքին,
Լըցենք սուրահին
Խորոված գինով
Ուղարկենք եարին:

Արի, ետր, արի խըռով մի կենա,
Աստըւորի բան ձի, քե, չի մընա:

Տըղայ, դու, մի վախի,
Վաղ ես կերթամ իմ հէրանց բաղչէն,
Դու արի ես մէկ պագ տամ քեզի,
Ես քո աըղայ սիրտ ինձնէ չեմ թորկի:

Իմ հէրանց իգին
Վարթ հազար թաւուր.
Մէջ էն վարդերուն

Իմ վարդն է քաֆուր,
Շահ բըլբուլն իջաւ
Վեր իմ վարդին հիւր:

Արի, ետր, արի, խըռով մի կենա,
Սուա, փուչ աստըւորը, ձի քե չի մընա:



ԲԻՐ ԲԱՂԱ ՍՈՒ

(Մի քաւ ջուր երգի եղանակով)

Եղեր եմ քեզ սիրահար,
Իմ սիրելիս դու չես յօժար,
Ծարաւեր եմ ու չես գթար,
Քո գերիդ եմ մի կաթիլ ջուր
Քնքոյշ ձեռքերովդ հասցուր:

Սիրուդ ծովն միշտ լողալով
Յիշում եմ քեզ դողդողալով
Ինչպէս ապրեմ փափագելով,
Քու գերիդ եմ մի կաթիլ ջուր,
Քնքոյշ ձեռքերովդ հասցուր:

Աշխատանքս մի տանի գուր
Նւիրէ ինձ սիրոյ համբոյր,
Թէ չես սիրի գոնէ մահ տուր,
Քու գերիդ եմ մի կաթիլ ջուր
Քնքոյշ ձեռքերովդ հասցուր:

ԱՐԻ ՍԻՐՈՒՆ ԳՆԱ ՍԻՐՈՒՆ

Մեր տան ետե քառասուն կարաս,
Քառասուն կարասի գինին էր խաս,
Օսկէ գիւզում արծըթէ թաս,
Ամեն թասին պագիկ մի տաս:

Արի սիրուն, գնա սիրուն,
Հազար էրնեկ քո տիրուն:

Մեր տուն ձեր տան մօտիկ—մօտիկ,
Դու կապել ես կարմիր դօտիկ,
Էրթանք քաղենք կանաչ խոտիկ,
Տենանք վիր եարն է խօրօտիկ:

Քամին էկաւ էրան—էրան,
Գնաց հասաւ Մշու բերան,
Մշու հաւեր թևաւորան,
Քեալաշի տուն սևաւորան:



ԲԱՐԱՇԿԱՅ ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Անգին աղջիկ, ես քեզ մատաղ
Ցանկացածդ ինձի ասա,
Քեզ գոհւելու պատրաստ եմ,
Անգին աղջիկ ինձի խղճայ:

Դի՛ք ման եկայ սաղ Կովկասը
Երկրէ երկիր չորս բոլորը,
Ձի ճարուիլ քեզ պիտի հուրը,
Անգին աղջիկ ինձի խղճայ:

Քո սիրուց ես թափառում եմ,
Գիշեր ցորեկ հանգիստ չունիմ,
Մի տանջիր ինձ անխղճորէն,
Անջիգեար եար, ինձի խղճայ:

Իմացիր որ խօսքս էս ա,
Առանց ինձի խեր չես տեսնայ,
Հաւատա ինձ, խոստումդ վկայ,
Անխիղճ աղջիկ ինձի խղճայ:

Այժմ տեսայ, որ նամարդ ես,
Ով սէր կասի այնտեղ կը վազես,
Մատինեանցի սիրունին ես,
Մօտս արի ինձի խղճայ:



ՁՈՎ ԳԻՇԵՐ Է

Ձով զիշեր է դուրս եկ,
Լուսնեակը նորել ա,
Նուշ աղջիկ քո սիրուց
Հանգիստս կորել ա:

Էդ շինարի հասակդ
Ուշք ու միտքս տարել ա,
Անուշ եար շուտ արի
Քնքուշ եար շուտ արի:

Բոյիդ բուսաթիդ մատաղ
Ձէյիրան, Ղէյիրան, Ղէյիրան,
Սև աչքերիդ մատաղ
Ձէյիրան, Ղէյիրան, Ղէյիրան:

Ասողերը կը շողշողան,
Կապուտակ երկնքէն
Վառեցիր իմ հոգին,
Քո սև սև աչերէն:

Համբերանքս կտրաւ,
Լալիս եմ քո ձեռքէն,
Անուշ եար շուտ արի
Քնքոյշ եար շուտ արի:

Բոյիդ բուսաթիդ մատաղ,
Ձէյիրան, Ղէյիրան, Ղէյիրան,
Շէկ մազերիդ մատաղ
Ձէյիրան, Ղէյիրան, Ղէյիրան:

Ափսոս էս զիշերին,
Որ մենակ ման կուգամ,
Կաղաչեմ դուրս չես գայ,
Առանց քեզ ուր գնամ:

Թէ հողիս էլ ուզես,
 Անուշ ջան քեզ կտամ,
 Անուշ եար շուտ արի,
 Քնքոյշ եար գուրս արի:

Բոյիդ բուսաթիդ մատաղ,
 Զէյիբան, ջէյիբան, ջէյիբան,
 Քաղցր լեզւիդ մատաղ,
 Զէյիբան, ջէյիբան, ջէյիբան:



ԹԵԱԳԵԱԴԱ ԴՍՐՎԻՇՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Սիրոյդ կրակներով քանի մէկ վառւիմ,
 Միշտ քեզի յիշելով աւաղ աւաղ տանջւիմ չարչարւիմ,
 Զ առւել եմ քեզանից էլ ինչո՛ւ ապրիմ,
 Տխ ուր սրտիս դարման աւաղ աւաղ չը կըցա ճարել
 Թող մեռնի մատնիչը, որ նազելիս չը կըցա գըզել:

Պալատներուդ դէմն անշուք տնակս,
 Խնդալով պարելով աւաղ աւաղ մտիք սենեակս,
 Թէ սիրում ես վարդին դուն ես սոխակս, աւաղ
 Տխ ուր սրտիս դարման աւաղ աւաղ չը կըցա ճարել
 Թող մեռնի մատնիչը, որ նազելիս չը կըցա գըզել:

Մաքուր պալատներուն նստեր կը դիտես
 Անց ու դարձ անելուս, աւաղ աւաղ սրտով կը ներես
 Միայնակ ապրելը դուն խիստ կը սիրես

Տխուր սրտիս դարման աւաղ աւաղ չը կըցա ճարել
 Թող մեռնի մատնիչը որ նազելուս չը կըցա քըուել:

Երբ ամեն առատոտ կուրքա ու կերթաս
 Խմէ իմ արիւնս աւաղ աւաղ գոնէ կշտանաս,
 Թէ սրտով չես սիրում յետոյ կը գղջաս
 Տխուր սրտիս դարման աւաղ աւաղ չը կըցա ճարել
 Թող մեռնի մատնիչը որ նազելուս չը կըցա քըուել:



* * *

Թամամ աշխարհքումս չկայ մին աննման ջան քեզի պէս.
 Ճակատ մէյդան քեզի պէս
 Ունքեր քեաման քեզի պէս,
 Աչքերը մաստան քեզի պէս,
 Պոօշն մարջան քեզի պէս,
 Սուրան կեարպան քեզի պէս,
 Կին սնց է ծնանել մարալ ու ջէյրան քեզի պէս:

Քեզ տեսնողն ասում է սա հողեղէն չէ, հրեշտակ է,
 Կերպարանքն արեգակ է,
 Հար թուշն մի լուսնեակ է,
 Աչքերն վառած ճրագ է,
 Լեզուն դժոխքի կրակ է,
 Բուխաղն մեղր ու կարագ է,
 Արքան վարավուրդ եմ անում չկայ էլ ինսան քեզի պէս:

Յրեսիդ մաիկ անողն ասում է քաշած պատկեր ես,
 Ուից ցգլուխ դիփ սէր ես
 Ամեն բանից զեր ի վեր ես,
 Իմաստալիր գլխի տէր ես
 Արարիչդ թէ կը սիրես,
 Մխալմունքս պիտի ներես,
 Որ կամենում եմ ասել, չկայ մէհրի բան քեզի պէս:

Ինչ տեղով որ անցնում ես ասում են եարաբ սա ուլ է,
 Հանդերձդ դիփ կարմիր մով է,
 Երեսն մախմուրի խով է,
 Հանդարտութիւնով մեծ ծով է,
 Բերան պէտք է որ գովէ,
 Անպատճելի շնորհքով է,

Կենացս մէջ չեմ տեսել Սուլթան ու խան քեզի պէս:

Գեղեցկութիւն բաժանողից շատ փայ ստացողն դու ես,
 Միշտ ուրախացողն դու ես,
 Ամակ իմացողն դու ես,
 Դատաստան անողն դու ես,
 Մարդոց ջան անողն դու ես,
 Սայեադ սպանողն դու ես,

Քեամանդարների մէջ չկայ մին որսկան քեզի պէս:
 Մ. դարեան



ՆԻՆՐ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Ա՛խ իմ հարազատ կենդանի որբիկ,
 Արդեօք քաղցած ես թէ մերկ ու բորբիկ,
 Սիրտս մօտ է քեզ, հեռու եմ ես,
 Միշտ լուր ուղարկէ մի անիր անտես:

Երամք կուունկներաց ես շատ խնդրեցի
 Որ մի լուր բերեն քեզանից ինձի,
 Չը տւիր ինձի գոհացուցիչ լուր,
 Եւ թողին ինձի տրտում և տխուր:

Սիրտս և հոգիս, վկայում է որ,
 Քեզ պիտի գրկեմ անշուշտ ես մի օր,
 Եւ քաջ գիտեմ մօտ է այդ օրը,
 Զիջաւ տկարին զազան հզօրը:

Կգայ միւս օր աւետեաց լուրը,
 Պիտի իմանան հայք ընդհանուրը
 Հաւաքիր ուժդ իբրև մի մշակ,
 Որ

Նայիր այն կողմը երբ ես հեռացայ,
 Քեզի որբ թողի ու շատ ուշացայ,
 Այժմ եկել եմ, եկ համբուրեմ քեզ
 Կեանքս ու հոգիս նւէր կտամ քեզ:



ԸՆԴ ԱՍՏԵՂՕՔ

Ընդ աստեղօք օտար ափանց
Տարագրելու չիք բերկրանք
Լքեալ հոգոյս յոյս հայրենեաց
Դուն ես միայն սփոփանք:

Օտար աստղեր լոյս չունին,

Օտար երկինք ինձ մթին:

Օտար բոյսեր դառն ու անհամ,
Զրեր պղտոր ու լեղի,
Դաշտ անապատ հովի կարտեր
Ու պարտէզներ անբերրի:

Օտար ծառեր շուք չունին,

Օտար ծաղիկ հոտ չունի:

Օտար երկիր երջանկապէս,
Ծանր է այդ պայմանը ինձ համար,
Զիւն ձմեռ է իւր գարունը
Զունի երբէք ինձ ամառ:

Օտար երկինք ամպոտ է,

Օտար սրտեր անգութ է:

Օտար թէն շնչեմ ես օդ,
Ցաւ հոգսային իմ օրեր,
Քեզ հայրենիք սիրակարօտ
Սիրտս հանեմ տամ քեզ նւէր:

Օտարութիւն դուն փուշ ես,
Իսկ հայրենիք դուն վարդ ես:



**

Ձանա աշխատասէր լինես պատանի,
Սնաշխատ ծոյլերի նման չի մնաս,
Վայ կուտան ծոյլերին ոչ թէ երեանի,
Լաւ լսիր խրատս անբան չի մնաս:

Ծոյլին անդաստան փուշով լի է միշտ,
Ինչի որ, սիրտ չունի աշխատելու ճիշտ,
Քաջին հաց պակաս չէ ծոյլին ցաւ ու վիշտ,
Օրինակ առ, թշուառական չի մնաս:

Վստահ եղիր գործիք վրայ կանգնիր դու,
Գարնան աշխատանքդ ձմրան հացի տուր,
Թէ չի ձեռքդ հասնի մէկ տուն շինելու,
Վրան ճարէ, անօթեան չը մնաս:

Ուայտուու խրատը առ հաստատ եղիր,
Սթափւելի խոր քնից ու արթուն եղիր,
Մի խաբուելի ուրիշին իմաստուն եղիր,
Նշանաւոր լեռան նշան չը մնաս:



ՓՈՂ ՈՐՏԵՂ Է ԳԷՏՔ

Աշխարհի ոչ մի գիւտ քեզ չի նմանի,
Դու ես ամենի մօտ ընդունակ դրամ,
Զի լինիր ոչ մի բան քեզ պէս պիտանի,
Ամենայն ցաւերու օժանդակ դրամ:

Պտղատու պարաէզի մէջ հոգետան
 Անդատար խնամող անգին այգեպան,
 Եւ տունկերն հասցնող կատարելութեան,
 Դու մարդկային ցեղի արեգակ դրամ:

Ամբողջ տիեզերք գրաւել ես դու,
 Ամեն տեղ ընդունակ հրամանդ ազդու,
 Այնքան յարգելի ես շատ ու շատ մարդու,
 Բոլոր աշխարհն է քեզ հպատակ դրամ:

Ձի լինիր առանց քեզ ոչ սւտումնարան,
 Ուսանել գիտութիւն արւեստ ոչ մի բան,
 Ոչ մի գործ չի հասնիլ կատարելութեան,
 Թէ չի խրախուսես համարձակ դրամ:

Ոմանք սկսում են շինելու մի տուն,
 Հիմքից հաստատ և ընդարձակ խիստ փայլուն,
 Երբ պակասում ես տիրոջ գրպանիցը տուն
 Մնում է այն շէնք աւերակ դրամ:

Դու որտեղ ես ներկայ քեզ մօտ է հաւատ,
 Եւ ում մօտ ես այն մարդն չի յուսահատ,
 Ճշմարիտ ուղղութիւն այնտեղ է հաստատ,
 Ամեն ամօթանքի դիմակ ես դրամ:

Պատահում է մարդու յանկար՝ մի վտանգ,
 Իսկոյն հեռանում են բոլոր ազգականք,
 Միմիայն փրկելու դու անում ես ջանք
 Ոգևորում ես շատ նահատակ դրամ:

Վան երբեմն օրիորդք անփող խիստ ազնիւ
 Կան նաև յիմարներ ոսկով լի անթիւ,
 Մէկն ուզում է շատերը մէկը մինն էլ հազիւ,
 Դու ում պաշտպան նա է անգին ակ դրամ:

Դրամ, դրամ, դրամ և դարձեալ դրամ,
 Չեմ տեսնում քեզնից զատ մօտիկ բարեկամ,
 Աշխարհի պէտքերին պատրաստ ամեն ժամ,
 Գլխաւոր պիտանի միայնակ դրամ:

Յուրտերի դէմ կրակ սովածի հաց ջուր,
 Մերկերի շոր և քաղցածի կերակուր,
 Պանդուխտի ննջարան բոլոր պէտքի դուռ,
 Ոչ մէկը չէ քո առաջը փակ դրամ:

Հողագործի սերմ և հունձերի մանգաղ,
 Հիւանդ անձերի դեղ առողջի ծիծաղ,
 Ծնվածի օրօրան մեռածի դագաղ,
 Դուն ես գործադրում հոգեակ դրամ:

Բայց մեզ երանի էր չը լինէիր դու,
 Չէին ատիլ մարդիք այսպէս գիրարու,
 Հարուստ աղքատ և չէր լիներ վաշխառու,
 Թէ մինչդեռ մնայիր գետնի տակ դրամ:

Մագսուտս մի անուն տամ քեզի ինչպէս,
 Որ չլինեմ թողած հրաշքդ անտես,
 Չօրութիւնդ շատ է միայն Աստուած չես,
 Ահա ունիս անթիւ օրինակ դրամ:


ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Աշխարհի ամենավատ դրութիւնը
Պանդխաութիւնն է միայնակ ինձի,
Լաւ է դժւար լինել մնալ իւր տունը,
Օտարութեան փառքի փոխանակ ինձի:

Տեսնում ես որ մարդիկ մէջ զւարճութեան,
Ման կուզան խմբւած միշտ ուրախութեան,
Աչքս սուրհանգակն է մխիթարութեան
Կսպասեմ որ բերէ մի նամակ ինձի:

Կաւենան ցաւերս նեղութիւններ շատ
Անհաշիւ վերքերս սիրտս է անփառատ,
Չունիմ մի մխիթարիչ մի ընկեր հաստատ,
Չիկայ առանց վշտի ժամանակ ինձի:

Երջանիկ էի ես երբ պանդուխտ չէի,
Ամեն տեսակ ազնիւ վարմունք գիտէի,
Մազուտս շողոքորթին կեղծին կատէի,
Հիմայ նրանք դարձրին հպատակ ինձի:



ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ԼԵԶԻՈՎ

Ասիմ ախչի գեամ մըտնեմ ցոցըդ,
Տայեան վէրցեց անթըրոցը,
Փախամ մըտամ ցանփըթրոցը,
Էթեասեմ կոուելու,
Եա գեամ եա չի գեամ:

Գենեացիմ մըտամ փեանեան,
Դեազ նատած էր բաբա գաեան,
Էնդըտը լեացան տարան աբուուս ու հայեան,
Էթեասեմ կուելու
Եա գեամ եա չի գեամ:

Կ Ո Ւ Պ Լ Է Տ Ն Ե Ր

(Արտատպւած Ա. Եսայեանի «Կնիկարմատի շալվարը
կամ մօղնի իւրկէն» վօռըվելից)

էս աշխարքը խիստ փշացաւ
Կնիկարմատը դալումացաւ.
Չիխտի կօպին շեապա դարձաւ,
Կօսէ էս էլ մօղա է քա:

Չալօն, քալօն, շէնէլ քօփակ
Դիփուռնանքն էլ դարձան ոսնակ,
Իւրկի մագիէր հաքան տօպրակ,
Շանտէկլուրը մօղա է քա:

Ծիծը, դօշը դիփ բաց արած,
Ինչկլի պուրտը տկուրացած,
Չափչփում ին քուչա քուչա,
Կօսէ դէկօլտը մօղա է քա:

Կնիկարմատը զաւթից աշխար,
Տղամարթին շինից օչխար.
Հիմի էլ կի հագաւ շալվար,
Էրթօբա է, մօղա է քա:

Եագօրն էլաւ ճանտրակուլի,
Կէկէլը հաքաւ շանտէկլուրի,
Մաշօն շալվար կինտօուրի,
Վայ մեր մեղկը, մօղա է քա:



Յ Ա Ն Կ

Երկու խօսք	3
Զինորի վերջին ուխտը	5
Խաժիկ մաժիկ աչեր	6
Վաթանի երգը	7
Հայրենասերի ողբը	8
Հպարտ օրհինը	9
Երկուսը մէկ են	10
Բարով եկար սիրուն կունկ	11
Զինորի երգը	12
Ղոջմայ	13
Հիջրան քեարամի	—
Ծաղկագարդի Երգ	14
Ունիմ Աստուած	15
Քաջի երգերից	16
Կենած փշոտ ասպարէզը	17
Զինուած, պատրաստուած	18
Երգ Սոխակի	19
Հայրենիք	21
Խաւար եմ ես ինչպէս գիշեր	22
Արթուն մտքիս հանդարտ քայլեր	23
Գարահիսար լեռան կրճքին	24
Հայդուկի նշանածի երգը	»
Աննմանի երգը	25
Էն արծիւ էր թռաւ գնայ	26
Թող փչի քամին	27
Ահա մայրիկ ես գնում եմ	28
Վարդ կօշիկ	29

Վերջին բարեւ	31
Անխղճօրէն	»
Սիրուն ծիծեռնակ	33
Քաջի երգը	34
Իբրև արծիւ սաւառնում ես	»
Ծերուկ Սիւնեցի	35
Որսկան ախպէր	36
Հայաստանի անկախ Սասուն	37
Ձէյթունի երգը	38
Սասունայ սար	39
Զինորի երգը	40
Դանակը ոսկորին հասաւ	»
Աւագակները օրը ցերեկով	41
Մշեցու երգը	43
Հայրենիքէս հեռացեր եմ	»
Հայրենիքի (պատիւ)	44
Կովկասի երկինք	45
Տաճկահայաստանի 1896 թ. կոտորածին	46
Գող կատու	48
Հայի սրտին սուր են զարկեր	»
Շատ ծաղիկ ցանեցի	49
Ղազախեցի հայ աղջիկը	50
Դարդօգ եմ դարդաքաջ եմ	52
Ընկերներս վաղ են մէռել	53
Վերջալուսին	»
Զինորի երգումը	54
Հոգիս կուտամ	55
Բիագ ուսուլի	56
Դիվանի	57
Բաղդ եմ փնտրում	»
Խղճուկի լացը	58
Ղոջմայ	59
Թաւրէզի	»

Գանգատ իր անձից	60
Մօր սուգը	61
Ախ մեր խմաց շուրը մեր կերած հացը	»
Ղուրբաթից	62
Վատ ընկերին	64
Հայրենիքին	64
Երգ սիրահարութեան	65
Մշեցու գանգառը	66
Ու գեփիւնն ալէմտաղի	67
Մի մօր օրօրական երգ	68
Մատաղը- (Թումօ)-ից	69
Արշայոյսը	71
Թուխ փոշով աղջիկ	72
Զանկի	74
Խղճուկի ձենը	75
Մնաք բարով	76
Լաւ գուշակութիւն	77
Յոյս	78
Հերոս գու անցար	79
Սօխակին	80
Հողագործ	81
Սիրահարի գանգառը	82
Թշուառ ժողովուրդ	83
Զր մոռանաս	84
Ես չեմ ուզում	85
Ոսկին	86
Զարդի, զարկ այ վարպետ	87
Զախորդ օրերը	»
Սխալ խորհուրդ	88
Գրգական մարշ	90
Մանանի երգը	91
Խումար պառկեր երես բաց	92
Հողագործ	92

Յիմար մարդ	93
Աղուխս կորաւ	»
Սիրոյ տաղերից	95
Էլի եարիս եմ գովում	»
Թո՛ւր իմ սէր սրտիս խորքից	96
Թող երգէ բլբուլ	97
Թող	98
Ղօշմայ	»
Յուսոյ նշոյլ	99
Ինչ անել հային	100
Սամայի	101
Պարզիւր աղբիւր	»
Իրառւնք	102
Երեք ձայն	103
Դիւանի	»
Բլբուլի երգը	104
Դու գո՛յ խնդրես	105
Եանրդ եղանակ	»
Տուբէիթ	107
Ինձ համար չէ գարնան գալը	108
Շրջանը	»
Բլբուլին	109
Անիրաւ ձկնորս	110
Լաց տարաբախտ օրերդ	»
Երգ	111
Դարդս լացեք	112
Հեռացիր ինձանից, օրիորդ	113
Դու անցար, հերոս,	114
Երգումն	»
Յուսահատել մեղք է ընկեր	115
Է՛հ, ջան հայրենիք,	116
Ճամբէս	117
Հագար բարով	»

Մայրիկիս	118
Երգ ալագեազի	119
Անձրին եկաւ	120
Հօտալլօ ջան	121
Գիւղական մրմունջներ	122
Գիւղական մրմունջներ	123
Ծխում է խունկը աւեր տաճարում	124
Սիրունուս գարուն է եկել	126
Լաց, մէրիկ ջան	127
Անողոր բախտը	»
Երկրի ձայնը	128
Քլբուլին	129
Խաբրբեր կուունկ	130
Մի վհատիր	132
Եկան ու անցան	133
Ո՞հ մահկանացուն	134
Գութանի երգը	135
Գարուն	136
Տրտունջ	137
Հաշտութեան հրեշտակ	»
Անփորձութիւն	138
Կուունկին	140
Արի սիրուն գնա սիրուն	141
Սևորակ աչեր	»
Բոյըզ շամշու սուրայի	142
Միաբանութիւն	143
Ի՞նչ ասին	144
Ինձ մի խնդրիր	145
Ես սիրել եմ մի զոյգ աչեր	146
Երգ	147
Մեր գրութիւնը	»
Խաբւած ժողովուրդին	148
Խնամին	149

Այսպէս եմ հասկանում	150
Ով որ ազգ ու հայրենիք չի ճանաչում	152
Նշի ծառին նուշ կլինի	»
Կուունկ հայաստանի	152
Մաճկալ ես, բեզարած ես	»
Գուպէիգ	153
Եօթը սարով	154
Կապոյտ երկնքում	155
Գարօտցել եմ	156
Անմեղ հալածանք	157
Մէկ է	»
Նախագգացում	158
Երգ բլբուլի	159
Հայ աշուղ	160
Սրմենունի	»
Երագ	161
Լուսնեակ գիշերին	162
Ամպերն էլան	»
Ես սիրել եմ	163
Մէկ սիրտ էրա	164
Լուսն ամպերը	165
Համեստ աղջիկ	»
Իմ վէրքը	166
Սիրային երգ	167
Ընկերիս	168
Սիրային երգ	169
Լորիկ	170
Նոր երգ	171
Այժմեան կեանքը	172
Այժմեան դարը	»
Երգ	173
Երգ	»
Մեր ներկան	174

Աշխարհը	174
Պատիւ վաստակելու ճանապարհը	175
Խրատ ժամանակին հոգոյն համեմատ	176
Պօրս վերջին համբոյրը	177
Մմ սիրունակ	»
Եօթն օր, եօթն գիշեր	179
Ազատի (Ս. Աբովեանից)	180
Ճակատագիր (Ա. նեզրի)	182
Ո՞վ չի սիրիւ	183
Հոյ նագան իմ	184
Ղարսեցոց երգ	185
Մարալօ ջան	186
Արագն եկաւ	188
Գնա եարօ ջան	189
Հով արէք Մարեր	190
Լուսնեակն անուշ	191
Տարօնցի պանդուխտն	192
Սոնա եար, Սոնա եար	193
Շողեր ջան	194
Գիւղական մրմունջներ	197
Գեօթէից	197
Հէյնէից	198
Խանում եւա ջան	200
Եօթն օր եօթ գիշեր	201
Արի սիրուն գնա սիրուն	205
Զով գիշեր է դուրս եկ	206
Թեաքադա դարվիշների եղանակով	208
Թամամ աշխարհումս չկայ անմասն քեզի պէս	209
Ջանա աշխատասէր լինես	213
Պանդուխտի երգը	216
Կուպլետներ	217



404

64 00

	Apr.
13-4772	

ՀՀ Ազգային գրադարան



NL0389508

72.785